

# ՕՐԹՈՊԵԴԻԿ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ

Հատոր I

Ուսումնական ձեռնարկ  
ստոմատոլոգիական ֆակուլտետի ուսանողների համար

Վ.Լ. Բակալյանի խմբագրությամբ

Երևան 2009թ.

## ՕՐԹՈՊԵԴԻԿ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ

Հատոր I

*Ուսումնական ձեռնարկ ստոմատոլոգիական ֆակուլտետի  
ուսանողների համար*

Վ.Լ. Բակալյանի խմբագրությամբ

Երևան  
Երևանի Մ. հերացու անվան պետ. բժշկ. համալս.հրատ.  
2009թ.

Հաստատված է ԵՊԲՀ  
ստոմատոլոգիական առարկաների ցիկլային  
մեթոդական հանձնաժողովի 21.01.09 նիստում,  
արձանագրություն թիվ 15

0-878 Օրթոպեդիկ ստոմատոլոգիա: Հատոր I:

Ուս. ձեռնարկ ստոմատոլ. ֆակուլտետի ուսանողների համար  
/Խնք.՝ բ.գ.թ. Վ.Լ. Բակալյան - Եր.: Երևանի Մ. Յերացու անվան պետ. բժշկ.  
համալս. հրատ., 2009. 136էջ:

**Գրախոսներ՝** դոց. Ր.Յ. Տեր-Պողոսյան  
բ.գ.թ. Ռ.Ռ. Հակոբյան

**Լեզվաբան-խմբագիր՝**  
բան. գ.թ., դոցենտ Ր.Վ. Սուքիասյան

Ուսումնական ձեռնարկը ընդգրկում է օրթոպեդիկ ստոմատոլոգիայի համարյա բոլոր բաժինները՝ նյութագիտություն, մասնակի և լրիվ քայլայված ատամների վերականգնումը ներդիրների, գամիկավոր կոնստրուկցիաների, տարբեր տեսակի արիեստական պասկների օգնությամբ, ատամնաշարերի դեֆեկտների վերականգնումը կամրջաձև պրոթեզների օգնությամբ, մասնակի և լրիվ աղենտիայի բուժումը մասնակի և լրիվ շարժական պրոթեզների օգնությամբ:

«Օրթոպեդիկ ստոմատոլոգիա» ուսումնական ձեռնարկի 1 հատորում ընդգրկված են հետևյալ բաժինները. քունք-ստործնութային հողի անատոմիան և բիոմեխանիկան, նյութագիտության հիմունքներ, ներդիրներ և երեսպատիչներ, գամիկներ, ինչպես նաև ախտաբանական մաշվածություն:

Ներկայացվող նյութն ուղեկցվում է պատկերավոր նկարներով:  
Ձեռնարկը նախատեսված է ստոմատոլոգիական ֆակուլտետի ուսանողների՝ բակալավրների համար: Այն կարող է օգտագործվել նաև մագիստրների, ռեզիդենտների և երիտասարդ բժիշկների կողմից:

ԳՄԴ 56,6 յ 7  
ISBN 978-99941-40-81-7  
© ԵՊԲՀ Մ. Յերացու, 2009



Նվիրվում է  
Մշտիքար Հերացու  
անվան Երևանի  
Պետական Բժշկական  
Համալսարանի  
օրթոպեդիկ ստոմատոլոգիայի  
ամբիոնի 30-ամյակին

## Նախարան

Օրթոպեդիկ ստոմատոլոգիան ընդհանուր ստոմատոլոգիայի բաժիններից մեկն է և կազմում է ընդհանուր օրթոպեդիայի ինքնուրույն մաս՝ իրենից ներկայացնելով հստակ գիտական դիսցիպլինա:

Այս գիտությունը գրաղվում է ծամիչ ապարատի օրգանների անոնականների, ձեռքբերովի արատների, վնասվածքների և դեֆորմացիաների ախտորոշմամբ, կանխարգելմամբ և բուժմամբ: Պրոթեզավորման խնդիրներից են ոչ միայն ատամի, ատամնաշարի, ատամնաբնային ելունի կամ դեմքի արատների վերացումը, այլև օրգանի հետագա քայլայման կամ հիվանդության կրկնվելու կանխումը:

Վերջին շրջանում ուսումնառության կարգն ենթարկվեց փոփոխության՝ համաձայն որի փոփոխվեցին նաև ուսումնական ծրագրերը: Մասնավորապես խոսքը վերաբերվում է ուսման եռաստիճան համակարգին:

Սա առաջին փորձն է ստեղծելու հայերեն լեզվով օրթոպեդիկ ստոմատոլոգիա առարկայից բազմահասորյակ՝ ուսումնական ձեռնարկ, նախատեսված ուսանողների համար: Մինչ հիշյալ ձեռնարկի ստեղծումը ուսանողները օգտվում էին տարբեր օտարալեզու գրականությունից՝ յուրաքանչյուրից փորձելով փնտորել և գտնել իրենց անհրաժեշտ նյութը, քանի որ պահանջվող նյութի ծավալն ամրողությամբ չկար որևէ մեկ ձեռնարկում, ինչն, անշուշտ, բարդացնում էր ուսանողների աշխատանքը: Նախկինում փորձեր են

արվել տպագրել հայերեն լեզվով տարբեր բաժիններ՝ ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկների կամ դասախո-սությունների տեսքով, սակայն ամբողջական դասագիրք, որը ներառեր արդի օրթոպեդիկ ստոմատոլոգիայի գրեթե բոլոր ճյուղերը, չի եղել։ Այդ խնդիրը վերացնելու նպատակով ամբիոնի անձնակազմի կողմից որոշում կայացվեց ստեղծել այս ձեռնարկը։

Ձեռնարկը եռհաստորանի է, նախատեսված է ստոմատոլոգիական ֆակուլտետի բակալավրիատի ծրագրով ուսուցանող ուսանողների համար։ Դրա յուրաքանչյուր հատորն իր բովանդակությամբ համապատասխանում է տվյալ կիսամյակի առարկայական ծրագրին։ Եյութք մատուցված է մատչելի ձևով, ուսանողից պահանջվող ծավալի սահմաններում, հնարավորինս լուսաբանված է նկարներով։ Յուրաքանչյուր բաժնի վերջում բերվում են ուսուցողական թեստեր, որոնք կօգնեն ուսանողներին պատկերացնելու թեստերի վերաբերյալ, ինչպես նաև պատրաստվելու հետագային քննությանը։

Դեղինակային խումբը ուշադրությամբ և խորին երախտագիտությամբ կը նույնի Ձեր մաղթանքներն ու խորհուրդները՝ գրքի հետագա կատարելագործման առումով։

## Բովանդակություն

<b>Գլուխ 1.</b> Քունք - ստործնոտային հողի անատոմիա և բիոմեխանիկա:	
<b>Կ.Ա. Մաշինյան, Ս.Ռ. Յովհաննիսյան, Վ.Լ. Բակալյան</b>	7
1.1. Քունք - ստործնոտային հողի անատոմիա	8
1.2. Ստորին ծնոտի բիոմեխանիկա	12
1.3. Յոդափոխանակիչներ	27
1.4. Թեստեր	40
<b>Գլուխ 2.</b> Ստոմատոլոգիական նյութագիտություն:	
<b>Ր.Ռ. Գասպարյան, Մ.Յ. Երանյան, Ա.Ն. Զուլումյան,</b>	
<b>Լ.Ռ. Սաղաթելյան</b>	42
2.1. Նյութագիտություն	43
2.2. Հիմնական նյութեր	44
2.3. Օժանդակ նյութեր	63
2.4. Թեստեր	86
<b>Գլուխ 3.</b> Ներդիրների և երեսպատիչների օգտագործումը ատամների պսակների արատների ժամանակ: <b>Ա.Լ. Վարդանյան</b>	
3.1. Ներդիրներ	89
3.2. Երեսպատիչներ	96
3.3. Թեստեր	101
<b>Գլուխ 4.</b> Գամիկավոր ներդիրների օգտագործումը ատամների պսակների արատների ժամանակ: <b>Մ.Վ. Յարությունյան, Ա.Լ. Վարդանյան</b>	103
4.1. Գամիկավոր ներդիրների օգտագործումը ատամների պսակների արատների ժամանակ	104
4.2. Թեստեր	
<b>Գլուխ 5.</b> Ատամների ախտաբանական մաշվածություն:	
<b>Ս.Ռ. Յովհաննիսյան, Կ.Ա. Մաշինյան</b>	119
5.1. Ատամների ախտաբանական մաշվածություն	120
5.2. Թեստեր	134



# **ԳԼՈՒԽ 1**

**ՔՈՒՆՔ-ՍՏՈՐԾՆՈՏԱՅԻՆ ՀՈԴԻ  
ԱՆԱՏՈՄԻԱ ԵՎ ԲԻՈՄԵԽԱՆԻԿԱ**


**Կ.Ա. Մաշինյան, Ս.Ռ. Հովհաննիսյան,  
դրց. Վ.Լ. Բակալյան**

## **Նախաբան**

Այս գլխում քննարկվում են քունք-ստործնութային հողի կառուցվածքային առանձնահատկությունները, կլինիկական և ֆունկցիոնալ անատոմիայի դրույթները: Խոսվում է ՔՍԾՀ-ի շարժումների բիոմեխանիկայի մասին: Հատուկ ուշադրություն է դարձվել բնական ատամների առկայության դեպքում հողի սահմանային և ներշրջագծային շարժումներին: Ներկայացված են նաև ՔՍԾՀ-ի շարժումները վերաբտադրող սարքերի տարատեսակները, նրանց գործածման առանձնահատկությունները:

## 1.1. Քունք - ստործնոտային հոդի անատոմիա

ՔՍԾ-Ը (articulatio temporomandibularis), ապահովում է հոդակցումը քունքոսկրի և ստորին ծնոտի միջև: Ըստ իր կառուցվածքի՝ էլիպսոիդաձև է և համարվում է ամենաբարդ հոդերից մեկը: ՔՍԾ-Ը (Ակ.1.1.1.) կազմված է ստորին ծնոտի հոդագլխիկից, քունքոսկրի հոդափոսիկից և հոդաթմբիկից, աճառային սկավառակից, որը հոդը բաժանում է 2 հարկի, հոդաշապիկից, ճեր- և արտահոդային կապաններից, ինչպես նաև, ի տարբերություն այլ հոդերի, մկանային համակարգի տարրերից: Նրա անատոմիական առանձահատկություններից են՝ ինկոնգրուենտությունը (հոդային մակերեսի անհամապատասխանությունը) և հոդային սկավառակի առկայությունը:



Ակ.1.1.1. Քունք - ստործնոտային հոդ

1. Ստորին ծնոտի հոդագլխիկ,
2. Վերին հոդային ճեղք,
3. Հոդային թմբիկ,
4. Հոդային սկավառակ,
5. Հոդաշապիկ

ՔՍԾ-Ը բարդ է նաև ֆունկցիոնալ առումով: Հոդում կատարվում են, ըստ բնույթի, տարբեր շարժումներ (սահք, պտույտ), որոնք իրականացվում են ինչպես հոդիզոնական, այնպես էլ ուղղահայաց առանցքների շուրջ: Զույգ ՔՍԾ-երը

իրենցից ներկայացնում են ամբողջական շարժական համակարգ, որում միայն մեկ հոդում կատարվող շարժում արձանագրելն անհնար է (Եթե միայն չի դիտվում ստորին ծնոտի կոտրվածք, որի դեպքում բեկորներից յուրաքանչյուրը կարող է առանձին շարժվել): Վերը նշվածը չի նշանակում, որ երկու հոդերում կատարվում են համանման շարժումներ:

ՔՍԾ-ի կառուցվածքային և ֆունկցիոնալ բարդ առանձնահատկությունները պետք է դիտարկել մարդու կողմից օգտագործվող սննդի մանրեցման ժամանակ՝ ուսումնասիրելով ստորին ծնոտի շարժումները՝ կախված սննդի կոշտությունից, մանրեցման աստիճանից և այլ գործոններից:

ՔՍԾ-ի էվոլյուցիային համընթաց կատարելագործվել են ատամների ձևը և ծամիչ մկանները:

Ժամանակակից մարդը ֆիլոգենեզի ընթացքում ժառանգում է ՔՍԾ-ի բարդ կառուցվածքը: Սակայն ծամողական ֆունկցիան, որը պայմանավորված է ընդունվող սննդի բնույթով, պահպանված ատամների դիրքով, դասավորությամբ և քանակով, փոխվում է՝ իր դրոշմը դնելով ձևավորվող հոդի նուրբ կառուցվածքի վրա:

Այս ընթացքում հոդը ենթարկվում է փոփոխությունների՝ հարմարվելով նոր ֆունկցիոնալ ծանրաբեռնվածություններին: Լրիվ անատամության ժամանակ, արդեն ծնոտի շարժումների անպլիտուդայի փոփոխումով պայմանավորված, ՔՍԾ-ը վերակառուցվում է՝ հարմարվելով նոր պայմաններին:

ՔՍԾ-ի գործունեության կարգավորման մեջ մեծ դեր ունեն մկանները: Կողմնային թևակերպային մկաններն օժտված են յուրահատուկ ֆունկցիայով: Նրանց՝ հոդային սկավառակի և ստորին ծնոտի հոդագլխիկի ներդաշնակ աշխատանքը ՔՍԾ-ի նորմալ գործունեության գրավականն է: Արտաքին թևակերպային մկանների հետ կապաններով միակցված հոդային սկավառակը

համակարգում (կոորդինացնում) և կարգավորում է ստորին ծնութի շարժումները: Կապաններն այս դեպքում կատարում են օժանդակ դեր:

ՔՍԾ-ի հետազոտման համար անհրաժեշտ է առաջնորդվել կլինիկական և ֆունկցիոնալ անատոմիայի հետևյալ դրույթ-ներով.

1. Ֆիզիոլոգիական հանգստի ժամանակ, երբ ծամիչ և ստորին ծնութը իջեցնող մկանները գտնվում են մինիմալ տոնուսի վիճակում, հոդագլխիկը հպվում է միայն հոդային սկավառակի հետ. ուսկրային տարրերի միջև հպումը բացակայում է:

2. Ի տարրերություն ֆիզիոլոգիական հանգստի վիճակի՝ կենտրոնական օկլուզիայի դիրքում, երբ ծնութը բարձրացնող մկանները գտնվում են տոնուսի վիճակում և ատամնաշարերում առկա է մաքսիմալ թվով ատամնահպում, ապա հոդում հոդագլխիկը հպվում է հոդային սկավառակին և գտնվում է հոդի հետին պատից և հոդաթմբիկից որոշ հեռավորության վրա:

3. Միջնատային կենտրոնական հարաբերությունը ստորին ծնութի ամենահետին դիրքն է, երբ հոդագլխիկը գտնվում է հոդափոսի հետին պատի մոտ՝ լանջից ամենամեծ հեռավորության վրա: Առավել հաճախ հոդագլխիկի այս դիրքի արձանագրմանն ենք դիմում լրիվ անատամության օրթոպեդիկ բուժման ժամանակ:

4. Բերանի մաքսիմալ բացման ժամանակ հոդագլխիկը սկավառակի հետ սահում է հոդաթմբիկի լանջով ներքև՝ մինչև գագաթ: Յոդագլխիկի առավել առաջային դիրքը հոդաթմբիկի գագաթից՝ դիտվում է որպես հոդախախտ:

5. Յոդագլխիկի յուրաքանչյուր տեղաշարժ, կողմնային թևակերպային մկանների նորմայում ներդաշնակ կծկման շնորհիվ, ուղեկցվում է կապաններով նրան ամրացած հոդային սկավառակի տեղաշարժով: Կողմնային թևակերպային մկանը բաժան-

վում է 2 խրծի: Վերին գլխիկն ամրացած է հոդաշապիկին և հոդային աճառային սկավառակին, իսկ ստորինը՝ ստորին ծնոտի վզիկին: Այդ մկանի կծկման ժամանակ ստորին ծնոտը և հոդային սկավառակը տեղաշարժվում են համընթաց (սինխրոն):

6. Ծնոտների կենտրոնական օկյուլարիայի դիրքի ժամանակ հոդափոսիկում հոդագլխիկի ֆիքսված տարածական դիրքը պայմանավորվում և պահպում է ծամիչ մկանների խմբով, որը հնարավորություն է տալիս մեղմացնել հոդային սկավառակի և փափուկ հյուսվածքների վրա ընկնող ճնշումը:

Ատամնաշարերի զարգացման անոնմալիաների ժամանակ, ծամիչ ատամների կորստի դեպքում, ատամների պաթոլոգիական նաշվածության, պարունակության փոփոխությունների ժամանակ փոփոխվում է ստորին ծնոտի դիրքը, որն իր հերթին պայմանավորում է հոդագլխիկի դիրքի փոփոխությունը և, հետևաբար, հոդի տարրերի տեղագրանատոմիական տեղաշարժերը:

7. Նորմայում հոդի խոշոր շարժումների ժամանակ հոդագլխիկը և հոդային սկավառակը ներդաշնակ են շարժվում: Ներդաշնակությունը խախտվում է արդեն ծնոտի կենտրոնական ատամնահպման (օկյուլարիայի դիրքի փոփոխության), ծամիչ մկանային (առանձնապես *m. pterygoideus lateralis*) և կենտրոնական նյարդային համակարգերի ախտահարման ժամանակ. մասնավորապես այն դեպքերում, որոնք ուղեկցվում են ծամիչ մկանների գերլարվածությամբ, ինչպես նաև՝ բուն հոդի հիվանդություններով (արթրոզ, արթրիտ և այլն):

Հետևաբար, ՔՍԾ հիվանդության առաջացման պատճառները կարող են տարբեր լինել: Ախտածին գործոնների մի մասը կարող է գործել հոդից դուրս և պաթոլոգիական փոփոխությունները հոդում կդիտվեն որպես երկրորդային: Դրանով պայմանավորված՝ ՔՍԾ-ի հետազոտությունը պետք է լինի համակարգված՝ ընդգրկելով ամբողջ դիմածնոտային համակարգը:

## 1.2. Ստորին ծնոտի բիոմեխանիկա

Բիոմեխանիկան - ֆիզիկայի բաժին է, որն ուսումնասիրում է մասնավորապես կենսունակ հյուսվածքներում, օրգաններում և օրգանիզմում շարժման ժամանակ տեղի ունեցող մեխանիկական երևույթները:

Ստորին ծնոտի շարժումները ծամիչ մկանների այս կամ այն խմբի կծկման արդյունք են: Այդ շարժումների ուղղությունը և անպլիտուդը որոշվում են մկանների տոպոգրաֆիայով, դրանց կպման տեղով, ինչպես նաև՝ ՔՍԾՀ-ի և նրա առանձին էլեմենտների անատոմ-տոպոգրաֆիկ առանձնահատկություններով:


Շարժումների բնույթի վրա ազդեցություն են թողնում նաև ատամնային աղեղի ձևը և դրանց հարաբերակցությունը (կծվածք): Մարդու մոտ տեղի են ունենում այնպիսի շարժումներ, որոնք պայմանավորում են ծնոտների բացում-փակումը (Վերտիկալ), ստորին ծնոտի տեղաշարժը առաջ-հետ (սագիտալ) և կողմնայնորեն (տրանսվերզալ):

Եվոլյուցիայի և արտաքին միջավայրի պայմաններին հարմարվելու ֆունկցիոնալ պրոցեսում, գլխավորապես սննդի տեսակին հարմարվելու ընթացքում, ստորին ծնոտի շարժումները փոփոխվել և կատարելագործվել են: Արդյունքում ՔՍԾՀ-ի կառուցվածքում և նրա ֆունկցիոնալ մեխանիզմում տեղի են ունեցել համապատասխան փոփոխություններ:

Ստորին ծնոտը նաև կացում է բազմաթիվ ֆունկցիաների՝ ծամելու, ձայնի առաջացման, խոսքի, կլման և այլն: Այդ բոլոր ֆունկցիաներից պետք է առանձնացնել այն շարժումները, որոնք կապված են ծամելու հետ:

Տարբերում են ստորին ծնոտի ազատ շարժումների 6 աստիճան: Ամենաբարձր աստիճանը նկատվում է ատամների շրջանում, իսկ ամենացածրը՝ գլխիկի շրջանում: Ստորին ծնոտի

շարժումները նկարագրվում, դրանց ուղղությունն ու մեջությունը, որոշվում են 3 ուղղահայաց հարթություններում: Տարբերում են՝ միջին սագիտալ, ֆրոնտալ և տրանսվերզալ (հորիզոնտալ) հարթություններ (Ակ.1.2.1.)



Ակ.1.2.1. Երեք ուղղահայաց հարթություններ

**Միջին սագիտալ հարթությունը** ուղղահայաց (վերտիկալ) հարթություն է, որն անցնում է գլխի մեջտեղով՝ առաջ-հետ ուղղությամբ: Վերտիկալ հարթությունները, որոնք անցնում են ոչ թե գլխի մեջտեղով, այլ, օրինակ, քունք - ստործնոտային հոդի շրջանով, անվանում են՝ պարասագիտալ:

**Ֆրոնտալ հարթությունը** վերտիկալ հարթություն է, որն անցնում է սագիտալին ուղղահայաց:

**Տրանսվերզալ հարթությունը** հորիզոնական հարթություն է, որն անցնում է առջևից-հետ սագիտալ և ֆրոնտալ հարթություններին ուղղահայաց:

#### **Ստորին ծնոտի շարժումների տեսակները.**

**Կենտրոնական փոխհարաբերությունը (ԿՓ)** ստորին ծնոտի այնպիսի դիրքն է, որի ժամանակ գլխիկները գտնվում են բարձր՝

հոդափոսիկում՝ տեղակայվելով սկավառակի բարակ ավասկուլյար մասի մոտ և հոդաթմբիկի նկատմամբ՝ հետին-վերին դիրքում: Այդ դիրքը կախված չէ ատամների օկյուզիոն կոնտակտներից:

**Պտույտը** օբյեկտի սովորական շարժումն է սեփական առանցքի շուրջ: Ստորին ծնոտը կարող է կատարել պտույտ գլխիկների առանցքի շուրջ: Գլխիկների պտույտը սեփական առանցքի շուրջ՝ կենտրոնական փոխհարաբերության դիրքում, կոչվում է հետին տերմինալ պտուտային շարժում: Այդ շարժումը ստուգման նպատակով օգտագործվում է ստոմատոլոգների կողմից վերականգնման, ձևավորման և պրոթեզների պատրաստման ժամանակ: Մեծամասնությամբ, միջնուտային կենտրոնական փոխհարաբերության դիրքից կենտրոնական (սովորական) օկյուզիային անցնելու ժամանակ սովորաբար ստորին ծնոտը սահում է առաջ: Որոշ դեպքերում, ատամնահպումները միջնուտային կենտրոնական փոխհարաբերության և կենտրոնական օկյուզիայի ժամանակ կարող են համընկնել: Տերմինալ պտուտային շարժման դեպքում բերանի մաքսիմալ բացումը 25 մմ է (վերին և ստորին կտրիչների կտրող եզրերի միջև):

**Տեղաշարժը** օբյեկտի մարմնի տեղափոխումն է մի տեղից մյուսը: Ստորին ծնոտի տեղաշարժը հնարավոր է գլխիկի և սկավառակի՝ հոդային թմբիկով առաջ և հետ տեղաշարժի շնորհիվ: Երկու հոդագլխիկների միաժամանակյա շարժման դեպքում դիտվում է ստորին ծնոտի առաջ տեղաշարժ՝ պրոտրուզիա:

Ստորին ծնոտն առաջ տեղաշարժելիս, ֆրոնտալ ատամների անցած հետագիծը ատամնահպումից կախված, ոչ միշտ է ուղիղ: Շարժման հետագիծի վրա կարող են ազդել նաև կողմնային ատամնահպումները:

Ստորին ծնոտի պրոտրուզիոն շարժումները սահմանափակվում են հոդի կապանային ապարատով և ծամիչ մկանների կպմանք (10մմ սահմանում):

Մարդու ստորին ծնոտը կարող է կատարել շարժումներ տարբեր ուղղություններով՝


- վերտիկալ (վերև-ներքև)
- սագիտալ (առաջ-հետ)
- տրանսվերզալ (աջ-ձախ)
- թեք (աջ-առաջ, ձախ-առաջ)

Ստորին ծնոտի շարժումներն ուղեկցվում են հոդագլխիկների ներդաշնակ սահքով և պտույտով: Տարբերությունն այն է, որ մի դեպքում հոդերում գերակշռում են պտուտային շարժումները, իսկ մյուսում՝ սահքի:

### **Ստորին ծնոտի վերտիկալ շարժումներ**

Ստորին ծնոտը (նկ.1.2.2.) վերտիկալ հարթության մեջ շարժվում է թերանի բացման և փակման ժամանակ՝ պայմանավորված ստորին ծնոտը իջեցնող (թ. *mylohyoideus*, թ. *geniohyoideus*, *venter anterior* թ. *digastricus*) և բարձրացնող (թ. *masseter*, թ. *temporalis*, թ. *pterygoideus medialis*) մկանների կարգավորված կծկմանք:

Թերանի բացման ժամանակ հոդագլխիկները, դրանք միացնող առանցքի շուրջ պտույտի հետ միաժամանակ, կատարում են սահք՝ հոդաթմբիկի լանջով ներքև և առաջ: Առաջ տեղաշարժի ժամանակ սահքի շարժումն ապահովվում է հոդի վերին մասում սկավառակի սահքով հոդաթմբիկի նկատմամբ: Յոդի ստորին բաժնում գլխիկները պտտվում են սկավառակի ստորին մակերեսի փոսության մեջ, որը նրանց համար շարժուն հոդային փոսիկ է: Թերանի մաքսիմալ բացման ժամանակ գլխիկները տեղադրվում են հոդային թմբիկի առաջային եզրի մոտ:




Նկ.1.2.2. Ստորին ծնոտի վերտիկալ շարժումներ:

Ստորին ծնոտն իջեցնելիս առաջային ատամները շարժվում են կորերով, և բերանը բացելիս հետզհետեւ հեռանում են հողից: Դա բացատրվում է նրանով, որ բերանը բացելիս տեղի է ունենում ստորին ծնոտի առաջ բերում: Այն կարևոր է, հաջորդող սնունդը կծելու շարժման դեպքում, ֆրոնտալ ատամները եզրեզր տեղադրելու համար:

#### Ստորին ծնոտի սագիտալ շարժումներ

Ստորին ծնոտի առաջ տեղաշարժը իրականացվում է ո. pterygoideus lateralis-ի երկկողմանի կրծատմամբ (Նկ.1.2.3.):



Նկ.1.2.3. Ստորին ծնոտի սագիտալ շարժումներ:

Յոդում ստորին ծնոտի գլխիկի շարժումը պայմանականորեն կարելի է բաժանել 2 փուլի՝


- 1-ին փուլում սկավառակը գլխիկի հետ համընթաց սահում է հոդային թմբիկի մակերեսով:

- 2-րդում՝ գլխիկի սահքին միանում է պտուտային շարժումը սեփական լայնական առանցքի շուրջ

Ստորին ծնոտի հոդագլխիկի անցած ուղին, նրա առաջ շարժման ժամանակ, կոչվում է սագիտալ հոդային ուղի։ Միջինում այն հավասար է  $7\text{-}10$  մմ։

Եթե բաժանել առանձին մասերի ուղին, որն անցնում է ստորին ծնոտի գլխիկը հարաբերած հոդային թմբիկի լանջին (հոդային ուղի), ապա ամեն մասին կիամապատասխանի իր կորը։ Այդպիսով ստորին ծնոտի գլխիկի որևէ կետով կամ կզակային արտացցվածքով անցած ուղին կտրտված գիծ է, որը բաղկացած է բազմաթիվ կորերից։ Սագիտալ հոդային ուղու տրանսլորիան և օկյուզիոն հարթությունը հատելիս, առաջանում է անկյուն, որը կոչվում է սագիտալ հոդային ուղու անկյուն։

Ստորին ծնոտի առաջ բերման աստիճանից կախված՝ հոդային ուղու սագիտալ անկյունը փոխվում է։ Ըստ Գիգիի տվյալների, այն միջինում հավասար է  $33^{\circ}$  (Ակ. 1.2.4.):




Նկ. 1.2.4. Սագիտալ հոդային ուղու անկյուն։

Օրթոգնատիկ կծվածքի դեպքում ստորին ծնոտի առաջ տեղաշարժը ուղեկցվում է ստորին կտրիչների սահքով՝ վերին կտրիչների քմային մակերեսով:

Ստորին ծնոտի առաջ տեղաշարժի դեպքում ստորին կտրիչների անցած ուղին կոչվում է սագիտալ կտրիչային ուղի:

Սագիտալ կտրիչային ուղու և օկյուզիոն հարթության հատմամբ առաջացած անկյունը կոչվում է սագիտալ կտրիչային ուղու անկյուն, որը միջինում հավասար է  $40^{\circ}$ - $50^{\circ}$  (նկ.1.2.5.):




Նկ.1.2.5. Սագիտալ կտրիչային ուղու անկյուն:

Ստորին ծնոտի առաջ գալու դեպքում առաջային օկյուզիայի դիրքում, միայն երեք կետում են հնարավոր ատամնահպումներ: Նրանցից մեկն առաջային ատամների վրա է, իսկ մյուս երկուսը՝ երկրորդ կամ երրորդ աղորիքների դիստալ թմբիկների վրա: Այդ երևույթն առաջին անգամ նկարագրել է Բոնվիլը, այժմ այն կոչվում է «Բոնվիլի եռակետային կոնտակտ»:

#### Ստորին ծնոտի տրամսվերզալ շարժումներ

Ստորին ծնոտի աջ կամ ձախ շարժումներն առաջանում են ո. pterygoideus lateralis-ի միակողմանի կծկման դեպքում: Այդպես, ծնոտի աջ շարժման դեպքում կրճատվում է ձախ արտաքին թևակերպային մկանը, իսկ ձախ շարժման դեպքում՝ աջը:

Կծկված մկանի կողմում ստորին ծնոտի գլխիկը սկավառակի հետ տեղաշարժվում է ներքև, առաջ և մի փոքր ներս: Այդ դեպքում հակառակ կողմի հոդագլխիկը պտտվում է առանցքի շուրջ, որն ուղղահայաց անցնում է տվյալ հոդագլխիկով: Ստորին ծնոտի գլխիկը կծկված մկանի կողմում, տեղաշարժվելով ներս, սագիտալ կտրիչային ուղղու նախնական ուղղության հետ առաջացնում է անկյուն (Բեննեթի անկյուն): Տրանսվերզալ հոդային ուղու անկյունը (Բեննեթի անկյունը) առաջանում է սագիտալ հոդային ուղու ուղղությամբ և ստորին ծնոտի գլխիկի տեղաշարժմամբ ներս՝ ստորին ծնոտի կողմնային շարժման դեպքում: Այն միջինում հավասար է  $15^{\circ}$ - $17^{\circ}$  (Ակ.1.2.6.Ա.):



Ակ.1.2.6.Ա. - Տրանսվերզալ հոդային ուղու անկյուն,  
Բ - Տրանսվերզալ կտրիչային ուղու անկյուն

Տրանսվերզալ շարժումները բնութագրվում են ատամների օկյուզիոն կոնտակտների համապատասխան փոփոխություններով: Ստորին ծնոտի կողմնային շարժումների ժամանակ ատամների տեղաշարժի հետագծերը կորեր են, որոնք հատվում են բութ անկյամբ: Ինչքան ատամը ստորին ծնոտի հոդագլխիկից հեռու է, այնքան անկյունն ավելի մեծ է: Կենտրոնական կտրիչների աջ և ձախ տեղաշարժերի կորերի հատումից ստացված

անկյունը կոչվում է տրանսվերզալ կտրիչային ուղու անկյուն կամ գոտիկական անկյուն և հավասար է  $100^{\circ}$ - $110^{\circ}$  (Ակ.1.2.6.Բ.):

Կարևորվում են ծամիչ ատամների հարաբերությունների փոփոխությունները ծնոտի կողմնային էքսկուրսիաների դեպքում:

Ծնոտի կողմնային շարժումների ժամանակ տարբերում են երկու կողմ՝ աշխատող և հավասարակշռող: Աշխատող կողմում ատամները դասավորվում են դեմ-դիմաց՝ համանուն թմբիկներով, իսկ հավասարակշռող կողմում՝ տարանուն: Այսինքն, ստորին ատամների թշային թմբիկները վերին ատամների թմային թմբիկների դիմաց են:

Մինչ այժմ ստորին ծնոտի շարժումների հետազոտման ժամանակ, վերջիններս արհեստականորեն բաժանվում էին կազմավորող պարզ էլեմենտների (իջեցում, առաջ բերում, կողմնային շարժում): Սակայն, իրականում ստորին ծնոտի էքսկուրսիաները շատ բարդ են, քանզի իրենցից ներկայացնում են տարբեր շարժումների կոմբինացիա: Օրոք պետիկ ստոմատոլոգիայի համար հույժ կարևոր են ծամիչ շարժումները: Դրանց իմացությունը կարող է հեշտացնել պրոթեզների և արհեստական ատամների պատրաստումը: Անկասկած է այն պնդումը, որ աշխատող կողմում համանուն թմբիկները հպվում են: Կողմնային ատամների այլ փոխհարաբերությունը չէր ապահովի սննդի տրորումը:

Հավասարակշռող կողմում տարանուն թմբիկների միջև հնարավոր է ինչպես կոնտակտի առկայություն, այնպես էլ դրա բացակայություն: Դա պայմանավորված է տրանսվերզալ օկլուզիոն կորերի արտահայտվածությամբ, ատամնաշարերի լայնության հարաբերակցությամբ, ստորին ծնոտի լայնական տեղաշարժման ամպլիտուդայով:

## **Ստորին ծնոտի շարժումները բնական ատամների առկայության դեպքում**

Ստորին ծնոտը շարժվում է բազմաթիվ ուղղություններով, որոնք պայմանավորված են քունք-ստործնոտային հողի հիմնական 2 շարժումով.

1. Յոդագլխիկի պտուտական շարժում, որը կատարվում է հոդապարկի ստորին մասում

2. Յոդագլխիկի սահքի շարժում, որը կատարվում է հոդապարկի վերին մասում

Տարբերում ենք ստորին ծնոտի հիմնական 4 շարժում՝

1. Վերտիկալ ուղղությամբ (բացում, փակում)


2. Առաջային՝ սագիտալ (առաջային սահքի շարժում). սկսվում է կենտրոնական օկյուլարիայից և վերջանում է ստորին ծնոտի ամենաառաջային դիրքում

3. Հետին սագիտալ (հետին սահքի շարժում). սկսվում է կենտրոնական օկյուլարիայից և վերջանում է ծնոտների հետին հարաբերության դիրքում

4. Աջակողմյան և ձախակողմյան տրանսվերզալ շարժումներ


Ստորին ծնոտը շարժվում է 3 հարթություններում, և իր շրջագծային շարժումն առաջացնում է հատուկ ձևի նակերես (ծրարի ձևով): Այս շրջագիծը նույն է ֆիզիոլոգիական կծվածք ունեցող բոլոր մարդկանց մոտ, սակայն տարբերվում է չափերով: Նկար 1.2.7.-ում ցույց են տրված ստորին ծնոտի շարժումները ծրարի տեսքով:

Բերանի բացմանը զուգընթաց փոքրանում է ծրարի հորիզոնական հատույթի մակերեսը: Բերանը մաքսիմալ բացելիս, այն հավասարվում է կետի:



Նկ.1.2.7. Ստորին ծնոտի շարժումները ժրադի տեսքով:


Ստորին ծնոտի շարժումների ուսումնասիրությունը հեշտացնելու համար, այդ շարժումներն արձանագրվում են սագիտալ հարթության վրա. ցուցիչի մեկ ծայրը տեղադրվում է ստորին կենտրոնական կտրիչների վրա, իսկ մյուս ծայրը պետք է հպվի սագիտալ հարթությանը գուգահեռ տեղադրված սպիտակ թղթի մակերեսին: Երբ հիվանդը կատարի բոլոր մաքսիմալ շրջագծային շարժումները (առաջային սահքի շարժումը, կամ մաքսիմալ բերանի բացումը հետին դիրքում և բերանի մաքսիմալ բացումը առաջային դիրքում), կստանանք հետևյալ գրաֆիկական պատկերը (Նկ.1.2.8.):



Նկ.1.2.8. Մաքսիմալ շրջագծային շարժումներ:

1. Բացման և փակման շարժումները հիմնականում 3 տիպի են՝  
(նկ.1.2.9.)

- փակում և բացում հետին դիրքում (III, II, 1)
- փակում և բացում առաջային դիրքում (III, 5)
- ֆիզիոլոգիական փակում և բացում (III, 2)



Նկ.1.2.9. Շրջագծային և  
ներշրջագծային շարժումները  
սագիտալ հարթության մեջ:

Առաջային և հետին շարժումները սագիտալ հարթության մեջ շրջագծային շարժումներ են, իսկ ֆիզիոլոգիական բացում և փակումը՝ ներշրջագծային է (նկ.1.2.9.):

- Սագիտալ հարթության մեջ հետին շրջագծային բացում և փակում

#### *The posterior border movement*

Այս շարժումը սկսվում է հոդագլխիկի պտույտով իր առանցքի շուրջ, որին հաջորդում են պտտման և սահքի շարժումները: Քանի որ շարժման սկզբնական պահին հոդագլխիկը գտնվում է հոդափոսի ամենահետին դիրքում, և շարժման սկզբը լինում է հոդագլխիկի պտույտն իր առանցքի շուրջ, ուստի շարժումը կկոչվի առանցքային շարժում (terminal hinge movement): Տեսականորեն այս շարժումը զուտ առանցքային շարժում է (mandible hinge axis), որտեղ հոդագլխիկը պտտվում է

հոդագլխիկների միացնող առանցքի շուրջ՝ շրջանցելով հոդագլխիկների՝ շատ դեպքերում սիմետրիկ չլինելու հանգամանքը: Կտրիչների մոտ ստորին առանցքային շարժումը տատանվում է 2-2.5սմ: Ծնոտի առանցքային շարժումը կատարվում է քունքամկանների (թ. temporalis) հետին և միջին խրձերի կծկման ժամանակ, ստորին ծնոտը իջեցնող մկանների տոնուսի դեպքում: Կողմնային թևակերպային (թ. pterygoideus lateralis) մկանների թելիկները հանգիստ վիճակում են: Իսկ եթե ստորին ծնոտը շարունակի բացվել, այդ դեպքում հոդագլխիկը ոչ միայն կպտտվի իր առանցքի շուրջ, այլ կսահի դեպի առաջ և վար: Այդ դեպքում կտրիչների շրջանում շրջագիծը կփոխի ուղղությունը (I - II) և կշարունակվի II-III կորագծով:

Նորմալ մարդկանց կտրիչների շրջանում բերանի բացվածքի չափը տատանվում է 5-6 սմ:

- Սագիտալ հարթության մեջ առաջային շրջագծային բացում և փակում

#### *The anterior border movement*

Այս շարժումը սկսվում է, երբ ստորին ծնոտն ամենաառաջային դիրքում է: Բերանի բացման շարժումը հազվադեպ է սկսվում ծնոտի այն դիրքից, որի ժամանակ հոդագլխիկը գտնվում է ամենաառաջային դիրքում: Այս հետագիծը գործնականում նշանակություն չունի:

- Ֆիզիոլոգիական բացում և փակում (2 - III)

#### *The habitual automatic opening movement*

Այս շարժումը սկսվում է կենտրոնական օկյուզիայից և անցնում է սագիտալ հարթությամբ անցնող առաջային և հետին շարժումների միջով: Այդ է պատճառը, որ այս շարժումը ներշրջագծային է և ունի տարբեր ուղիներ. տարբեր ուղղություններով շարժումները նույն պահին իրար չեն

համընկնում: Յոդագլխիկը նման դեպքում կատարում է և պտտման, և սահքի շարժում:

## 2. Առաջային սահքի շարժում (2-5)

### *The protrusive gliding movement*

Այս շարժումը սկսվում է կենտրոնական օկյուզիայի դիրքից դեպի առաջ և հակառակը, երբ վերին և ստորին ծնոտների ատամները իրար հպվում են շարժման ընթացքում (նկ.1.2.9.):

Յետագծի վրա (2-ը) ցույց է տրված կենտրոնական օկյուզիան (centric occlusion)

(3-ը) կտրիչ-կտրիչային հայման դիրքն է (edge to edge)

(4-ը) ստորին կտրիչների առաջային դիրքը վերին կտրիչների նկատմամբ

(5-ը) ստորին ծնոտի ամենաառաջային դիրքը

## 3. Ծնոտի հետին սահքի շարժում (2-1)

### *The retrusive gliding movement*

Սկսվում է կենտրոնական օկյուզիայից մինչև ծնոտների հետին հարաբերության դիրքը: Տեղաշարժը շատ չնշին է, առավելագույնը՝ 1 մմ: Այս շարժումն ազդում է կծվածքի վրա և կարող է առաջացնել տրավմատիկ կծվածք:

## 4. Կողմնային սահքի շարժումներ


### *The lateral movement*

Գորիկ առեղ (gothic arch) կամ նիզակի հետք (arrow point tracing) հասկացողությունը, ստորին ծնոտի կողմնային շրջագծային շարժումների արձանագրությունն է հորիզոնական հարթության վրա: Այս շարժումը կարելի է ստանալ հատուկ սարքի միջոցով, որը գրանցում է ստորին ծնոտի կողմնային շարժումները՝ թմբիկների գործունեությունը չեղոքացված վիճակում՝

(I) - ծնոտի հետին դիրք

(II) - ծնոտի ծայրային ձախակողմյան դիրք

Նախկինում գտնում էին, որ ստորին ծնոտի աջ և ձախ կողմնային շարժումների պտտման առանցքները գտնվում են համապատասխան գործող հոդագլխիկում (նկ.1.2.10.), բայց իրականում ապացուցվեց, որ այն գտնվում է հոդագլխիկի հետևում՝ ուղղաձիգ ուղղությամբ:




Նկ.1.2.10. Ստորին ծնոտի կողմնային շարժումների ժամանակ հոդագլխիկների դիրքը:

Յետևաբար պարզ դարձավ, որ աշխատող կողմի հոդագլխիկը շարժվում է դեպի դուրս և մի քիչ առաջ. այս շարժումը կոչվում է Բեննեթի շարժում (Bennet movement, 1908): Յավասարակշռող կողմի հոդագլխիկը շարժվում է առաջ, ներքև և միջայնորեն: Այս շարժումը սագիտալ հարթության համեմատ կազմում է անկյուն, որը կոչվում է Բեննեթի անկյուն (Bennet angle): Բեննեթի շարժումը շատ քիչ է, միջին հաշվով՝ 1.5 մմ:

### 1.3. Հողափոխանակիչներ

Հողափոխանակիչները մեխանիկական սարքեր են: Այդտեղ տեղադրվում են ծնոտների մողելները՝ ծամողական ֆունկցիայի ժամանակ ստորին ծնոտի շարժումների նմանակնան և ատամների դինամիկ օկյուգիոն հպումների վերաբերության համար: Այս սարքերը (նկ.1.3.1.) շատ կարևոր նշանակություն ունեն օրթոպեդիկ պրակտիկայում և օգտագործվում են՝


- օկյուգիոն փոխհարաբերությունների ուսումնասիրման,
- վերականգնողական գործողությունները պլանավորելու, նաև վերականգնված ատամի դիրքը, եզրերը, գեղագիտական տեսքը,
- օկյուգիոն փոխհպումը շտկելու,
- ատամների անուղղակի վերականգնման համար:



Նկ.1.3.1. Հողափոխանակիչ Hanau Wide-Vue 183:

Յոդափոխանակիչները օգտակար են նաև հոդագլխիկի շարժումների, օկյուլարի փոխհարաբերությունների և վերջիններիս համագործակցումը ուսումնասիրելու համար:

Սարքերը, որոնցում կատարվում են ստորին ծնոտի միայն վերտիկալ շարժումներ (բերանի բացում և փակում), կոչվում են օկյուլատորներ (նկ.1.3.2.): Դրանք կազմված են երկու լարային կամ ձուլված մասերից, որոնք միմյանց միացած են պտտական առանցքով: Ստորին մասը թերված է  $100-110^{\circ}$  անկյան տակ և ստեղծում է ստորին ծնոտի անկյուն և ճյուղ:



Նկ.1.3.2. Օկյուլատորներ:

Ստորին ծնոտի հետին մասն ունի հարթակ՝ միջավեռային բարձրությունը պահող ձողի հենքի համար: Վերին մասը տեղադրված է հորիզոնական հարթության մեջ և ունի ուղղահայաց ձող, որը հենվում է ստորին մասի հարթակին:

Օկյուլատորը լիարժեք չի վերարտադրում ստորին ծնոտի առաջային և կողմնային շարժումները: Արդյունքում, օկյուլատորի կիրառումը արհեստական ատամնաշարերի պատրաստման ժամանակ լուրջ անծշտությունների պատճառ է դառնում: Կենտրոնական և ապակենտրոն փոխհարաբերությունների ժամանակ անխուսափելի են վաղաժամ ատամնահպումները. անհնար է ստեղծել երկկողմանի սիմետրիկ ատամնահպումներ առաջային և կողմնային օկյուլարիներում: Կենտրոնական օկյուլարիներում ատամնաշարերի հպման ժամանակ հայտնաբերվում է,

որ կողմնային (արհեստական) ատամների օկվուզիոն մակերեսի առանձին բաժինները ավելի շուտ են հպվում, քան մյուսները: Դա տեղի է ունենալու այն պատճառով, որ օկվուզատորում և հիվանդի մոտ ծնոտների շարժման ուղիները կենտրոնական օկվուզիայի դիրքի գալու համար իրարից տարբերվում են պտուտային առանցքի տարբեր դիրքի և ստորին ծնոտի պտուտային շարժման տարբեր շառավիղի պատճառով (նկ. 1.3.3., բացատրությունը տես ստորև):

Նկ.1.3.3. Ստորին ծնոտի տարբեր շարժումների և պտուտական առանցքի դիրքի ազդեցությունը ատամների հպման վրա (ա,բ)

Ա<sub>1</sub>- Կողմնային ատամների ֆիսուրաբիկային հպում պտուտական առանցքի (Օ) և հիվանդի ու հոդափոխանակիչի աղեղի պտուտական շարժման համընկման դեպքում (Ա),  
 Բ<sub>1</sub>- կողմնային ատամների կետային հպում պտուտական առանցքի (Օ<sub>1</sub>) և աղեղի կամայական դիրքի ժամանակ (Բ),  
 Գ-սագիտալ հարթությամբ ստորին ծնոտի շարժման սխեման՝

1-ծնոտների կենտրոնական փոխհարաբերություն, հետին հպման դիրք

2-կենտրոնական օկվուզիա


3-առաջային օկվուզիա կտրիչակտրիչային հպման դեպքում,

3-4-ծայրահեղ առաջային շարժում,

5-բերանի մաքսիմալ բացման դիրք,

1-6 ստորին ծնոտի աղեղի պտուտական շարժումը բերանի 2սմ բացման ժամանակ,

7-ստորին ծնոտի ֆիզիոլոգիական հանգստի դիրք



Օկյուլատորների օգտագործումը բարդ աշխատանքների իրագործման ժամանակ հակացուցված է:

Սկանահոդային դիսֆունկցիայի ցավային սինդրոմի ժամանակ անհնար է բերանի խոռոչում զննել ֆունկցիոնալ օկյուլայան, քանի որ ստորին ծնոտի շարժումները սահմանափակված են: Անհրաժեշտ է նաև բացահայտել ատամների սուպերկոնտակտները՝ որպես ցավային սիմպտոմի հնարավոր պատճառ: Նման դեպքերում անփոխարինելի է օկյուլայայի զննումը ծնոտների մոդելների վրա, որոնք տեղադրված են հոդափոխանակիչի վրա:

Հոդափոխանակիչի օգտագործման ցուցումներից են՝

1. օկյուլային ճշգրտման մեթոդի ընտրությունը,
2. ծնոտների մոդելների վրա ատամների ախտորոշիչ մշակումը օրթոդոնտիկ բուժման պլանավորման ժամանակ,
3. կծվածքում օկյուլայի գնահատում:

Յատուկ նշանակություն ունի ֆունկցիոնալ խանգարումների ախտորոշումը և բուժումը, երբ ստորին ծնոտը տեղաշարժվում է “երկրորդային հարկադրված օկյուլայի” դիրք. մոդելների տեղադրումը հոդափոխանակիչի մեջ կենտրոնական փոխհարաբերությամբ թույլ է տալիս ճիշտ որոշել ստորին ծնոտի դիրքը, որում անհրաժեշտ է ստեղծել կենտրոնական օկյուլայ:

### Հոդափոխանակիչների հիմնական տեսակները

Գոյություն ունեն բազմաթիվ դասակարգումներ: Ամենատարածվածը հետևյալ դասակարգումն է՝

1. ոչ հարմարողական (non adjustable)
2. կիսահարմարողական (semi-adjustable)
3. լրիվ հարմարողական (fully-adjustable)

Ոչ հարմարողական հոդափոխանակիչներն ունեն ամենապարզ կառուցվածքը և նմանակում են ստորին ծնոտի առանցքային պտտման շարժումները (terminal hinge movement):

Ոչ հարմարողական հոդափոխանակիչներում հնարավոր չէ ճշգրիտ գրանցել պտտման առանցքի և ատամների միջև հեռավորությունը, այդ պատճառով էլ փոխվում է ատամների տեղաշարժի աղեղը: Այս հոդափոխանակիչով աշխատելիս հնարավոր են շեղումներ վերին ատամների թմբիկների մեզիալ և ստորին թմբիկների դիստալ լանջերի փոխհաման արձանագրության ժամանակ:

Միջինանատոմիական հոդափոխանակիչներն ունեն ֆիքսված հոդային և կտրիչային անկյուններ և կարող են օգտագործվել անատամ ծնոտների պրոթեզավորման ժամանակ:


Կիսահարմարվող հոդափոխանակիչներն ունեն հոդային և կտրիչային ուղիների վերարտադրման մեխանիզմներ, որոնք կարելի է սարքաշինել միջին տվյալներով, ինչպես նաև հիվանդից ստացված (մոմե գլանակներ, որոնք ֆիքսում են կողմնային և առաջային օկյուլարիաները) այդ ուղիների անհատական անկյուններով: Այս հոդափոխանակիչների թերությունը կողմնային շարժումների ժամանակ հոդագլխիկի ուղղագիծ տեղաշարժն է. իրականում այն կորագիծ է: Կիսահարմարողական հոդափոխանակիչում միջինութագլխիկային հեռավորությունը ամբողջովին հարմարողական չէ:

Լրիվ հարմարողական հոդափոխանակիչներն ամենաճշգրիտ սարքերն են: Այս սարքերը հնարավորություն ունեն ընդորինակել ստորին ծնոտի բոլոր սահմանային շարժումները: Միջինութագլխիկային հեռավորությունը ամբողջովին հարմարողական է: Ամբողջովին հարմարվող հոդափոխանակիչների (TMJ, Stuart և այլն) սարքաշինման համար անհրաժեշտ են ստորին ծնոտի շարժումների պանտոգրաֆիկ գրանցումներ: Պանտոգրաֆը դիմադեղի տիպի սարք է, որը թույլ է տալիս ստանալ ստորին ծնոտի ծայրահեղ շարժումների ուղու պատկերը: Պանտոգրաֆիկ գրանցումները օգտագործվում են հոդափոխա-

նակիչների ուղղորդող մեխանիզմների կարգավորման, ինչպես նաև՝ ստորին ծնոտի շարժումների բնույթի զննման նպատակով:

Միջինանատոմիական հոդափոխանակիչները ունեն ֆիքսված հոդային և կտրիչային անկյուններ և կարող են օգտագործվել անատոմ ծնոտների արոթեզավորման ժամանակ:

Հոդափոխանակիչները մեկ ուրիշ դասակարգմանք բաժանվում են 2 հիմնական տիպի, պայմանավորված հոդային մեխանիզմի հատկություններով. Arcon և Non-Arcon հոդափոխանակիչներ (նկ.1.3.4.):



Նկ.1.3.4. Սարքերի հոդային մեխանիզմի սկզբունքը  
Arcon (ձախից) և Non-Arcon (աջից)

1. Մի դեպքում, Arcon տիպի ունիվերսալ հոդափոխանակիչում, հոդային մեխանիզմը կազմված է շարժուն գնդիկից, որն ունի հոդագլխիկի դեր հոդափոխանակիչի ստորին բաժնում: Հոդափոսիկը, որով տեղաշարժվում է գնդիկը, գտնվում է հոդային մեխանիզմի վերին մասում:

2. Մյուս դեպքում, Non-Arcon տիպի հոդափոխանակչում, գնդիկի տեղաշարժման համար անհրաժեշտ ծունկը գտնվում է ստորին, իսկ գնդիկը՝ սարքի վերին մասում:

Arcon տիպի հողափոխանակիչներն են՝ SAM, Whip-Mix, Artex (AS,AT), Denar Mark I, V, Dentatus ARA, Hanau 158, Protar I, II, Stratos 200 և այլն:

Մի հողափոխանակիչի հողային փոսիկը ուղիղ է, իսկ մյուսներինը թեքված է հողային թմբիկի բնական լանջին համապատասխանաբար: Arcon տիպի հողափոխանակիչներն ունեն ազատ շարժվող առանցք, և ստորին ծնոտի շարժումները ուղեկցվում են ատամների օկյուլագիոն մակերեսներով: Այդպիսի հողափոխանակիչներն ունիվերսալ են, որովհետև կարող են օգտագործվել ինչպես բնական օկյուլագիայի, այնպես էլ արհեստական ատամնաշարերի գննման դեպքում:


Non-Arcon տիպի հողափոխանակիչում գնդիկը,որը կատարում է հողագլխիկի դերը, տեղաշարժվում է խիստ կոնկրետ տարածությունում (ծնկում) (Dentatus ARD, Artex S, T և այլն): Օգտագործվում են նաև հողափոխանակիչներ, որոնցում սագիտալ շարժումներն իրականացվում են այնպես, ինչպես Non-Arcon տիպի, իսկ տրանսվերզալը՝ Arcon տիպի հողափոխանակիչում:

Յոդային մեխանիզմից բացի, հողափոխանակիչներն ունեն կտրիչային սեղանիկ՝ կտրիչային ուղին վերարտադրելու համար: Նրա վրա հավում է կտրիչային ձողը, որը պահում է վերին և ստորին մասերի միջև եղած վերտիկալ տարածությունը: Սեղանիկն առաջային ատամների վերականգնման ժամանակ օգտագործվում է որպես ստորին ծնոտի առաջային և կողմնային շարժումների մատրիցա:

Յոդափոխանակիչի կառուցվածքում նախատեսված է ստորին ծնոտի շարժումների հետին սահմանափակող բաղադրամաս՝ (հոդային մեխանիզմ) և այդ շարժումների առաջային սահմանափակող բաղադրամաս՝ կտրիչային ձող և կտրիչային սեղանիկ:

### **Ծնոտների մոդելների տեղադրումը հոդափոխանակիչի վրա**

Մոդելները կարելի է տեղադրել երկու մեթոդով՝ դիմային աղեղի և հատուկ հարմարանքի՝ հավասարակշռողի (բալանսիր) միջոցով: Առաջին մեթոդի դեպքում, սկզբում հոդափոխանակիչի վրա տեղադրվում է վերին ծնոտի մոդելը, իսկ երկրորդի ժամանակ՝ ստորին ծնոտի մոդելը:



Նկ. 1.3.5. Դիմային աղեղ:

Օկյուզալ հարթության հավասարակշռող-համատիպը ունի ելուն, որը համապատասխանում է ստորին կենտրոնական կտրիչների միջև եղած միջին կետին, և 2 հարթություններ (թևեր), որոնց ստորին մակերեսը տեղադրվում է ստորին երկրորդ աղորիքների դիստալ թմբերի հետ սիմետրիկ համամբ՝ աջից և ձախից: Կողմնային ատամների բացակայության դեպքում հավասարակշռողի դիստալ եզրերը համապատասխանեցնում են հետաղորիքային թմբիկի մեջտեղի հատվածում:

Դիմային աղեղի (Նկ.1.3.5.) միջոցով վերին ծնոտի մոդելը համապատասխանեցնում են հոդային մեխանիզմի նկատմամբ 3 ուղղահայաց հարթություններում՝ պայմանավորված իիվանդի վերին ծնոտի դիրքով հոդագլխիկների պտուտային առանցքի

նկատմամբ: Վերջինիս նպատակը հիվանդի ստորին ծնոտի շարժումների և հոդափոխանակիչում կատարվող շարժումների համապատասխանեցումն է:

Դիմային աղեղը կողմնորոշվում է միջին սագիտալ և օկյուլարիոն հարթության վրա: Դիմային աղեղի հիմնական մասերն են՝ կողմնային լծակները, որոնց ծայրերին գտնվում են ականջային պելոտները; Եռաժամին, որը մոմի կամ թերմոպլաստիկ մասսայի միջոցով ամրանում է վերին ծնոտի գլանակին կամ ատամներին, քթային հենքը, օրբիտալ սլաքը, գանգի միջին հարթության ցուցանիշը:


Դիմաաղեղային արձանագրության նպատակը վերին ծնոտի մողելի տեղադրումն է գործիքի վրա նույն հարաբերությամբ, ինչ որ իրականում վերին ծնոտի դիրքն է գանգի հիմի նկատմամբ:

Որպես ուղեցույց վերցվում է 2 հոդագլխիկները միացնող գծի առանցքը, որը գտնվում է ականջի այժիկից 13 մմ առաջ՝ ֆրամկֆուրտյան գծի վրա՝ ականջի այժիկից դեպի աչքի անկյունը տանող ուղղությամբ: Երկու գլանակները տեղադրվում են բերանի խոռոչում՝ դրանց համապատասխանող ծնոտների վրա:


Հանաս Wide-Vue 183 հոդափոխանակիչի դիմաաղեղային արձանագրության փուլերն են՝

1. Փափկեցրած մեղրանոնք տեղադրվում է դիմային աղեղի եռաժամու վրա, որը տեղադրվում է բերանի խոռոչ՝ վերին ծնոտի գլանակի վրա: Յիվանդին խնդրում ենք փակել բերանը ծնոտների կենտրոնական փոխհարաբերության դիրքում: Այսպիսով մեղրանոնք, սեղմվելով երկու գլանակների մեջտեղում, դրոշմվում է գլանակների մակերեսների ձևով (Ծկ.1.3.6.):

2. Բերանի խոռոչում մոմը օդաջրային շիթով սառեցնելով՝ եռաժանին հանվում է բերանից (լրիվ շարժական ատամնաշարի դեպքում մոմե գլանակների հետ) և ընկղութում սառը ջրի մեջ:



Նկ.1.3.6. Եռաժանին միացված է վերին ատամներին:



Նկ.1.3.7. Եռաժանում միացված է դիմային աղեղը:

3. Մոմի կարծրացումից հետո եռաժանին նորից տեղադրվում է բերանի խոռոչում՝ միացնելով դիմային աղեղին (Նկ.1.3.7.):

4. Դիմային աղեղի ականջամասերը տեղադրվում են ականջների արտաքին բացվածքների մեջ:

5. Դիմային աղեղի վրա որոշվում է ստորակնակապճային եզրի ամենաստորին կետը և դիմային աղեղի ցուցիչը համապատասխանեցվում դրան:

6. Դիմային աղեղը եռաժանու և մոմե գլանակների հետ հանվում է բերանի խոռոչից:

7. Աղեղը պահպում է որոշված դիրքում և անրացվում հոդափոխանակիչին:

8. Եռաժանուն մեղրամոնով ֆիքսված վերին ծնոտի կծվածքային գլանակի մեջ տեղադրվում է վերին ծնոտի մոդելը:

9. Վերին ծնոտի մոդելը արագ կարծրացող գիպսով միացվում է գործիքին:

10. Հոդափոխանակիչը պատրաստվում է այնպես, որ մողելները կապելու պահին հոդագլխիկի հետագծի մեխանիզմի թեքվածությունը յուրաքանչյուր կողմում հավասար լինի  $30^0$  (սագիտալ ուղղու նկատմամբ):

Հոդափոխանակիչի վերին և ստորին սկավառակների ամրացման հատվածները անհրաժեշտ է վագելինապատել: Հոդափոխանակիչի վերին սկավառակն ամրացվում է իր տեղում, կապիչ հարթակը՝ հոդափոխանակիչի ստորին հատվածում: Դիմային աղեղի դիմահար պտուտակը թուլացվում է՝ եռաժանու համալիրը դրանից ազատելու համար: Եռաժանու համալիրը ամրացվում է կապիչ հարթակին, և այս դիրքն ամրակապվում կից պտուտակով: Վերին ծնոտի մողելի հենքային մասը հագեցվում է ջրով, որպեսզի հետագայում հեշտ լինի այն անջատել արագ կարծրացող գիպսից, որով միացված է հոդափոխանակիչին: Վերին ծնոտի մողելը զգուշությամբ տեղադրվում է եռաժանու վրա այնպես, որ արձանագրիչ մոմի վրայի փոսիկները համապատասխանեն ատամների թմբիկներին:

Վերին ծնոտի մողելն ամրացվում է այնպես, որ ուղարկաց ձողը կտրիչային սեղանիկին հավի զրոյական դիրքում: Պետք է սպասել մինչև գիպսի կարծրանալը, այնուհետև եռաժանին և կապիչ համակարգը անջատել հոդափոխանակիչից:

Ստորին ծնոտը հոդափոխանակիչին է միացվում ըստ միջնոտային կենտրոնական փոխհարաբերության արձանագրության:

Ստորին ծնոտի մողելը ամրացնելու համար կտրիչային ուղղորդիչի ձողը երկարացվում է 1-2 մմ, որպեսզի կոմպենսացվի մոմի հաստությունը: Գիպսե մողելի վրա գտնվող ատամների վնասումներից խուսափելու համար, պետք է զերծ մնալ դրանց թոշվելուց:

Յիշվանդի հաջորդ այցի ժամանակ մոմի վրա շարված ատամնաշարերը տեղադրվում են բերանի խոռոչում և ստուգվում է նախորդ էտապում արձանագրված միջնութային կենտրոնական փոխհարաբերության ճշգրտությունը: Ստուգելուց հետո արհեստական ատամնաշարերը տեղափոխվում են հոդափոխանակիչի վրա՝ փորձելով վերին ատամների թմբիկները տեղադրել ստորին ատամների օկյուզիոն մակերեսի վրա դրված արձանագրիչ մոմի համապատասխան փոսիկների մեջ:

Դաջողության դեպքում, երբ միջնութային կենտրոնական փոխհարաբերությունը ճիշտ է արձանագրված, վերին ծնոտի հետին ատամների բոլոր թմբիկները ճշգրիտ կերպով նստում են արձանագրիչ մոմի վրա համապատասխան փոսիկներում՝ հոդափոխանակիչի հոդագլխիկի հետին դիրքում:

Եթե վերին ատամների թմբիկները ճշգրիտ նստած լինեն արձանագրիչ մոմի փոսիկներում, բայց հոդափոխանակիչի հոդագլխիկը հեռու մնա համապատասխան հոդափոսի հետին դիրքից, նշանակում է, որ նախորդ բուժայցի սկզբնական արձանագրությունը կատարվել է այն պահին, երբ ստորին ծնոտը գտնվել է ավելի հետին դիրքում:

Նկատի ունենալով, որ ստորին ծնոտի հոդագլխիկները չեն կարող գտնվել ավելի հետ, քան միջնութային կենտրոնական փոխհարաբերության դիրքում (դա ստորին ծնոտի այն դիրքն է, երբ հոդագլխիկը հոդափոսիկի ամենահետին հատվածում է), ապա պետք է ստուգունը կրկնել, երբեմն՝ բազմիցս, մինչև որ կրկնվի սկզբնական արձանագրությունը, կամ արձանագրվի ավելի հետին դիրք:

Դակառակ դեպքում, եթե հոդափոխանակիչի հոդագլխիկները տեղավորվեն ճիշտ դիրքում, բայց վերին ատամների թմբիկները չնստեն արձանագրիչ մոմի համապատասխան փոսիկներում, դա կնշանակի, որ ստորգիչ արձանագրության

ժամանակ ստորին ծնոտը ավելի հետին դիրք է ընդունել, քան նախորդ բուժայցի ընթացքում միջնոտային կենտրոնական հարաբերության արձանագրության ժամանակ: Ստորին ծնոտի հոդագլխիկները չեն կարող ավելի հետին դիրք գրավել, քան միջնոտային կենտրոնական հարաբերության ժամանակ, հետևաբար սկզբնական արձանագրությունը սխալ է եղել: Եթե մի քանի ստուգման արդյունքները փաստում են, որ սկզբնական արձանագրությունը սխալ է եղել, պետք է ստորին ծնոտի մոդելը վերատեղադրել հոդափոխանակիչի վրա՝ ըստ նոր արձանագրության: Նախքան ստորին ծնոտի մոդելի վերատեղադրումը, անհրաժեշտ է միջնոտային տարածության բարձրության հավելումը փոխարինելու համար հոդափոխանակիչի կտրիչային ձողը (incisal rod) երկարացնել արձանագրիչ մոմի հաստությամբ:

Ներկայում օգտագործվում են նաև ավելի ժամանակակից հոդափոխանակիչներ՝ Gnathomat և Gnathomat «Junior», որոնք կարող են օգտագործվել բոլոր տիպի պրոթեզավորումների և տարբեր տիպի կծվածքների ախտորոշման համար: Մոդելի ամրացումը դրանցում կատարվում է առանց գիպսի՝ ակոսավոր հիմքի օգնությամբ:

#### **Գրականության ցանկ**

1. Гаврилов Е.И., Щербаков А.С.. Ортопедическая стоматология. Москва, Медицина-1984.
2. Персин Л.С. Ортодонтия-Диагностика, виды зубочелюстных аномалий. Москва, Медицина-1999.
2. Роберсон Т.М., Гарольд О.Х., Эдварт Д.С.. Оперативная техника в терапевтической стоматологии по Стюрдеванту. Перевод с английского под редакцией Е.В. Боровского. Москва-2006.
3. Робустова Т.Г. Хирургическая стоматология. Москва, Медицина-2001.

## 1.4. Թեստեր

### 1. Որն է ճիշտ.

- ա) Քունք-ստործնոտային հողի բարդ կառուցվածքը ժառանգական է և փոփոխման ենթակա չէ կյանքի ընթացքում  
բ) Քունք-ստործնոտային հողի գործունեության կարգավորման մեջ էական դեր է կատարում ո. masseter մկանը  
գ) Քունք-ստործնոտային հողի գործունեության կարգավորման մեջ էական դեր է կատարում ո. pterygoideus lateralis մկանը,  
դ) Քունք-ստործնոտային հողի սկավառակի հետ միանում է ո. temporalis մկանը՝ կատարելով պաշտպանական ֆունկցիա,  
ե) Քունք-ստործնոտային հողի գործունեության կարգավորման մեջ մկանները որևէ էական դեր չեն կատարում:

### 2. Ընտրել ճիշտ պատասխանը.

- Ֆիզիոլոգիական հանգստի ժամանակ մկանները գտնվում են մինիմալ տոնուսի վիճակում և առկա է ատամների մաքսիմալ հպում,
- Ֆիզիոլոգիական հանգստի ժամանակ հոդագլխիկը հպվում է միայն հոդային սկավառակին, ոսկրային տարրերի միջև հպումը բացակայում է,
- Կենտրոնական օկյուզիայի դեպքում առկա է մաքսիմալ թվով ատամնահպում,
- Միջծնոտային կենտրոնական հարաբերություն ստորին ծնոտի հետին դիրքն է և էական նշանակություն չունի օրթոպեդիկ բուժման մեջ,
- Հոդագլխիկի յուրաքանչյուր տեղաշարժ ուղեկցվում է հոդային սկավառակին միացած ո. masseter մկանի կծկումներով,
- Բերանի մաքսիմալ բացման ժամանակ հոդագլխիկը հոդասկավառակի հետ սահում է հոդաթմբի լանջով ներքև  
ա) 1.2.5. բ) 2.3.6. զ) 3.4.6. դ) 1.3.5. ե) 4.5.6.

### 3. Հոդափոխանակիչները ըստ հոդային մեխանիզմի դասակարգվում են.

- Կիսահարմարողական
- Լրիվ հարմարողական
- Arcon
- Non-Arcon

ա) 2. բ) 1.2.3. զ) 2.3. դ) 3.4.

### 4. Ընտրել ճիշտ պատասխանը.

- ստորին ծնոտը գանգի միակ շարժուն ոսկրն է,
- ստորին ծնոտի շարժումները լինում են ինքնարերաբար, առանց որևէ մկանի միջամտության,

3. ստորին ծնոտի շարժումների բնույթի վրա ազդեցություն են թողնում ատամնաղեղների ձևը և նրանց հարաբերակցությունը,
4. ստորին ծնոտի շարժումների ուղղությունը որոշվում է մկանների տոպոգրաֆիայով և կաման տեղերով,
5. քունք-ստործնոտային հողի շնորհիվ ստորին ծնոտի շարժումները հիմնականում վերտիկալ առանցքում են տեղի ունենում,
6. ստորին ծնոտի շարժումների բնույթի վրա կօվածքը էապես չի ազդում

ա) 1.3.4.      բ) 1.3.5.      գ) 1.4.      դ) 2.5.6.      ե) 1.2.3.4.

#### **5. Հողակոխանակիչներն օգտագործվում են**

1. օկյուլագիոն փոխհարաբերությունների ուսումնասիրման համար
2. օկյուլագիոն խնդիրների ախտորոշման համար
3. վերականգնողական գործողությունները պլանավորելու համար
4. ատամների անուղղակի վերականգնման համար

ա) 2.      բ) 1.2.3.      գ) 2.3.      դ) 1.2.3.4.

#### **Պատասխաններ**

- |       |       |
|-------|-------|
| 1 - գ | 4 - ա |
| 2 - բ | 5 - դ |
| 3 - դ |       |

## **ԳԼՈՒԽ 2**

### **ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**դոց. Հ.Ռ. Գասպարյան,  
Մ.Հ. Երանյան, Ա.Ն. Չուլումյան,  
Լ.Ռ. Սաղաթելյան**

#### ***Նախաբան***

Նյութագիտությունը դա մի գիտություն է, որն ուսումնասիրում է նյութերի կառուցվածքը, հատկությունները, արտադրության տեխնոլոգիան և մշակումը:

Ստոմատոլոգիական նյութագիտությունը ուսումնասիրում է ստոմատոլոգիայում օգտագործվող նյութերի ընդհանուր հատկությունները և օրգանիզմի հետ նրանց ունեցած կապը:

## 2.1. Նյութագիտություն

Բոլոր նյութերը, որոնք օգտագործվում են օրբուդեղիկ ստոմատոլոգիայում, բաժանվում են երկու խմբի՝ հիմնական և օժանդակ:

1. Հիմնական են կոչվում այն նյութերը, որոնցից պատրաստվում են ատամնային պրոթեզներ, բեկակալներ և այլն: Հիմնական խմբին են պատկանում.

- մետաղական համաձուլվածքները
- պլաստմասսաները
- կերամիկական նյութերը

2. Օժանդակ են կոչվում այն նյութերը, որոնք օգտագործվում են պրոթեզների պատրաստման տեխնոլոգիայի տարբեր փուլերում, դրանք են՝

- դրոշմանյութեր - (կարծր, էլաստիկ, պլաստիկ)
- ցեմենտներ
- ձևավորող նյութեր - (մոներ)
- հղկող նյութեր - (պեմզա, բնական ալմաստ)
- փայլեցնող նյութեր - (քրոմի օքսիդ, երկաթի օքսիդ) և այլն:

## 2.2. Նիմնական նյութեր

### Մետաղները և նրանց համաձուլվածքները

Մետաղները այն նյութերն են, որոնք սովորական պայմաններում բնորոշվում են բարձր ջերմա- և էլեկտրահաղորդականությամբ, անթափանցելիությամբ, մետաղական փայլով և այլն:

Մետաղները դասակարգվում են հետևյալ կերպ.

1. Ազնիվ՝ ոսկի (Au), պլատին (Pt), արծաթ (Ag)
2. Ոչ ազնիվ՝ քրոն (Cr), կորալտ (Co), նիկել (Ni), երկաթ (Fe), պղինձ (Cu) և այլն

#### Ազնիվ մետաղներ

##### Ոսկի-Աս

Մաքուր ոսկին փափուկ, ճկուն մետաղ է, ոսկեգույն փայլով: Ոսկու խտությունը  $19.32 \text{ g/cm}^3$  է, հալման ջերմաստիճանը՝  $1064^{\circ}\text{C}$ : Ոսկին օժտված է բարձր քիմիական կայունությամբ՝ կայուն է կոռոզիայի նկատմամբ, չի օքսիդանում, չի լուծվում թթուներում և հիմքերում: Լուծվում է միայն արքայաջրում՝ (3 մաս  $\text{HCl} + 1$  մաս  $\text{HNO}_3$ ):

Քանի որ մաքուր ոսկին փափուկ է և ճկուն, ստումատոլոգիայում այն օգտագործվում է համաձուլվածքների ձևով՝ պղինձի (Cu), արծաթի (Ag), պլատինի (Pt), պալադիումի (Pd), նիկելի (Ni) և ցինկի (Zn) հետ: Նշված մետաղները լավացնում են ոսկու ֆիզիկական, մեխանիկական հատկությունները և իջեցնում են համաձուլվածքի գինը:

Ստումատոլոգիայում օգտագործվում է 916, 750, 583 հարգադրոշմերի ոսկին:

916 հարգադրոշմի ոսկին օգտագործվում է արհեստական պսակներ, ներդիրներ պատրաստելու համար (միակ թերությունը՝ համեմատական փափկությունն է):

750 հարգադրոշմի ոսկին օգտագործվում է որպես զոդանյութ:

583 հարգադրոշմի ոսկին օգտագործվում է կլամերներ պատրաստելու համար:

Ուկու օգտագործման ոլորտն է.

1. Ներդիրներ և մակրդիրներ
2. Պսակներ և կամրջաձև պրոթեզներ
3. Մասնակի շարժական ձուլովի պրոթեզների մետաղական հիմնակմախք
4. Իբրև զոդանյութ

### **Ոչ ազնիվ մետաղներ**

Ոչ ազնիվ մետաղներն են՝ Տանտալ (Ta), Նիկել (Ni), Չրոմ (Cr), Կորալտ (Co), Մոլիբդեն (Mo), Վոլֆրամ (W), Մանգան (Mn):

Ոչ ազնիվ մետաղները համաձուլվածքների կարևոր բաղկացուցիչ մասն են, քանի որ բարձրացնում են համաձուլվածքի ֆիզիկական, մեխանիկական, տեխնոլոգիական հատկությունները:

### **Մետաղական համաձուլվածքներ**

Ստոմատոլոգիայում մաքուր մետաղները չեն օգտագործվում, հաճախ օգտագործվում են նրանց համաձուլվածքները: Մետաղական համաձուլվածքները հանասեռ նյութեր են, որոնք բաղկացած են երկու և ավելի մետաղներից: Մաքուր մետաղների կառուցվածքը և հատկությունները եականորեն տարբերվում են համաձուլվածքների կառուցվածքից և հատկություններից:

## **Մետաղական համաձուլվածքների դասակարգումը**

➤ 1984թ ADA-ն (Ամերիկայի Ստոմատոլոգների Ասոցիացիան) առաջարկել է մետաղական համաձուլվածքների պարզ դասակարգումը՝

1. Գերազնիվ մետաղների համաձուլվածքներ (ԳԱ - ազնիվ մետաղների բարձր տոկոսի պարունակություն)

2. Ազնիվ մետաղների համաձուլվածքներ (Ա)

3. Ոչ ազնիվ մետաղների համաձուլվածքներ (ՈչԱ մետաղների համաձուլվածքների գերակշռող մասը ոչ ազնիվ մետաղներ են)

➤ Միջազգային ստանդարտների բյուրոն 2002թ-ին առաջարկել է ուսկու համաձուլվածքների հետևյալ դասակարգումը (ըստ համաձուլվածքի կարծրության).

I Դաս (փափուկ) - օգտագործվում են ներդիրներ պատրաստելու համար (որոնք չեն ենթարկվում ծամողական ճնշման մեջ ազդեցության)

II Դաս (միջին փափկության) - ներդիրներ, մակդիրներ, բարակ  $\frac{3}{4}$  պսակներ, պսակներ, որոնք ենթարկվում են միջին ծամողական ճնշման

III Դաս (կարծր) - ներդիրներ, պսակներ, կամրջաձև պրոթեզներ, որոնք ենթարկվում են բարձր ծամողական ճնշման  
IV Դաս (գերկարծր) - ներդիրներ, որոնք ենթարկվում են շատ բարձր ծամողական ճնշման, մասնակի շարժական ձուլովի պրոթեզների մետաղական կմախք, մեծ կամրջաձև պրոթեզներ:

➤ Քայտնի է նաև համաձուլվածքների դասակարգում ըստ օգտագործման.

I. Լրիվ մետաղական կոնստրուկցիաների համար օգտագործվող համաձուլվածքներ

- ԳԱ Au-Ag-Pd

- Ա Ag-Pd
- ՈչԱ Ni-Cr-Mo, Co-Cr-Mo

II. Մետաղ-կերամիկական կոնստրուկցիաներ պատրաստելու համար

- ԳԱ Au-Pt-Pd
- Ա Au-Pd
- ՈչԱ Ti-Al-V, Co-Cr-W

III. Մասնակի շարժական ձուլովի պրոբեզների համար օգտագործվող համաձուլվածքներ

- ԳԱ Au-Ag-Cu-Pd
- ՈչԱ Ni-Cr-Mo-Be, Co-Cr-Mo, Co-Cr-W

### **Մետաղական համաձուլվածքներին ներկայացվող պահանջները**

1. Կենսաբանական համատեղելիություն (նրանք պետք է չեղոք լինեն բերանի հեղուկների նկատմամբ և բացասական շանդուարանան բերանի խոռոչի հյուսվածքների վրա)

2. Կոռոզիոն կայունություն թթուների և հիմքերի նկատմամբ  
3. Բարձր մեխանիկական հատկություններ (կոշտություն, ամրություն, պլաստիկություն, կարծրություն)

4. Որոշակի ֆիզիկական և տեխնոլոգիական հատկությունների առկայություն (խտություն, ջերմային ընդարձակման գործակից, հալման ջերմաստիճան)

5. Չպետք է ալերգիկ ռեակցիաների պատճառ հանդիսանան  
Եթե համաձուլվածքը նախատեսված է կերամիկայով երեսպատման, ապա նա պետք է ունենա նաև հետևյալ հատկությունները

6. Ունակ լինի կցվել ճենապակու հետ  
7. Ճամաձուլվածքի հալման ջերմաստիճանը լինի բարձր ճենապակու հալման ջերմաստիճանից

8. ճենապակու և համաձուլվածքի ջերմային լայնացման գործակիցները նման լինեն

9. Նրանք չպետք է գունափոխեն կերամիկան:

#### **Կորալտ-քրոմ (Co-Cr) համաձուլվածքներ**

Այս համաձուլվածքները ստացել են իրենց անվանումը, քանի որ իիմնականում բաղկացած են քրոմից (Cr) և կորալտից (Co): Այս համաձուլվածքները հայտնի են նաև, որպես ստելիտներ: Նրանք ավելի թերև են քան ուսկյա համաձուլվածքները և նույնպես ունեն կոռոզիոն կայունություն: Նրանք ցուցաբերում են բարձր ամրություն և կարծրություն, միևնույն ժամանակ ավելի էժան են:

#### **Բաղադրությունը**

Բոլոր համաձուլվածքներում կորալտը իիմնական մետաղն է և կազմում է 60%-ը: Այն ապահովում է ձուլվածքի կայունությունը և կարծրությունը: Օժտված է բարձր հալման ջերմաստիճանով:

Քրոմի (Cr) քանակը տատանվում է 15 - 30%, այն պահպանում է ձուլվածքը օքսիդացումից և կոռոզիայից, իջեցնում է հալման ջերմաստիճանը:

Նիկելի (Ni) քանակը - մինչև 20% նվազեցնում է համաձուլվածքի դիմադրողականությունը, բարձրացնում է ճկունությունը:

Մոլիբդենի (Mo) միջին քանակը այդ համաձուլվածքներում կազմում է 5 - 7%: Այն բարձրացնում է դիմադրողականությունն ու կարծրությունը:

Ածխածնի (C) ավելացումը փոքր քանակով, մինչև 0.4%, բարձրացնում է համաձուլվածքների դիմադրողականությունը:

Ստելիտները, Ամերիկյան դասակարգման համաձայն, բաժանվում են 2 խմբի՝


1.  $1300^{\circ}\text{C}$  – ից բարձր հալման ջերմաստիճանով

2. մինչև  $1300^{\circ}\text{C}$  հալման ջերմաստիճանով

Օգտագործվում են անշարժ պրոթեզներ, թիթեղներ, բռնիչներ պատրաստելիս:

### **Մետաղական համաձուլվածքների ձուլումը**

Ատամնատեխնիկական լաբորատորիայում նախապես պատրաստված մոմե կոնստրուկցիան (նկ.2.2.1.) ուղարկվում է ձուլարան, հետագա ձուլման նպատակով:



Նկ.2.2.1. Մոմե կոնստրուկցիայի պատրաստում:

Զուլումը դա մետաղական դետալների ստացման ամենալայն տարածված մեթոդն է: Զուլման պրոցեսը կազմված է հետևյալ փուլերից:

#### **I. Զուլածողային համակարգի տեղադրում**

Զուլածողերը լինում են մոմից, պլաստմասսայից:  
Զուլածողերի հաստությունը համապատասխան է մոմե կոնստրուկցիայի հաստությանը: Գոյություն ունի ձուլածողային համակարգի երկու հիմնական ձև՝ եզակի (նկ. 2.2.2.Ա.) և բազմակի (նկ. 2.2.2.Բ.):



Նկ. 2.2.2.Ա. Զուլաձողային համակարգի եզակի ձև:

Բազմակի ձևը օգտագործվում է մասնակի շարժական ձուլովի պրոթեզների մետաղական կմախքի ձուլման ժամանակ:



Նկ. 2.2.2.Բ. Զուլաձողային համակարգի բազմակի ձև:

Երբ օգտագործվում է ձուլաձողային համակարգի այս ձևը, պետք է ի նկատի ունենալ հետևյալը՝

1. Նախընտրելի է օգտագործել ավելի քիչ քանակությամբ, մեծ տրամագծով ձուլաձողեր, քան շատ, բայց բարակ ձուլաձողեր
2. Նախընտրելի է, որ ձուլաձողերը հնարավորինս լինեն կարծ և ուղիղ
3. Պետք է խուսափել ձուլաձողերի ուղղության կտրուկ փոփոխությունից՝ խուսափելով T-աձև միացումներից:

Զուլաձողային համակարգի նպատակները հետևյալներն են՝

1. Ստեղծել տարածություն մոմե կոնստրուկցիայի համար
2. Ստեղծել ճանապարհ մոմի արտահոսքի համար
3. Ստեղծել ճանապարհ հալեցված մետաղի ներհոսքի համար
4. Կոմպենսացնում է մետաղի նատեցումը կարծրացման ժամանակ

## II. Կաղապարում

Կաղապարող նյութերը (փաթեթանյութերը) կերամիկական զանգված են, որոնք պատկանում են հրակայուն նյութերի շարքին: Այս նյութերը օգտագործում են մոմե կոնստրուկցիան կաղապարելու համար՝ ստեղծելով հալեցված մետաղի ներհոսքի ճանապարհ:

Ըստ փաթեթանյութերի հատիկների չափի տարբերում են փաթեթանյութերի երկու տեսակ.

- Մանրահատիկավոր - այս փաթեթանյութերը ունեն մանրահատիկավոր կառուցվածք (օգտագործվում են պսակներ, ներդիրներ, գամիկներ, կամրջաձև պրոթեզներ ձուլելիս):
- Խոշորահատիկավոր - այս փաթեթանյութերի հատիկները ավելի խոշոր են (օգտագործում են մասնակի շարժական ձուլովի պրոթեզների ձուլման ժամանակ):

Ըստ փաթեթանյութերի կապող էլեմենտի տարբերում են փաթեթանյութերի երեք տեսակ: Բոլոր տեսակների հիմնական նաև կազմում է սիլիցիումը (Si), նրանք տարբերվում են կապող նյութով:


1. Փաթեթանյութեր, որոնց կապող կոմպոնենտը գիպսն է: Օգտագործվում են ուկու համաձուլվածքների համար, կարող են դիմակայել մինչև  $700^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի:

2. Փաթեթանյութեր, որոնց կապող կոմպոնենտը ֆոսֆատներն են: Օգտագործվում են կոբալտ-քրոմ համաձուլվածքների համար, կարող են դիմակայել բարձր ջերմաստիճանի:


3. Այս փաթեթանյութերի կապող կոմպոնենտը սիլիցիումն է: Օգտագործվում են ոչ ազնիվ մետաղների բարձր ջերմաստիճանով ձուլման ժամանակ՝ մասնակի շարժական ձուլովի պրոբեզմներ ձուլելիս:

Մոմե կոնստրուկցիան ձուլածողային համակարգի հետ կաղապարելու ժամանակ պետք է ուշադրություն դարձնել, որ այն հավասարաչափ հեռավորության վրա գտնվի կաղապարի պատերից (գլանի մեջ) (նկ. 2.2.3.Ա.):

Այնուհետև փաթեթանյութը շաղախվում է ըստ արտադրողի ցուցումների: Գլանը տեղադրվում է թրթրիչի վրա, աստիճանաբար փաթեթանյութը լցվում է մոմե կոնստրուկցիայի վրա՝ կանխելով օդի բշտիկների առաջացումը: Սպասում ենք վերջնական կարծրանալուն (նկ. 2.2.3.Բ.):



Նկ. 2.2.3.Ա. Մոմե կոնստրուկցիան ձուլածողային համակարգի հետ կաղապարի պատերից պիտի գտնվի հավասարաչափ հեռավորության վրա:



Նկ.2.2.3.Բ. Փաթեթամյութը լցվում է գլանի մեջ:

### **III. Սոմի հեռացում և թրծում**

Թրծումը իրականացվում է մուֆելային վառարաններում, որոնք լինում են մեխանիկական և ծրագրավորվող (նկ. 2.2.4.):



Նկ. 2.2.4. Մուֆելային վառարան:

Թրծումը հետապնդում է հետևյալ նպատակները՝

1. Վերացնում է խոնավությունը՝ չորացնելով գլանը

2. Գոլորշիացնում է մոմի մնացորդները՝ առաջացնելով խոռոչ գլանում
3. Լայնացնում է գլանը՝ կոմպենսացնելով մետաղի նստեցումը սառչելու ժամանակ

#### IV. Զուլում

Զուլման եղանակը կախված է օգտագործվող համաձուլվածքից և սարքավորումից: Բոլոր եղանակների հիմքում ընկած է հալված մետաղի ուժային սրսկումը գլանի խոռոչի մեջ: Այդ ուժը կարող է լինել ցենտրիֆուգալ (ավելի շատ է տարածված) կամ օդային ճնշումով:

Մետաղը կարող է հալեցվել գազ-օքսիգենային այրիչով, վակուումի միջոցով: Որոշ լաբորատորիաներում օգտագործվում է մետաղի հալեցման ինդուկցիոն եղանակը, որը ապահովում է մետաղի արագ և լիարժեք հալեցումը (Ծկ. 2.2.5.Ա,Բ,Գ):



Նկ. 2.2.5.Ա. Ցենտրիֆուգա:



Նկ. 2.2.5.Բ. Ինդուկցիոն սարք:



Նկ. 2.2.5.Գ. Վակուումային սարք:

#### V. Փաթեթանյութից ձուլվածքի ազատումը և մշակումը ավագաշիթով

Զգուշորեն ձուլվածքը ազատում ենք փաթեթանյութից, մշակում ավագաշիթով, որպեսզի հեռացվեն փաթեթանյութի մնացորդները (նկ. 2.2.6.):



Նկ. 2.2.6. Ձուլվածքի ազատում փաթեթանյութից և ավագաշիթով մշակում:



**VI. Զուլաձողային համակարգի հեռացում, հղկում և փայլեցում**  
Զուլաձողային համակարգը հեռացվում է, ձուլվածքը  
հղկում և փայլեցվում է:

**Պլաստմասսաներ**

Պլաստմասսաները սինթետիկ նյութեր են՝ պոլիմերներ, որոնք կազմված են մոնոմերներից: Պոլիմերները լինում են գծային և կարված: Գծային պոլիմերները քիչ պլաստիկ են և քիչ անուր: Այդ իսկ պատճառով պոլիմեթիլմետակրիլատից պատրաստված պրոբեզի հենքը շուտ է կոտրվում: Կարված պոլիմերները ավելի ամուր են: Նրանք օգտագործվում են որպես երեսպատիչ ձուլովի կոնստրուկցիաների համար:

**Պլաստմասսաների դասակարգումը**  
Լինում են՝

1. Ինքնակարծրացող
2. Ձերմակարծրացող
3. Լուսակարծրացող

Ինքնակարծրացող - կազմված է փոշուց (պոլիմեթիլմետակրիլատից) և մոնոմերային հեղուկից (մեթիլմետակրիլատից) (նկ. 2.2.7.):

Ձերմակարծրացող - սրանց պոլիմերիզացիան իրականանում է երկու տեխնոլոգիական եղանակով՝

- Եփում
- թրծում հատուկ վառարանում ավելի ժամանակակից եղանակ է, որի ժամանակ մետաղական կմախքի վրա շերտ-շերտ ավելացնում են պլաստմասսան: Յուրաքանչյուր շերտը ավելացնելուց հետո իրականացվում է թրծում վառարանում (նկ. 2.2.8.):



Նկ. 2.2.7. Ինքնակարծրացող  
պլաստմասսա:



Նկ. 2.2.8. Զերմակարծրացող  
պլաստմասսա:

Լուսակարծրացող - մոնոմերներից գերծ են, կարծրանում են  
հատուկ լուսային սարքավորումների միջոցով:

**Պլաստմասսե և հախճապակյա արհեստական ատամների  
համեմատությունը՝**

Պլաստմասսա	Հախճապակի
<ol style="list-style-type: none"> <li>Հիդրոսկոպիկ է, ուռչում է խոնավ միջավայրում</li> <li>Ծակոտիմերի միջոցով կլանում է պիզմենտներ սննդից</li> <li>Մաշվում է անտագոնիստ ատամի ազդեցության տակ</li> <li>Փուխր չէ</li> <li>Պլաստմասսան կարող է բորբոքման և ալերգիայի պատճառ հանդիսանալ</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Հախճապակին հիդրոսկոպիկ չէ</li> <li>Չունի ծակոտիմեր, փայլուն շերտի շնորհիվ չի փոխում փայլը և գույնը</li> <li>Գործածելուց չի մաշվում բնական անտագոնիստի ազդեցության տակ</li> <li>Փուխր է, շուտ է կոտրվում</li> <li>Իներտ է բերանի խոռոչի հյուսվածքների նկատմամբ</li> </ol>

#### **Պլաստմասսե խմորի ստացման տեխնոլոգիան**

Բարձր որակի կոնստրուկցիաներ ստանալու համար  
անհրաժեշտ է, որ փոշի - հեղուկ խառնուրդի պոլիմերիզացիան

իրագործվի հատուկ պայմաններում՝ խառնուրդի կոմպոնենտների օպտիմալ փոխհարաբերությամբ հեղուկ/փոշի - 1/3: Անհրաժեշտ է իմանալ, որ մոնոմերի ցանկացած ավել քանակություն ազդում է հետագա պրոթեզի հատկությունների վրա, մասնավորապես անընդհատ ազդելով բերանի խոռոչի լորձաթաղանթի վրա, մոնոմերը բերում է բորբոքային պրոցեսի առաջացմանը: Դայտնի է, որ ազատ մոնոմերը բոլոր դեպքերում առկա է պատրաստի պրոթեզում: Ի դեպ, ինքնակարծրացող պլաստմասսայի դեպքում մոնոմերը մոտ 10 անգամ ավելի շատ է, քան ջերմակարծրացող պլաստմասսայում:

**Պլաստմասսայի պոլիմերիզացիան անցնում է հետևյալ փուլերով՝**

1. Թաց ավազանման փուլ - բնորոշվում է խառնուրդում ազատ հատիկների առկայությամբ,

2. Զգվող թելերի փուլ - երբ զանգվածը դառնում է ավելի մածուցիկ, իսկ ձգումից առաջանում են բարակ թելեր,

3. Խմորանման փուլ - զանգվածը ավելի պինդ է, ձգվող թելեր չկան: Այս փուլի ժամանակ է, որ պլաստմասսե խմորը պլաստիկ է և պատրաստ է օգտագործման համար,

4. Ռետինանման փուլ - երբ խմորը աստիճանաբար կորցնում է պլաստիկությունը և ձեռք է բերում էլաստիկություն,

5. Կարծր փուլ - պլաստմասսե խմորը կարծրանում է:

**Պլաստմասսե խմորի պոլիմերիզացիայի խանգարումներ**

**Կրծառում** - նյութի հատկությունն է փոխել ծավալը հեղուկ կամ պլաստիկ վիճակից կարծրին անցնելով: Մոնոմերի ավելցուկը բարձրացնում է կրծառման աստիճանը:

**Գազաբշտիկների առաջացում** - թերմոպոլիմերիզացիայի ժամանակ էկզորեմիկ ռեակցիայի հետևանքով կյուվետի մեջ ջերմաստիճանը կարող է հասնել այնպիսի մակարդակի, որի

ժամանակ մոնոմերը անցնում է գազային վիճակի: Դա բերում է պրոթեզի հաստության մեջ գազաքստիկների առաջացմանը:

**Կրծատման ծակոտկենություն** - կաղապարումից հետո պլաստմասսե խմորը տեղադրում են ճնշման տակ: Երբ այդ ճնշումը փոքր է, պլաստմասսե խմորը չի կարող գրադեցնել կաղապարի ամբողջ ծավալը՝ հատկապես առավել բարակ հատվածներում, որի հետևանքով այդ հատվածներում ծակոտիներ են առաջանում:

**Հատիկավոր ծակոտկենություն** - Հնարավոր է հետևյալ դեպքերում՝

- Երբ մոնոմերի քանակը քիչ է, փոշու հատիկների մի մասը մնում է ազատ վիճակում,
- մոնոմերի գոլորշիացման հետևանքով կարող են առաջանալ փոշու հատիկներ:

**Ներքին լարման ուժերի առաջացում** - պոլիմերիզացիայից հետո պատրաստի պրոթեզը պետք է դանդաղ սառչի: Բարակ հատվածներն ավելի արագ են սառչում, որը բերում է ներքին լարման ուժերի առաջացմանը:

**Միկրոճեղքերի առաջացում** - կարող են առաջանալ ներքին լարման ուժերի առկայության պարագայում:

**Պլաստմասսայի օգտագործման ոլորտը**

- Լրիվ և մասնակի շարժական պրոթեզներ
- Արիեստական ատամներ
- Պսակների և կամրջաձև պրոթեզների երեսպատիչ
- Դիմածնոտային պրոթեզներ
- Ներդիրների և գամիկների մոդելներ
- Ժամանակավոր պսակներ
- Անհատական գդալներ և կարծր հենքեր
- Օրթոդոնտիկ սարքեր

## Կերամիկա

Կերամիկայի հատկությունները կախված են մի շարք գործոններից, այդ թվում՝ բաղադրիչ մասերի քիմիական հատկություններից, մանրեցման աստիճանից, ջերմային մշակման տևողությունից:

Կերամիկան բաղկացած է կառլինից, կվարցից, դաշտային սպաթից և ներկանյութերից:

**Դաշտային սպաթ** - բնության մեջ ամենատարածված նյութերից մեկն է, սակայն մաքուր վիճակում սակավ է հանդիպում: ճենապակու արտադրության մեջ հիմնականում օգտագործվում է կալիումական դաշտային սպաթը, որը կազմում է ճենապակու զանգվածի 60-78%, հալվում է  $1100 - 1550^{\circ}\text{C}$  - ում, որից հետո վեր է ածվում թափանցիկ ապակենման զանգվածի: Դաշտային սպաթը մեծ նշանակություն ունի, քանի որ ունի մեծ հոսունություն ջերմային մշակման ժամանակ, լրացնում է զանգվածի ծակոտկենությունը և նրա մակերեսները դարձնում հարթ ու փայլուն:

**Կառլին** - սպիտակ կավ է, որի 90% կազմում է կառլինիտը՝ ալյումասիլիկատը: Կառլինի քանակից է կախված զանգվածի թափանցելիությունը, որքան կառլինի քանակը շատ է, այնքան ցածր է թափանցելիությունը և բարձր է ջերմային մշակման աստիճանը: Մաքուր վիճակում կառլինը քիչ է հանդիպում՝ հիմնականում այն հանդիպում է խառնուրդների ձևով՝ կվարցավագի, մետաղների օքսիդների, տիտանի, օրգանական կոլոիդ նյութերի հետ:

**Կվարց** - սա դասվում է հանքանյութերի շարքին: Մաքուր կվարցն անգույն է: Մետաղների օքսիդները վերջինիս տալիս են տարբեր երանգներ: Ծխագույն՝ մորիոն, կապտավուն՝ ամետիստ, դեղին՝ ցիտրին:

**Ներկանյութ** - ճենապակու զանգվածին կարելի է խառնել տարբեր ներկանյութեր, առանձնապես արհեստական ատամներ պատրաստելու ժամանակ: Այդ ներկանյութերն են՝ տիտանի օքսիդը, կոբալտի օքսիդը, քրոմը, ուլին, արծաթը, ցինկը, պլատինը և այլն:

Ատամնատեխնիկական լաբորատորիայում օգտագործվող կերամիկական զանգվածը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից. օպակ (հիմնական զանգված), եզրային կերամիկա, դենտինային զանգված, էմալային զանգված, ներկեր, թափանցիկ կերամիկա, ջնարակ:

Կերամիկական զանգվածը թրծվում է հատուկ կերամիկական վառարաններում (նկ. 2.2.9.):



Նկ. 2.2.9. Կերամիկական վառարան:

Ստոմատոլոգիական կերամիկական դասակարգվում է հետևյալ կերպ.

Ըստ կերամիկայի քիմիական կառուցվածքի.

- Դաշտասպաթային

- Լեյցիտային
- Այումինային
- Ապակեալյումինային
- Ապակեկերամիկա

Ըստ կերամիկայի թրծնան ջերմաստիճանի.

- Բարձր հալման ջերմաստիճան ունեցող ( $1201-1450^{\circ}\text{C}$ )
- Միջին հալման ջերմաստիճան ունեցող ( $1051-1200^{\circ}\text{C}$ )
- Ցածր հալման ջերմաստիճան ունեցող ( $850-1050^{\circ}\text{C}$ )
- Շատ ցածր հալման ջերմաստիճան ունեցող ( $<850^{\circ}\text{C}$ )

Կերամիկայի օգտագործման ոլորտը՝

- Կերամիկական պսակներ
- Կամրջաձև պրոթեզների և պսակների երեսպատիչ
- Արհեստական ատամներ
- Ներդիրներ և մակդիրներ
- Օրթոդոնտիայում օգտագործվող բրեկետներ

## 2.3. Օժանդակ նյութեր

### Դրոշմանյութեր

Դրոշմը - պողքեզային դաշտում և նրա սահմաններում տեղակայված փափուկ և կարծր հյուսվածքների մակերեսների նեգատիվ արտացոլումն է, որը ստացվում է հատուկ նյութերի՝ դրոշմանյութերի օգնությամբ (Ըկ. 2.3.1.):



Նկ. 2.3.1. Դրոշմ:

Դրոշմանյութերն ըստ բնույթի լինում են.

1. Կարծր (գիպս, ցինկօքսիդէվգենոլային և ցինկօքսիդգվայակոլային)
2. Էլաստիկ (ալգինատային, սիլիկոնային, թիակոլային)
3. Պլաստիկ (ստենս)

Դրոշմանյութերը պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

1. Չպետք է փոխվեն երկար պահելիս և կարծրանալու ընթացքում
2. Պետք է օժտված լինեն պլաստիկությամբ: Պլաստիկությունը - դա նյութի հատկությունն է ձևափոխվել առանց

քայլայվելու արտաքին ուժերի ազդեցության ներքո և պահպանել իր նոր ձևը արտաքին ուժերի ազդեցության դադարումից հետո

3. Բերանի խոռոչում պետք է արագ կարծրանան
4. Պետք է լավ արտացոլեն փափուկ և կարծր քիմքի արտատիպը
5. Պետք է հաճելի լինեն հիվանդի համար, հաճելի համ ու հոտ ունենան
6. Յյուսվածքների վրա պետք է բացասաբար չազդեն
7. Պետք է լինեն հիգիենիկ
8. Յեշտ պետք է անջատվեն այն նյութից, որից պատրաստվելու է մողելը
9. Օգտագործման համար պետք է լինեն դյուրին և հարմար
10. Ցանկալի է թանկ չլինեն, երկար պահպանվեն և հեշտ տեղափոխվեն

#### **Կարծր դրոշմանյութեր**

Կարծր դրոշմանյութերի շարքին են դասվում

- գիպսը
- ցինկօքսիդէվգենոլային, ցինկօքսիդգվայակոլային դրոշմանյութերը

#### **Գիպս (կալցիումի սուլֆատ)**

Գիպսը պատկանում է կարծր դրոշմանյութերի շարքին: Բնական գիպսը դա շատ տարածված հանքային նյութ է սպիտակ, մոխրավուն կամ դեղնավուն գույնի: Նրա քիմիական բաղադրությունն է  $\text{CaSO}_4 \times 2\text{H}_2\text{O}$ :

Ստոմատոլոգիական գիպսը ստանում են բնական գիպսի թրծումից հետո, որը կատարում են հատուկ վառարանում  $110\text{--}130^\circ\text{C}$  ջերմաստիճանի ներքո: Այս պայմաններում գիպսը ջրազրկվում է և առաջանում է  $\text{CaSO}_4 \times 1/2\text{H}_2\text{O}$ :

Ներկայումս օգտագործվում է մի քանի տեսակի գիպս.

- 1) Փափուկ (կիրառվում է օկյուզիոն դրոշմեր ստանալու համար)
- 2) Կարծր (կիրառվում է դիագնոստիկ և աշխատանքային մոդելներ պատրաստելու համար)
- 3) Գերկարծր (օգտագործվում է կոմբինացված մոդելներ պատրաստելու համար)
- 4) Դատուկ կարծրություն ունեցող՝ այդ տեսակի գիպսերին ավելացվում են սինթետիկ կոմպոնենտներ, օրինակ դյուրալիտ Տ-ն:

Գիպսից պատրաստվում են.

- 1) Դրոշմեր
- 2) Մոդելներ
- 3) Դեմքի դիմակ
- 4) Գիպսը օգտագործվում է մոդելների ֆիքսման համար արտիկուլյատորի մեջ, օկյուզիոն փոխհարաբերությունների ճշգրտման համար:

Գիպսի կարծրացման ակտիվատորներն են (արագացնողները) կերակրի աղը, պոտաչը: Գիպսի կարծրացման ինիիբիտորներն են (դանդաղեցնողները) շաքարավագը, բորաքսը:

Ներկայումս այն չի կիրառվում որպես դրոշմանյութ մի շարք բացասական հատկությունների պատճառով:

### **Ցինկօքսիդէվգենոլային, ցինկօքսիդվայակոլային**

#### **դրոշմանյութեր**

Այս խմբի չափսանյութերին են պատկանում այն մածուկները, որոնք բաղկացած են ցինկի օքսիդից և էվգենոլից կամ ցինկի օքսիդից և գվայակոլից:

Ցինկօքսիդէվգենոլային դրոշմանյութերից է Չեխական արտադրության Ռեպինը, որը բաղկացած է 2 մածուկներից (հիմնական և կատալիզատոր), որոնք խառնվում են հավասար

քանակով: Այն օգտագործվում է լրիվ շարժական պողոթեզավորման ժամանակ անհատական գդալով դրոշմ ստանալու համար (վերջնական):

Ցինկօքսիդէվգենոլային մածուկները բավարարում են հետևյալ պահանջներին.

1. Ունեն մեծ հոսունություն
2. Արտացոլում են լորձաթաղանթի հստակ տպվածքը
3. Լավ կաշում են անհատական գդալին
4. Հեշտ առանձնանում են գիպսե մոդելից
5. Կարծրանալուց հետո չեն կրծատվում

### **Էլաստիկ դրոշմանյութեր**

Այս խմբին են պատկանում

1. Ալգինատային
2. Սիլիկոնային (A և C)
3. Թիակոլային (աղոլիսուլֆիդային) դրոշմանյութերը:

Էլաստիկ դրոշմանյութերը բազմազան են և իրենց ֆիզիկաքիմիական հատկություններով տարբերվում են մեկը մյուսից, նրանց համար ընդհանուրն այն է, որ կարծրանալուց հետո վեր են ածվում ռետինանման զանգվածի: Չափսանյութի այս հատկությունը թույլ է տալիս բերանի խորոչից լիովին հեռացնել այն: Այս չափսանյութերը հաճելի են հիվանդի համար, քանի որ համեմատաբար ավելի քիչ են գրգռում լորձաթաղանթը և տալիս են բերանի խորոչի ճիշտ արտադիպը: Այսպիսի չափսանյութերից մոդելի ստացումը բավականին հեշտ է:

### **Ալգինատային դրոշմանյութ**

Ալգինատային դրոշմանյութերը պատրաստվում են ծովային ջրիմուների հիման վրա, որն իրենից ներկայացնում է ալգինաթթվի Na-ալկան աղը: Այն փոշի է, որը ջրի ավելացումով վեր է ածվում մածուցիկ զանգվածի, որը բավականին արագ, մի

քանի րոպեների ընթացքում կարծրանում է բերանի խոռոչում:  
Ներկայումս ամենատարածված ալգինատային դրոշմանյութերն  
են. Իպին (Yrecon), Օրթոպրինտ (Orthoprint), Կրոմոպան  
(Kromopan), Էլալգին (Elalgin), Վիրալգին (Viralgin) (նկ. 2.3.2.):



Նկ. 2.3.2. Ալգինատային դրոշմանյութ:

#### **Առավելությունները**

- 1.Եժանագին են
- 2.Հեշտ են կիրառվում
- 3.Ապահովում են հստակ պատկեր շարժական պրոբեզմերի,  
ժամանակավոր պսակների, դիագնոստիկ մոդելների  
պատրաստման ժամանակ:

#### **Թերությունները**

- 1.Ամբողջաձույլ կոնստրուկցիաների պատրաստման ժամանակ  
չեն ապահովում բավարար հստակություն
- 2.Արտահայտված նստեցման առկայությունը, որից խուսա-  
փելու համար, անհրաժեշտ է անհապաղ մոդել ստանալ
- 3.Գդալներին կպչողականության բացակայություն:

#### **Դրոշմի ստացումը ալգինատային դրոշմանյութով**

Ժամանակակից ալգինատային նյութերը արտադրվում են  
մանր դիսպերսային փոշու ձևով: Նրան բժիշկն ավելացնում է

սառը ջուր: Զրի և փոշու հարաբերությունը որոշվում է նյութին կից չափագույղով, որն անհրաժեշտ է խստորեն պահպանել: Ալգինատային փոշին շպատելով շաղախվում է զրի հետ ռետինե ամանի մեջ 30-40վ, մինչև համասեռ զանգված ստանալը: Բերանի խորոչից ալգինատային դրոշմը հանելուց հետո լվանում են սառը ջրով: Դրոշմը շատ արագ փոխում է իր ծավալը, օդում տալիս է նստեցում և զրի մեջ ուռչում է, որի պատճառով այդ դրոշմից պետք է արագ ստանալ գիպսե մոդել:

Օգտագործման ոլորտը.

1. Դիագնոստիկ մոդելների ստացում
2. Լրիվ շարժական պրոթեզավորման ժամանակ նախնական դրոշմ ստանալու համար
3. Մասնակի շարժական աղեղային և թիթեղային պրոթեզների պատրաստման ժամանակ տարբեր փուլերում
4. Անշարժ պրոթեզավորման ժամանակ անտագոնիստ ատամնաշարից դրոշմի ստացում
5. Ժամանակավոր պսակների պատրաստման ժամանակ:

### **Սիլիկոնային դրոշմանյութեր**

Դրանք ստացվել են սիլիկոնային կառուչուկների հիման վրա: Ըստ նյութի վոլկանացման տեսակի (պոլիկոնդենսացիայի պրոցես) սիլիկոնները լինում են A և C-սիլիկոններ: C-սիլիկոնները անվանվել են condensation բարին համապատասխան: A-սիլիկոնները - addition բարին համապատասխան:

### **C-սիլիկոններ**

C-սիլիկոնները վոլկանացվում են պոլիկոնդենսացիայի ռեակցիայի պրոցեսում: Սա նշանակում է, որ վոլկանացման պրոցեսում տեղի է ունենում սպիրտի մոլեկուլների կոնդենսացիա, որոնք հետո գոլորշիանում են: Դրա հետևանքով

զարգանում է նյութի նստեցում (ժամանակում աճող): Հայտնի է, որ ճշգրտող զանգվածը ավելի արագ է տալիս նստեցում, քան հիմնական զանգվածը, որը բերում է դրոշմի դեֆորմացիայի: Այսպիսով C-սիլիկոններով ստացված դրոշմից անհրաժեշտ է մորել ստանալ հնարավորինս արագ (նկ. 2.3.3.Ա,Բ):



Նկ. 2.3.3.Ա - C-սիլիկոններ. հիմնական շերտ



Նկ. 2.3.3.Բ - C-սիլիկոններ. ճշգրտող շերտ

### **Առավելությունները.**

1. Ցածր արժեք
2. Ամբողջաձույլ կոնստրուկցիաների պատրաստման ժամանակ ստանում ենք բավականին հստակ պատկեր
3. Ոչ բարձր նստեցում
4. Ինչպես հիմնական, այնպես էլ ճշգրտող զանգվածների էլաստիկությունը և ամրությունը
5. Դեգինֆեկցիայի անցկացման հնարավորություն:

### **Թերությունները.**

1. Ոետրակցիոն թելերով դրոշմի ստացման ժամանակ ոչ իդեալական որակ
2. Պահանջվում է ըստ կոնսիստենցիայի տարբեր նյութերի և կատալիզատորի ծեռքով մանրակրկիտ շաղախում
3. Կատալիզատորի հստակ դոզավորման բարդությունը
4. Ննարավոր չէ դրոշմից մի քանի անգամ մոդել ստանալ
5. Զգայունությունը խոնավության նկատմամբ (հիդրոսկոպիկ են)
6. Ցածր հիդրոֆիլություն
7. Գրալին անբավարար աղիեզիա
8. Չի շաղախվում ավտոմատ

### **A-սիլիկոններ**

Այս խմբի սիլիկոնների կարծրացման ժամանակ տեղի է ունենում պոլիմերիզացիայի սպեցիֆիկ ռեակցիա, որի ժամանակ տեղի չի ունենում անցանկալի նյութերի առաջացում: Ի տարբերություն պոլիկոնոդենսացիայի, միացման ռեակցիան չի ստեղծում ցածր մոլեկուլյար արտադրանք: Այսպիսով, A-սիլիկոնները ամենաչափակայուն նյութերն են (նկ. 2.3.4.Ա,Բ):



Նկ. 2.3.4.Ա - A-սիլիկոններ.  
հիմնական շերտ:



Նկ. 2.3.4.Բ - A-սիլիկոններ.  
ճշգրտող շերտ:

#### Առավելությունները.

1. ճշգրիտ արտատպում են մակերևույթապատկերը
2. Յիմնական նյութի և կատալիզատորի շաղախման հեշտությունը և դոզավորման հստակությունը, որը պայմանավորված է մասսաների համասեռությամբ
3. Նյութերի մածուցիկության բազմազանություն
4. Դրոշմը ստանալուց հետո մինչև 30 օր կարելի է մոդել ստանալ
5. Ղեֆորմացիայի հանդեպ կայունություն
6. Դրոշմից կարելի է ստանալ մի քանի մոդելներ
7. Ա սիլիկոնները օժտված են լավ հիդրոֆիլությամբ, որը թույլ է տալիս ստանալ որակյալ դրոշմ, նույնիսկ, եթե դրոշմի դաշտ է ընկնում աննշան քանակով թուք և արյուն:
8. Շերտերի միջև գերազանց աղիեզիան
9. Որակով դեզինֆեկցիայի հնարավորություն
10. Ինչպես հիմնական, այնպես էլ ճշգրտող զանգվածների ավտոմատ շաղախման հնարավորություն
11. Լորձաթաղանթի և մաշկի հետ օպտիմալ համատեղելիություն
12. Տոքսիկ չեն և հիպոալերգիկ են

### **Թերությունները.**

1. Զի կարելի շաղախել լատեքսային ձեռնոցներով
2. A-սիլիկոնները ավելի քան են, քան C-սիլիկոնները

Սիլիկոնային դրոշմանյութերը օգտագործվում են երկշերտային դրոշմանալու համար:

### **Դրոշմ ստանալու տեխնիկան:**

Սիլիկոնային դրոշմանյութով կա դրոշմի ստացման 2 եղանակ (միափուլ և երկփուլ):

### **Դրոշմի ստացման միափուլ տեխնիկան**

Օգտագործում ենք ծակոտկեն դրոշմագդալ, կամ եթե օգտագործում ենք ոչ ծակոտկեն դրոշմագդալ, այն ծածկում ենք աղիեզիկ նյութով: Ատամները մշակելուց հետո կատարում ենք հենակետային ատամների լնդի ռետրակցիա ռետրակցիոն թելով, որը հեռացվում է անմիջապես դրոշմ ստանալուց առաջ: Միաժամանակ շաղախվում են առաջին (հիմնական) և երկրորդ (ճշգրտող) շերտերը: Առաջին շերտը տեղադրվում է դրոշմագդալի մեջ, իսկ ճշգրտող շերտը՝ բերանի խոռոչի մշակված ատամների շրջանում և դրոշմագդալին: Այնուհետև գդալը տեղադրվում է բերանի խոռոչում և սպասում ենք մի քանի րոպե՝ համաձայն արտադրող ֆիրմայի ցուցումների:

### **Դրոշմի ստացման երկփուլ տեխնիկան**

Օգտագործում ենք ծակոտկեն դրոշմագդալ, կամ եթե օգտագործում ենք ոչ ծակոտկեն դրոշմագդալ, այն ծածկում ենք աղիեզիկ նյութով: Ատամները մշակելուց հետո կատարում ենք հենակետային ատամների լնդագրապանիկների ռետրակցիա ռետրակցիոն թելով: Ստանում ենք առաջին շերտով դրոշմ, որը լվանում ենք և չորացնում օդով, հեռացնում ենք ներքնափոսերը: Լնդագրապանիկներից հանում ենք ռետրակցիոն թելերը, չորացնելուց հետո հատուկ ներարկիչով ճշգրտող մածուկը

լցնում ենք դրոշմագդալի մեջ, հետո հենակետային ատամների շրջանում և ստանում ենք երկշերտ դրոշմ:

### **Թիակոլային դրոշմանյութեր (պոլիսուլֆիդային)**

Արտադրվում են 2 մածուկների տեսքով՝ իիմնական և կատալիզատորային: Դրանք իրենց բարձր ամրության հետևանքով թույլ են տալիս մեկ դրոշմից ստանալ մի քանի գիպսե մողելներ, տալիս են պրոթեզային դաշտի ճշգրիտ պատկերը: Սակայն նրանցից շատերը առաձգական չեն, որի պատճառով հնարավոր է դրոշմի վնասում բերանի խոռոչից հեռացնելիս: Օգտագործվում են անատամ ծնոտներից վերջնական դրոշմ ստանալու համար:

### **Թերմոպլաստիկ դրոշմանյութեր**

Այս խմբի դրոշմանյութերի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրանց փափկեցումն ու կարծրացումը կատարվում է ջերմաստիճանի փոփոխության ներքո: Այս դրոշմանյութերին են պատկանում, օրինակ՝ Ստենսը, Ստոմոպլաստը, Kerr-ի զանգվածը և այլն (Ըկ. 2.3.5.):



Ըկ. 2.3.5. Թերմոպլաստիկ դրոշմանյութ:

Թերմոպլաստիկ զանգվածները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝

1. Թերմոպլաստիկ զանգվածները պետք է փափկեն այնպիսի շերմաստիճանում, որ չառաջացնեն այրվածք բերանի խոռոչում

2. Փափկեցված վիճակում իրենցից ներկայացնեն համասեռ զանգված

3. Կարծրանան բերանի խոռոչի շերմաստիճանում:

Թերմոպլաստիկ դրոշմանյութերի էլաստիկության բացակայության պատճառով առաջանում են դրոշմի ձևափոխություններ, որի պատճառով էլ դրանք շատ չեն կիրառվում որպես դրոշմանյութեր: Դրանք այժմ կիրառվում են շարժական պրոթեզավորման ժամանակ անհատական գործների եզրերի ձևավորման համար:

### **ՑԵՄԵՆՏՈՒՆԵՐ**

ՑԵՄԵՆՏՈՒՆԵՐԸ փոշիանման հանքանյութեր են, որոնք ջրի կամ այլ հեղուկի հետ խառնելիս առաջացնում են պլաստիկ զանգված, կարծրանալուց հետո քարանում են:

Ստոմատոլոգիական ցեմենտուները կլինիկայում ունեն լայն կիրառում, որպես.

1. Պլոմբանյութ

2. Անշարժ պրոթեզների և օրթոդոնտիկ ապարատների ֆիքսացիայի համար հենակետային ատամների և ինպլանտների վրա

3. Պլոմբայի տակ, որպես պաստառանյութ կակղանք պաշտպանելու համար

Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի կլինիկայի համար, ավելի մեծ նշանակություն ունեն ֆիքսող ցեմենտուները:

Ֆիքսող ցեմենտուները պետք է բավարարեն հետևյալ սպեցիֆիկ պահանջներին.

1. Նրանք չպետք է գրգռեն կակղանը, հակառակ՝ պետք է ունենան հակաբորբոքային ազդեցություն և խթան հանդիսանան դենտինագոյացման համար:

2. Ֆիքսող նյութերը պետք է հանդիսանան կակղանի լավ մեկուսիչներ և պաշտպանեն կակղանը ջերմային, քիմիական և կենսաբանական գրգռիչներից:

**Ցեմենտները բաժանվում են՝**

Ըստ օգտագործման նպատակի (ժամանակավոր և մշտական)

Ըստ արտադրման ձևի (փոշի և հեղուկ, 2 մածուկ)

Ամենատարածված դասակարգումը հիմնված է այս զանգվածների կապող նյութի՝ մատրիցայի վրա: Ըստ այդ նշանի տարրերում ենք.

1. ցինկ-ֆոսֆատային ցեմենտներ
2. ցինկ-սիլիկատֆոսֆատային ցեմենտներ
3. ցինկ-պոլիկարբոքսիլային ցեմենտներ
4. ապակի- իոնոմերային ցեմենտներ
5. պոլիմերային ցեմենտներ

Բացի վերը բվարկված մշտական ցեմենտներից տարրերում ենք նաև ժամանակավոր ցեմենտներ՝ էվգենոլի հիման վրա ինչպես նաև էվգենոլ չպարունակող (մասնավորապես Ca-ի հիդրօքսիդի հիման վրա):

### **Ցինկ- ֆոսֆատային ցեմենտներ**

Այս խմբի ցեմենտները ունեն օգտագործման լայն ոլորտ: Օգտագործվում են անշարժ պրոթեզների և այլ օրթոպեդիկ սարքերի ֆիքսացիայի համար, ինչպես նաև որպես պաստառանյութ ատամնալիցքի տակ (կակղանը տեղային գրգռիչներից պաշտպանելու համար):

Ցինկ-ֆոսֆատային ցեմենտները արտադրվում են փոշու և հեղուկի տեսքով:

Փոշին հիմնականում բաղկացած է ZnO –ից, ավելացված MgO-ից (10%) և աննշան քանակով պիզմենտից: Հեղուկը իրենից ներկայացնում է օրթոֆոսֆորական թթվի ջրային լուծույթ, որը պարունակում է 30-50% ջուր: Հեղուկը պարունակում է նաև 2-3% ալյումինիումի աղեր և 0-9% ցինկի աղեր: Al –ը անհրաժեշտ է ցեմենտի առաջացման ռեակցիայի համար: Իսկ Զn-ը հանդիսանում է փոշու և հեղուկի միջև ռեակցիայի դանդաղեցնող, որը ապահովում է աշխատանքի համար բավարար ժամանակ: Ցեմենտի կարծրացումը պայմանավորված է ցինկի օքսիդի և ֆոսֆորաթթվի միացմամբ, որի հետևանքով առաջանում է ցինկի ֆոսֆատ: Ցինկի ֆոսֆատը ջրում լավ է լուծվում, ապա՝ բյուրեղանում: Բյուրեղները միանալով իրար առաջացնում են կարծր ցեմենտ: Որքան փոշին մանր է, կարծրացումը այնքան արագ է ընթանում: Եթե այն պատրաստվում է կամրջաձև պրոթեզների ֆիքսման համար, շաղախը պետք է լինի ջրիկ, թթվասերանման, իսկ եթե այն պատրաստվում է պլոմբի համար, շաղախը պետք է լինի ավելի պինդ (Ակ. 2.3.6.):




Ակ.2.3.6. Ցինկ-ֆոսֆատային ցեմենտ:

#### **Ցինկ-պոլիկարբոքսիլային ցեմենտներ**

Ցինկ-պոլիկարբոքսիլային ցեմենտները օգտագործվում են անշարժ պրոթեզների, օրթոդոնտիկ սարքերի ամրացման համար:

Այս ցեմենտները օգտագործվում են նաև որպես պատառանյութ պլոմբայի տակ ատամի կակղանց պաշտպանելու նպատակով: Նրանք օգտագործվում են նաև որպես ժամանակավոր պլոմբանյութեր (նկ. 2.3.7.):

Ցինկ-պոլիկարբոքսիլային ցեմենտի հիմնական առավելություններն են հանդիսանում թույլ գրգռող ազդեցությունը, ատամի հյուսվածքներին և մետաղների համաձուլվածքներին լավ ադհեզիան, բարձր անրությունը, ցածր լուծելիությունը:



Նկ. 2.3.7. Ցինկ-պոլիկարբոքսիլային ցեմենտ:

Թերություններն են հանդիսանում կարճ աշխատանքային ժամանակը, որոշ տեսակի նյութերի մոտ, վերջնական կարծրացման երկար ժամանակը:

#### **Ցինկ-սիլիկատֆոսֆատային ցեմենտներ**

Ցինկ-սիլիկատֆոսֆատային ցեմենտները գոյություն ունեն երկար տարիների ընթացքում, որպես ցինկ-ֆոսֆատային և սիլիկատային ցեմենտների համադրություն: Սիլիկատային ապակու առկայությունը ապահովում է որոշ աստիճանի թափանցիկություն, մեծացնում է անրությունը և լավացնում է ֆոտորիոդ արտագատումը ցեմենտից:

Նրանք օգտագործվում են անշարժ պրոթեզների և այլ օրբոպեղիկ սարքերի ֆիքսացիայի համար, կողմնային ատամների ժամանակավոր ալոնքավորելու համար:

Ցեմենտային փոշին իրենից ներկայացնում է խառնուրդ, որը կազմված է 10-20% ցինկի օքսիդից և սիլիկատային ապակուց:

Ցեղուկը պարունակում է 2-5% ալյումինի և ցինկի աղեր, 45-50% օրթոֆոսֆորական թթվի ջրային լուծույթում:

### **Ցեմենտներ պոլիմերների հիմքի վրա**

Պոլիմերային ցեմենտների մեծամասնությունը պատկանում են 2 տիպի ակրիլատների թվին՝ մեթիլմետակրիլատի հիմքի վրա և արոմատիկ դիմեթակրիլատի հիմքի վրա:

Մեթիլմեթակրիլային պոլիմերային ցեմենտները օգտագործվում են ներդիրների և երեսպատիչների ֆիքսացիայի համար: Այս ցեմենտները կարելի է օգտագործել նաև ժամանակավոր պսակների ֆիքսացիայի համար:

Դիմեթակրիլատային ցեմենտները իրենցից ներկայացնում են արոմատիկ դիմեթակրիլատի համակցությունը այլ մոնոմերների հետ: Դիմեթակրիլատային ցեմենտը օգտագործվում է նախապես թթվամշակված ամբողջաձույլ պրոթեզների և օրթոդոնտիկ աղեղների ֆիքսացիայի համար:

Դիմեթակրիլատային ցեմենտների առավելություններն են՝ բարձր ամրությունը և ցածր լուծելիությունը:

Հիմնական թերություններն են՝ մշակման բարդությունը, որը դժվարացնում է անհրաժեշտ հաստության թաղանթի առաջացումը, պրոթեզի տեղադրման ժամանակ անհարմարությունը, կակղանի գրգռումը, նյութի ավելցուկների հեռացման բարդությունը:

## **Ապակի- իոնոմերային ցեմենտներ**

Ապակի-իոնոմերային ցեմենտները համակցում են սիլիկատային և պոլիմերային ֆիքսող նյութերի հատկությունները: Այս ցեմենտները օգտագործվում են.

1. Անշարժ պրոբեզմերի, օրթոդոնտիկ սարքերի ֆիքսացիայի համար

2. Որպես պաստառանյութ ատամնալիցքի տակ

3. Որպես պլոմբանյութ էմալի եռողիայի ժամանակ:

Ապակի-իոնոմերային ցեմենտներում փոշին կազմված է նուրբ մանրեցված ապակուց: Նեղուկը իրենից ներկայացնում է սոպոլիմեր պոլիակրիլիտակոնային 50% ջրային լուծույթի կամ այլ պոլիկարբոնաթթվի և 5% գինեթթվի խառնուրդ: Որոշ նյութերում սոպոլիմերը ավելացվում է փոշում, իսկ հեղուկը պարունակում է միայն գինեթթու, մյուս տեսակներում բոլոր բաղադրամասերը պարունակվում են փոշում, իսկ հեղուկը իրենից ներկայացնում է թորած ջուր:

Ապակի-իոնոմերային ցեմենտները անհրաժեշտ է բաժանել հետևյալ խմբերի

1.Ըստ նշանակության

ա) որպես պաստառանյութ

բ) որպես մշտական պլոմբանյութ

գ) անշարժ պրոբեզմերի և օրթոդոնտիկ սարքերի ֆիքսացիայի համար

դ) արմատախողովակներում գաճիկների ամրացման համար

2.Ըստ կարծրացման եղանակի

ա) քիմիական կարծրացման

- փոշի և հեղուկ, ներկայացված պոլիակրիլային թթվով

- փոշի և հեղուկ, ներկայացված թորած ջուրով

բ) լուսակարծրացող

գ) կոմբինացված

Ապակի-իոնոմերային ցեմենտների կարևորագույն հատկություններից են.

- դենտինի հետ քիմիական կապ առաջացնելու ունակություն
- կակղանի վրա գրգռող հատկության բացակայություն
- աննշան լուծելիություն
- դենտինին և կոմպոզիտային նյութերին ադհեզիվ
- ռենտգեն կոնտրաստություն
- կարծրացումից հետո ֆոտորիդների երկարատև արտազատում
- թթումերի նկատմամբ կայունություն
- թափանցիկություն
- լայնացման գործակիցը մոտ է դենտինի լայնացման գործակիցին
- խոնավ միջավայրում էլ կարելի է օգտագործել  
Այսպիսով, ապակի-իոնոմերային ցեմենտների առավելություններն են.
  - շաղախման դյուրիխնություն
  - բարձր ամրություն
  - ֆոտորիդների արտազատման առկայություն
  - թթումերում թույլ լուծելիություն
  - բարձր ադհեզիվ հատկություններ և թափանցիկություն
  - խոնավ միջավայրում օգտագործման հնարավորություն:Ապակի-իոնոմերային ցեմենտների թերություններն են.
  - դանդաղ կարծրացում և հիդրոֆոբություն սկզբնական շրջանում

### **Ցինկօքսիդէվգենոլային ցեմենտներ**

Օգտագործվում է որպես պաստառանյութ խորանիստ կարիեսի ժամանակ՝ կակղանը պաշտպանելու համար և անշարժ օրթոպեդիկ սարքերի ժամանակավոր անրացման համար:

Այս խմբի նյութերի առավելություններն են.

- 1) օժտված են բարձր հերմետիկ հատկություններով
- 2) կակղանի վրա գրգռող հատկության բացակայություն թերություններն են.

- 1) ցածր ամրություն,
- 2) բարձր լուծելիություն,
- 3) բերանի հեղուկի ազդեցությամբ արագ քայլայում:

### **Մոմեր**

Մոմերը օժանդակ նյութեր են, որոնք օգտագործվում են պրոթեզներ պատրաստելու միջանկյալ փուլերում:

Դրանք լինում են.

- կենդանական ծագում ունեցող մոմեր
- բուսական մոմեր
- հանքային մոմեր
- բնական խեժեր
- սինթետիկ (արհեստական)

Մոմերին ներկայացվող պահանջներ են.

- Մոմը չպետք է թեփուկավորվի
- Ջալման արդյունքում չպետք է գոյանա նստվածք
- Պետք է ունենա կայութելու ունակություն ամբողջ մակերեսով
- Չպետք է ունենա կրծատում
- Չպետք է դեֆորմացվի  $37^{\circ}\text{C}$  -ի դեպքում:

Մոմերը ըստ նշանակության լինում են.

- Հենքային
- Բյուգելային
- Զևավորող
- Պրոֆիլային
- Կայուն

### **Հենքային մոմեր**

Օգտագործվում են շարժական պրոթեզների հենքերի, օրթոդոնտիկ ապարատների և անհատական գրալների հենքերի ձևավորման համար, օկլուզիոն գլանակներով մոմեր հենքերի պատրաստման համար (նկ. 2.3.8.):



Նկ. 2.3.8. Հենքային մոմ:

### **Բյուգելային մոմեր**

Օգտագործվում են մասնակի շարժական ծուլովի պրոթեզների մոմից ապագա մետաղական կմախքի ձևավորման համար (նկ. 2.3.9.):



Նկ. 2.3.9. Բյուգելային մոմեր:

### **Զևսվորող մոմեր**

Օգտագործվում են պսակների, մերդիրների, գամիկների, կամրջաձև պրոթեզների ձևավորման համար (նկ. 2.3.10.):



Նկ. 2.3.10. Զևսվորող մոմեր:

### **Պրոֆիլային մոմեր**

Օգտագործվում են մետաղների ձուլման ժամանակ ձուլաձողային համակարգի ստեղծման համար (նկ. 2.3.11.):



Նկ. 2.3.11. Պրոֆիլային մոմեր:

### **Կայուն մոմեր**

Օժտված լինելով բարձր կայողականությամբ օգտագործվում է մոմեն ֆրազմենտները իրար կացնելու համար (նկ. 2.3.12.):



Նկ. 2.3.12. Կայուն մոմեր:

### **Աբրազիվ նյութեր**

Մրանք բարձր կարծրությամբ մանրահատիկավոր նյութեր են, որոնք օգտագործվում են պլաստմասսե և մետաղական մակերեսների մշակման՝ հղկման և փայլեցման համար: Աբրազիվ նյութերը ըստ նշանակության լինում են հղկող և փայլեցնող:

### **Հղկող նյութեր**

Հղկանյութերը օգտագործվում են արհեստական պրոթեզների հղկման և մեխանիկական մշակման համար: Հղկանյութերը մանրահատիկավոր զանգված են: Ատամնապրոթեզավորման լաբորատորիայում պատրաստված բոլոր տիպի պրոթեզները պետք է պարտադիր ենթարկվեն մեխանիկական մշակման և հղկման, որի նպատակն է պրոթեզներից հեռացնել ավելորդ մասերը, անհարթությունները, արտավքված մասերը, որոնք կարող են բերանի խոռոչի լորձաթաղանթի տրավմայի կամ բորբոքման պատճառ հանդիսանալ: Պրոթեզների անհարթ մակերեսներում կարող են կուտակվել կերակրի մնացորդներ և բարենպաստ պայմաններ ստեղծվեն միկրոֆլորայի զարգացման համար: Պրոթեզի հղկվածության աստիճանից կախված է նաև նրան ընտելանալու ժամկետները՝ լավ մեխանիկական մշակման ենթարկված պրոթեզներին ավելի հեշտ է ընտելանալ:

Օգտագործվող հղկանյութերը լինում են՝

- Բնական
- Արհեստական

Բնական նյութերը մանրացված հանքաբարեր են.

- Ալմաստ
- Կորունդ
- Պեմզա
- Նռնաքար

Արհեստական նյութերի շարքին է դասվում.

- Կարբորունդը

### **Փայլեցնող նյութեր**

Վերջնական փայլեցման պրոցեսը սկզբունքորեն չի տարբերվում հղկումից: Այն համարյա թե կատարվում է նույն գործիքներով և նյութերով, միայն այն տարբերությամբ, որ փայլեցնող նյութերը ավելի մանրահատիկավոր են: Փայլուն մակերես ստացվում է այն դեպքում, երբ նախապես կատարվում է մանրակրկիտ հղկում: Վերջնական փայլեցունը կատարվում է խոզանակների և թափել ֆիլցերի օգնությամբ՝ օգտագործելով քրոմի օքսիդ, երկաթի օքսիդ:

### **Գրականության ցանկ**

1. Жулев Е.Н. Материаловедение в ортопедической стоматологии: Учебное пособие.- Нижний Новгород, 1997.
2. Нечаяенко Н.А. Клинико-лабораторные исследования силиконовых оттискных материалов, применяемых при изготовлении металлокерамических протезов: Автореф. дис. канд. мед. наук.- Москва, 1989.
3. Трезубов В.Н., Штейнгарт М.З., Мишнев Л.М. Ортопедическая стоматология. Прикладное материаловедение. СпецЛит, 2003.
4. Alan B. Carr, Glen P.McGiveny, David T. Brown. McCracken's removable partial prosthodontics, 11 th edition 2005 Mosby, Inc.
5. Kenneth J. Anusavice. Phillips' science of dental materials, Elsevier 2003.
6. Subbarao V.K. Notes on Dental Materials Third Revised Edition 1997.

## 2.4. Թեստեր

1. Կորալտ-քորմ համաձուլվածքներում կորալտը ապահովում է
  1. կայունություն
  2. կարծրություն
  3. բարձրացնում է ձուլվածքի դիմադրողականությունը
  4. նվազեցնում է ձուլվածքի դիմադրողականությունը
  - ա) 1234, բ) 12, գ) 124, դ) 123
2. ճենապակու բաղադրությունը կազմված է
  1. դաշտային սպատ
  2. կառին
  3. ներկանյութեր
  4. կվարց
  - ա) 1234, բ) 123, գ) 23, դ) 24
3. Բնական հղկանյութերն են
  1. ալմաստ
  2. կոռունդ
  3. պեմզա
  4. կարբոռունդ
  - ա) 124, բ) 123, գ) 23, դ) 24
4. Նշվածներից որոնք են էլաստիկ դրոշմանյութերը
  1. թերմոպլաստիկ
  2. ալգինատային
  3. կարծր
  4. սիլիկոնային
  - ա) 124, բ) 13, գ) 23, դ) 24
5. Որ մետաղներն են համարվում ազնիվ
  1. ոսկի
  2. տիտան
  3. արծաթ
  4. այումինիում
  - ա) 124, բ) 13, գ) 23, դ) 24
6. Պլաստմասսաները լինում են
  1. ինքնակարծրացող
  2. ջերմակարծրացող
  3. լուսակարծրացող
  - ա) 123, բ) 13, գ) 23, դ) 2
7. ճենապակու կազմության մեջ են մտնում
  1. կառին
  2. կվարց
  3. պեմզա

4. դաշտային սպաթ
5. ներկանյութեր
- ա) 1245, բ) 123, գ) 235, դ) 25
- 8. Նշվածներից որն է հանդիսանում պլաստմասսայի պոլիմերիզացիայի խանգարում**

  1. գազաքստիկների առաջացում
  2. կրծատում
  3. միկրոճեղքերի առաջացում
  4. ձգվող թելերի առաջացում
  - ա) 123, բ) 14, գ) 23, դ) 24

- 9. Պլաստմասսայի հատկություններն են**

  1. հիդրոսկոպիկությունը
  2. գույնի կայունությունը
  3. մաշվածությունը
  4. փիսրունությունը
  - ա) 13, բ) 123, գ) 234, դ) 24

- 10. Նշվածներից որոնք են պատկանում իհմնական նյութերի շարքին**

  1. դրոշմանյութ
  2. ճենապակի
  3. հղկող նյութեր
  4. մետաղներ
  - ա) 14, բ) 123, գ) 24, դ) 2

**Պատասխաններ**

- |       |        |
|-------|--------|
| 1 - բ | 6 - ա  |
| 2 - ա | 7 - ա  |
| 3 - բ | 8 - ա  |
| 4 - դ | 9 - ա  |
| 5 - բ | 10 - գ |

## ԳԼՈՒԽ 3

**ՆԵՐԴԻՔՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՍՊԱՏԻՉՆԵՐԻ  
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՏԱՄՆԵՐԻ  
ՊՍԱԿՆԵՐԻ ԱԲԱՏՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ**

**Ա.Լ. Վարդանյան**

### ***Նախարան***

Տվյալ բաժնում արծարծված է ատամ-ների պսակների մասնակի քայքայվածության ժամանակ դրանց ներդիրների և երեսպատիչների օգնությամբ վերականգնումը: Այստեղ նկարգրված են նշված կոնստրուկցիաների պատրաստման փուլերը, ժամանակակից տեխնոլոգիաներով պատրաստման եղանակները:

### **3.1. Ներդիրներ**

Ներդիրը անշարժ միկրոպրոթեզ է, որն օգտագործվում է ատամի անատոմիական ձևը վերականգնելու համար: Ներդիրները օգտագործվում են ատամի պսակի մասնակիքայքայման դեպքում և կանխարգելում են դրա հետագաքայքայումը, շտկում են ծանողական ֆունկցիան, գեղագիտությունը և հնչյունաբանությունը, կարգավորում են քունք-ստործնուտային հոդի ֆունկցիան:

Ներդիրները լինում են մետաղական (ոսկու, քրոմկորալտային, արծաթ-պալատիումային համաձուլվածքներից), ոչ մետաղական (ծենապակի) և համակցված (մետաղկերամիկական):

Ներդիրները կարելի է օգտագործել հետևյալ հիվանդությունների դեպքում՝

- կարիես
- սեպածն արատ
- հիպոպլազիա և ֆյուլորոզ
- ախտաբանական մաշվածություն

Քակացուցումներն են՝ վգիկային և «ծաղկող» կարիեսը, ատամի երկուսից ավելի ախտահարված մակերեսների և սեպածն արատների գուգակցումը, հիվանդի թթվային արտադրամասում աշխատելու փաստը և ատամների երկրորդ և երրորդ աստիճանի շարժունակությունը:

Ներդիրների պատրաստման կլինիկական և լաբորատոր փուլերն են՝

1. ներդիրների համար հատուկ խոռոչի ձևավորումը,
2. մոմե կոնստրուկցիայի ստացումը,
3. մոմի փոխարինումը համապատասխան նյութով լաբորատոր պայմաններում,

4. անուղղակի մեթոդի ժամանակ պատրաստի ներդիրի մշակումը և հարմարեցումը գիպսե տիպարի վրա,
5. ներդիրի հարմարեցումը բերանի խոռոչում,
6. ներդիրի ամրացումը:

Ատամների հղման ժամանակ հարկավոր է ստեղծել այնպիսի խոռոչ, որի միջից հնարավոր կլինի հեշտությամբ դուրս բերել մոմե մոդելը և ներմուծել պատրաստի ներդիրը: Խոռոչը պետք է լինի դարականան՝ մուտքի շրջանում ավելի լայն, քան հատակի շրջանում:

Ատամի կարծի հյուսվածքների ախտահարման ձևերն են կարիեսը, էմալի հիպոպլազիան, կարծի հյուսվածքների ախտաբանական մաշվածությունը, ատամի սեպաձև արատները, ֆյուտրոզը, սուր և քրոնիկական վնասվածքները, ժառանգական որոշ հիվանդություններ, ինչպիսիք են անլիարժեք դենտինոգենեզը, Ստեյնտոն-Կապդեպոնի համախտանիշը և այլն:

Վերոհիշյալ հիվանդությունների հետևանքով ատամների կարծի հյուսվածքներում կարող են առաջանալ տարբեր չափի և բնույթի ախտահարումներ: Կախված ատամի պսակային հատվածի կարծի հյուսվածքների արատների տեղակայումից՝ Բլեքը առաջարկել է տեղագրական հետևյալ դասակարգումը՝ ըստ խոռոչի գտնվելու տեղի:

- ծամիչ ատամների օկյուզիոն մակերեսի և կույր անցքերի շրջանում (I դաս)
- ծամիչ ատամների կրնտակտային մակերեսներին (II դաս)
- ֆրոնտալ ատամների կրնտակտային մակերեսներին (III դաս)
- ֆրոնտալ ատամների կրնտակտային մակերեսներին՝ կտրիչ եզրի ընդգրկումով (IV դաս)
- բոլոր ատամների վզիկային մակերեսներին (V դաս)
- ծամիչ ատամների թմբիկներին և կտրիչների կտրիչ եզրերին(VI դաս)

Բացի այս դասակարգումից, գոյություն ունի միջազգային դասակարգում, որի հիմքում ընկած է ատամի այն մակերեսի անվանման առաջին տառը, որի վրա գտնվում է կարիոզ խոռոչը՝ O, M, D, V, L, C: Ըստ Բլեքի՝ I և II դասի ատամի պսակային հատվածի արատների համար Միլիկակին առաջարկել է ատամի օկյուզիոն մակերեսի քայքայման ցուցանիշ (ԱՕՄՔ8), որն ատամի քայքայված օկյուզիոն մակերեսի հարաբերությունն է ինտակտ ատամի օկյուզիոն մակերեսին: ԱՕՄՔ8-ի որոշման համար առաջարկվել է ստանդարտ թափանցիկ թիթեղիկ, որի վրա գծված է միլիմետրային ցանց: Այդ թիթեղիկը տեղադրելով ատամի օկյուզիոն մակերեսին՝ որոշում են արատի և օկյուզիոն մակերեսների մեջությունը և նրանց փոխհարաբերությունը: Դա ունի գործնական նշանակություն: Եթե ԱՕՄՔ8-ը 0.2-0.6 է, ապա կարելի է պատրաստել ներդիրներ, եթե 0.6-0.8 է կարելի է պատրաստել արհեստական պսակ և 0.8-ից մեծ լինելու դեպքում՝ ծայրատային գամիկավոր ներդիր և պսակ:

Ատամնաշարի պսակային հատվածների քայքայումը զգալիորեն ներգործում է հիվանդի արտաքին տեսքի, խոսքի և ծամողական ֆունկցիաների, դիմախաղի վրա: Ատամների պսակային հատվածի արատների դեպքում խախտվում են ատամի կազմախոսական ձևը և միջատամնային հպումները, որի հետևանքով լինու ենթարկվում է կերակրի վճասարար ազդեցությանը: Առաջանում են ռետենցիոն գոտիներ, որտեղ կուտակվում և քայքայվում են կերակրի մնացորդները՝ հանգեցնելով լնդաբորբի և խրոնիկական պարօղնությունի առաջացմանը: Ատամների պսակային հատվածի ախտահարումները շատ հաճախ ուղեկցվում են ցավով (քերմային կամ մեխանիկական գրգիչների հետևանքով), որի արդյունքում հիվանդն ախտահարված կողմով չի կարողանում ծանել: Հետևաբար այդ ցրջանում հավաքվում են

ատամնաքարեր և առաջանում է լնդաբորբ: Օկյուգիոն մակերեսների ախտահարումների ժամանակ իջնում է ծամողական արդյունավետությունը: Ատամների պսակային հատվածի մասնակի արատները շատ հաճախ վերականգնվում են ատամնալիցքի նյութերի միջոցով, սակայն ավելի ճիշտ է դրանք վերականգնել ներդիրներով, քանի որ դրանք ավելի ամուր են և ունեն նվազագույն նստեցում: Յիշանդի հետազոտումը և ցուցումների վերահավաստումը անց են կացվում ընդունված կարգով և հետազոտման հատուկ ձևերով: Ոենտգենով որոշում են ատամի և հարատամնային հյուսվածքների վիճակը: Գիպսե ախտորոշիչ մոդելների օգնությամբ ճշտում ենք իիվանդի կծվածքի առանձնահատկությունները, ինչպես նաև տվյալ ատամի և հակազդիչների փոխհարաբերությունները:

Ատամի խոռոչի ձևավորումը կարևոր փուլ է, որի ընթացքում պետք է հաշվի առնել ատամի կարծր հյուսվածքների կառուցվածքը, հաստությունը և անվտանգության գոտիները (կենսունակ ատամների դեպքում): Ատամի պսակային հատվածի խոռոչի ձևավորումն անհրաժեշտ է կատարել այնպես, որ ստեղծվեն ներդիրի ամրացման, ծամողական ճնշման բաշխման համար օպտիմալ պայմաններ և, որ ամենակարևորն է, ներդիրը չունենա բացասական ազդեցություն առողջ հյուսվածքների վրա (Ծկ. 3.1.1.): Ատամի պսակային հատվածի խոռոչի ձևավորումը ենթարկվում է ծամողական ճնշման բաշխման օրենքներին, որոնց համաձայն անհրաժեշտ է հետևել ստորև բերվող սկզբունքներին.


1. ուղղաձիգ պատերը պետք է զուգահեռ լինեն միմյանց և միայն աննշան չափով տարամիտվեն խոռոչի մուտքի շրջանում:

2. ուղղաձիգ պատերը պետք է փոխուղղահայաց լինեն հատակի նկատմամբ:

3. ձևավորված խոռոչի հատակը պետք է զուգահեռ լինի կակղանի խոռոչի առաստաղին:

4. ներդիրի տեղաշարժը կանխելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել ռետենցիոն լրացուցիչ խոռոչներ:

5. մետաղական ներդիրների կիա և ամուր տեղադրման համար հարկավոր է ստեղծել ֆալց:



Նկ. 3.1.1. Ատամների հղկումը ներդիր պատրաստելու համար:

Խոռոչը ձևավորելուց հետո այն լվացվում է, և սկսվում է ներդիրի ձևավորումը:

### **Ներդիրների ձևավորումը մոմով**

Այս փուլը նախաձեռնում են խոռոչի ձևավորումից հետո: Ներդիրի ձևավորման նպատակով օգտագործվում է մոմ կամ կերպառու: Մոմը տաքացվում է կրակի վրա կամ տաք ջրի մեջ, որից հետո ճնշմաբ տեղադրվում է մշակված խոռոչի մեջ: Մոմի ավելցուկները հեռացվում են, որից հետո ձևավորվում է օկլյուզիոն մակերեսը: Զևավորված մոմե ներդիրը հեռացվում է խոռոչից մեկ կամ մի քանի բարակ գամիկների միջոցով:

Տարբերում են ներդիրների պատրաստման 2 մեթոդ՝ ուղղակի և անուղղակի:

#### **Ուղղակի մեթոդ**

Զևավորված խոռոչի մեջ լցվում է տաքացված մոմը, այնուհետև ձևավորվում են բոլոր մակերեսները տվյալ ատամին համապատասխան: Ծամողական մակերեսը ձևավորելու ժամանակ հիվանդը ատամները հպում է իրար, սառը ջրով մոմը

սառեցվում է և դուրս բերվում բերանից: Լաբորատորիայում մոնը փոխարինվում է համապատասխան նյութով և մշակվում է: Պատրաստված ներդիրի պատերը պետք է սերտորեն հպվեն ատամի պատերին, որպեսզի հետագայում ատամի և ներդիրի միջև ճեղք չառաջանա:


#### **Անուղղակի մեթոդ**

Այս մեթոդը տարբերվում է ուղղակի մեթոդից նրանով, որ ներդիրի պատրաստման ամբողջ ընթացքը սկսած նրա մոնով ձևավորումից, կատարվում է լաբորատորիայում: Դրոշմը կարելի է ստանալ ինչպես մեկ, այնպես էլ Երկու փուլերով: Առաջին դեպքում նախ դրոշմագդալը լցվում է հիմնական շերտով, հետո ատամի ձևավորված խոռոչը ներարկիչի օգնությամբ լցվում է ճշգրտող շերտով, այնուհետև դրոշմագդալը արագորեն (ոչ ուշ քան 40 վկն) տեղադրվում է բերանի խոռոչի մեջ: Երկրորդ դեպքում սկզբում ստացվում է դրոշմ սիլիկոնային առաջին շերտով: Այնուհետև հեռացվում են ներքնափոսերը և ստացվում է դրոշմ նույն դրոշմագդալով սիլիկոնային երկրորդ ճշգրտող շերտով: Երկրորդ շերտը ներարկիչի օգնությամբ ներմուծվում է ներդիրի խոռոչի մեջ և սիլիկոնային առաջին շերտով լցված դրոշմագդալի մեջ, որը հետո տեղադրվում է բերանի խոռոչի մեջ: Երկու դեպքերում էլ 2-3 րոպե անց դրոշմը հեռացվում է: Այնուհետև, դրոշմից ստացվում է գիպսե տիպար, ապա տիպարի վրա մոմից ձևավորվում է ներդիրը: Մոմե ներդիրը փոխարինվում է համապատասխան նյութով, որը հարմարեցվում և մշակվում է սկզբում գիպսե տիպարի վրա, հետո՝ բերանի խոռոչում: Պատրաստի ներդիրը ֆիքսվում է ցեմենտով:

Մետաղական ներդիրները ձուլում են ստոմատոլոգիայում կիրառվող տարբեր համաձուլվածքներից: Նախընտրելի են թանկարժեք մետաղների համաձուլվածքները: Պատրաստի ներդիրի փորձարկման ժամանակ անհրաժեշտ է ապահովել

խոռոչի բոլոր պատերին ներդիրի հավասարաչափ հպումը և արտիկուլյացիայի բոլոր փուլերում հակադիր ատամի հետ ճշգրիտ փոխհարաբերությունը: Ներդիրն ամրացվում է ցեմենտով՝ պահպանելով ընդունված բոլոր կանոնները:

Վերջին տարիներին ատամի կարծր հյուսվածքների վերականգնման համար լայնորեն կիրառվում են հախճապակին (նկ.3.1.2.) և մետաղ-կերամիկան, քանի որ դրանք մյուսների համեմատությամբ ունեն գեղագիտական ավելի բարձր արժեք:



Նկ. 3.1.2. Հախճապակու շերտավոր տարածումը տիպարի վրա:  
**Ներդիրների պատրաստումը արդյունաբերական ճենապակյա զանգվածներից համակարգչային մեթոդով – CAD / CAM**

Դղյակած ատամի խոռոչը հետազոտվում է համակարգչի օգնությամբ, որը փոխանցում է արտապատկերը մոնիթորի վրա: Այնուհետև բժիշկը ծրագրավորում է ապագա ներդիրը և նրա սահմանային գծերը: Հետո հատուկ ֆրեզավորող սարքի օգնությամբ նախապես պատրաստված արդյունաբերական ճենապակուց հղկվում է ներդիրը: Պատրաստի ներդիրը փորձարկվում է բերանի խոռոչում, ապա վերջնական մշակվում, և ֆիքսվում կոմպոզիտային ցեմենտի օգնությամբ:

### **3.2. Երեսպատիչներ**

Երեսպատիչները տարբեր նյութերից պատրաստված բարակ շերտավոր միկրոպրոցեզներ են, որոնք տեղադրվում և անրացվում են ատամների վեստիբուլյար մակերեսին:

Երեսպատիչները հիմնականում կատարում են երկու ֆունկցիա՝ գեղագիտական և պաշտպանողական:

Երեսպատիչները դասակարգվում են ըստ՝

**1. բաղադրության**

Լինում են ակրիլային, որոնք պատրաստվում են գործարանային պայմաններում, հախճապակյա և կոնպոզիտային, որոնք պատրաստվում են անհատական մեթոդով լաբորատորիայում:

**2. օգտագործման ժամկետի**

Լինում են ժամանակավոր և մշտական:

**3. պատրաստման բնույթի**

Լինում են առանց ատամների հղկման (երբ ատամներն ունեն քմային թեքություն) և ատամների կարծր հյուսվածքների հղկումով։ Այս դեպքում ատամները հղկվում են ախտահարված հյուսվածքները հեռացնելու, ինչպես նաև ատամի հյուսվածքները երեսպատիչի հետ ամուր միացնելու նպատակով՝ ստեղծելով տեղ երեսպատման համար։

Երեսպատիչները կարող են նաև պատրաստվել ուղղակի և անուղղակի եղանակներով։ Առաջինի դեպքում դրանք պատրաստվում են բերանի խոռոչում՝ կոմպոզիտային պլոնքանյութով, երկրորդի դեպքում՝ լաբորատորիայում։

Երեսպատիչները օժտված են իդեալական գեղագիտական հատկություններով, հատկապես հախճապակյա երեսպատիչները, քանի որ նրանք շատ կայուն են գունավորման ինաստով և չեն մաշվում։ Երեսպատիչները ունեն առավելություն արհեստական պսակների նկատմամբ, քանի որ հեռացվում է

ավելի քիչ քանակությամբ ատամի կարծր հյուսվածքներ և նրանց վզիկային հատվածը չի պահանջում ներլնդային տեղադրում, ինչի հետևանքով հաջողվում է չվճասել պարօդնտի առողջ հյուսվածքները: Դրանք ունեն նաև թերություններ՝ հնարավոր չեն ամրացնել ժամանակավորապես, և հարկ եղած դեպքում կարելի է միայն հեռացնել և փոխարինել նոր երեսպատիշներով կամ արհեստական պսակներով:

*Երեսպատիշների ցուցումներն են՝*

1. գումափոխված ատամները,
2. ատամների պսակային հատվածի կոտրվածքները,
3. ատամների քայրայումը,
4. հաճախորդի ցանկությունը,
5. դիաստեմաներն ու տրեմաները,
6. ատամների դիրքի ճշգրտումը:

*Երեսպատիշների հակացուցումներն են՝*

1. բրուքսիզմը,
2. բերանի խոռոչի վատ հիգիենան,
3. խիստ ախտահարված ատամները,
4. խորը կծվածքը:

Ատամների հղկումը կատարվում է տեղային անզգայացնամբ: Մինչ հղկումը սկսելը ցանկալի է կատարել լնոի ռետրակցիա, հետագա աշխատանքը հեշտացնելու համար:

Ատամների հղկումը կատարվում է հերթականությամբ՝ սկզբում ստեղծվում են 0,5մմ խորությամբ ակոսներ հարկոնտակտային հատվածների և վզիկային գոտու հատվածում (նկ.3.2.1.): Այս ակոսները հատուկ սահմանագծեր են էմալը վեստիբուլյար մակերեսից հեռացնելու համար: Էմալը 0,6մմ հաստությամբ հավասարաչափ հեռացվում է ամբողջ նախատեսված մակերեսից ալմաստե հատուկ բորերի օգնությամբ: Անուհետև հղկում է

կտրող եզրը մի փոքր թեքությամբ 0,5-1մմ խորությամբ (ստեղծվում է ֆալց):



Նկ.3.2.1. Ատամների հղկումը բորերի օգնությամբ:

Տարբերում են Երեսպատիչների պատրաստման Երկու եղանակ՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի մեթոդի դեպքում Երեսպատիչը պատրաստվում է հղկված ատամի վրա, իսկ անուղղակիի դեպքում՝ գիպսե տիպարի վրա:

#### **Ուղղակի մեթոդ**

Երեսպատիչների պատրաստման ուղղակի մեթոդի ժամանակ ընտրվում է հատուկ մատրիքս, որը անջատում է պրոթեզավորվող ատամը հարակից ատամներից և լորեզրից, այնուհետև ատամը մշակվում է օրթոֆոսֆորական թթվով, լվացվում է ջրով և չորացվում օդով: Նախատեսված նակերեսի վրա հերթականությամբ քսվում է աղիեզիվ նյութը և կոմպոզիտային նյութը՝ պոլիմերիզացիայի ենթարկվելով լամպի օգնությամբ: Այնուհետև մատրիքսը հեռացվում է, որից հետո Երեսպատիչը փայլեցվում է հատուկ ռետինե գլխիկներով և խոզանակներով:

#### **Անուղղակի մեթոդ**

Անուղղակի մեթոդով կարելի է պատրաստել Երեսպատիչներ կոմպոզիտային նյութերից և հախճապակուց:

Անուղղակի եղանակով կոմպոզիտային Երեսպատիչների պատրաստման փուլերն են՝

- ատամների հղկումը,
- հիմնական և օժանդակ դրոշմների ստացումը երկու ծնոտներից,
- տիպարի վրա երեսպատիչի շերտավոր մոդելավորումը,
- պատրաստի երեսպատիչի փորձարկումը բերանի խռոչում և դրա ամրացումը:

Հախճապակուց երեսպատիչները պատրաստելիս ատամների կարծիք հյուսվածքները հղկվում են նույն հերթականությամբ, սակայն հեռացվում է էնալի ավելի հաստ շերտ: Այնուհետև ստացվում են դրոշմներ երկու ծնոտներից, որոնցից պատրաստվում են սուպերգիպսե տիպարներ (Նկ. 3.2.2.): Հայտնի է հախճապակյա երեսպատիչների պատրաստման երկու համազոր եղանակ՝

1. սուպերգիպսե տիպարի վրա տեղադրվում է 0,025մմ պլատինե թիթեղ, որի վրա քսվում է շերտավոր հախճապակի, թրծվում է և ջնարակվում,

2. օգտագործվում են երկու իրակայուն տիպարներ՝ մեկի վրա քսվում և թրծվում է հախճապակու դենտինային և էնալային շերտը, իսկ մյուսի վրա կատարվում է ջնարակում (փայլուն շերտ):



Նկ. 3.2.2. Պատրաստի երեսպատիչները Ա. տիպարի վրա,  
Բ. բերանի խռոչում:

Պատրաստի Երևապատիշները ամրացվում են բերանի խոռոչում տարբեր աղիեզիվ նյութերի օգնությամբ:

**Գրականության ցանկ**

1. Аболмасов Н.Г., Аболмасов Н.Н., Бычков В.А., Аль-Хаким А., Ортопедическая стоматология. Москва,"МЕДпресс-информ", 2005.
2. Трезубов В.Н., Щербаков А.С., Мишинев Л.М.. Ортопедическая стоматология. Санкт-Петербург, СпецЛит, 2003.
3. Шмидседер Дж.. Под редакцией Виноградовой Т.Ф.. Эстетическая стоматология. Москва. "МЕДпресс-информ", 2004.
4. Жулев Е.Н.. Металлокерамические протезы. Н.Новгород, НГМА, 2005.
5. McLean JW. The Science and Art of Dental Ceramics. Quintessence, Chicago, 1979.
6. Shillingburg TH et al.. Fundamentals of Fixed Prosthodontics. Quintessence Publishing Co., Inc., Chicago, Illinois. Third Edition. 1987.

### 3.3. Թեստեր

- 1. Ներդիրների պատրաստման հակացուցումներն են՝**
  - 1) ատամի պսակի մեջ դեֆեկտ
  - 2) թույլ և կարճ ատամներ
  - 3) որոշ դեպքերում դիրքափոխված ատամներ, երբ ներդիրը ընդունում է մեծ ճնշում
  - 4) մեծ կօղղական ճնշում
    - ա) 1,2,3      բ) 1,2,4      գ) 2,3      դ) 1,2,3,4
- 2. Ուղղակի մեթոդով ներդիրների պատրաստման թերություններն են՝**
  - ա) բժշկից ավելի քիչ ժամանակ է խլում
  - բ) հիվանդից ավելի քիչ ժամանակ է խլում
  - գ) մեծ անճշտությունների առաջացման հավանականությունը
  - դ) ճնշումը կարող է բերել կլոր կապանի վնասմանը
- 3. Ներդիրների պատրաստման ցուցումներն են՝**
  - 1) արտաքիված, ամուր և միջին երկարություն ունեցող ատամները
  - 2) ծամողական ճնշումը պետք է լինի մինիմալ
  - 3) ճիշտ դիրք ունեցող ատամներ
- 4. Ներդիրները ունեն հետևյալ առավելությունները կոմպոզիտային պլոմբանյութերի նկատմամբ՝**
  - ա) ավելի քիչ ժամանակ են խլում բժշկից և ատամնատեխնիկից
  - բ) ավելի քիչ նյութ են պահանջում
  - գ) ճշգրիտ վերականգնում են ատամի անատոմիական ձևը և օկյուլար մակերեսը, չունեն նստեցում
  - դ) շուտ մաշվում են
- 5. Ներդիրները ցուցված են, երբ ատամի օկյուլար մակերեսը քայլայված է՝**
  - ա) 5–40%      բ) 50–60%      գ) 10–30%      դ) ճիշտ պատասխան չկա
- 6. Ներդիրները կարող են պատրաստված լինել հետևյալ նյութերից՝**
  - 1) մետաղներից
  - 2) հախճապակուց
  - 3) կոմպոզիտներից
- 7. Ներդիրների պատրաստման որ մեթոդի ժամանակ է մոմենտ ներդիրը պատրաստվում լաբորատորիայում՝**
  - ա) ուղղակի
  - բ) անուղղակի
  - գ) կոմբինացված

**8. Ներդիրների պատրաստման ուղղակի մեթոդ՝**

- ա) ավելի արագ է, քան անուղղակին
- բ) ավելի երկարատև է, քան անուղղակին
- գ) ավելի ճշգրիտ է, քան անուղղակին
- դ) ավելի թանկ է, քան անուղղակին
- ե) ճիշտ պատասխան չկա

**9. Ներդիրները պատրաստվում են, երբ ատամների օկվուզիոն մակերեսը քայլայված է՝**

- ա) մինչև 10 %                  բ) 10 – 30 %
- գ) 30- 80 %                  դ) ճիշտ պատասխան չկա

**10. Ներդիրները կարող են պատրաստված լինել՝**

- 1) հախճապակուց
- 2) ուկուց
- 3) կոմպոզիտներից
- ա) 1,2,3                  բ) 1,2                  գ) 2,3                  դ) 1,3

**Պատասխաններ**

- |       |        |
|-------|--------|
| 1 - դ | 6 - ա  |
| 2 - գ | 7 - բ  |
| 3 - ա | 8 - ա  |
| 4 - գ | 9 - դ  |
| 5 - բ | 10 - ա |

## **ԳԼՈՒԽ 4**

**ԳԱՄԻԿԱՎՈՐ ՆԵՐԴԻԲՆԵՐԻ  
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՏՎԱՄՆԵՐԻ  
ՊՍԱԿՆԵՐԻ ԱՐԱՏՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ**

**դոց. Մ.Վ. Հարությունյան,  
Ա.Լ. Վարդանյան**


### ***Նախաբան***

Այս բաժնում նկարագրված են գամիկավոր ծայրատային ներդիրների կիրառման ցուցումները և հակացուցումները, ինչպես նաև նրանց տարատեսակները և օգտագործման ոլորտը: Ներկայումս ունեցած գամիկավոր ծայրատային ներդիրների լայն ընտրանին հեշտացնում է ճշգրիտ բուժման ծրագրի ընտրումը և ապահովում է բարձրորակ և արդյունավետ պրոբեզմավորում:

#### **4.1. Զուլածո գամիկավոր ներդիրների օգտագործումը ատամների պսակների արատների ժամանակ**

Ատամների պսակների 80%-ից բարձր քայքայվածության դեպքում, երբ հնարավոր չէ դրանք վերականգնել պլոնբանյութերով, ներդիրներով, պսակներով կամ կիսապսակներով, օգտագործվում են գամիկավոր ատամների տարբեր կոնստրուկցիաներ: Այդ նպատակով կիրառվում են ձուլածո ծայրատային գամիկավոր ներդիրներ երեսպատող կոնստրուկցիաներով: Վերջիններս կարող են լինել մետաղական, մետաղապլաստմասսե և մետաղ-կերամիկական պսակներ, ինչպես նաև, ձուլածո ծայրատային գամիկավոր ներդիրները կարող են օգտագործվել որպես հեճակետ կամդշաճև արորթեզմերի համար: Հախճապակյա պսակների պատրաստման համար այժմ օգտագործվում են ոչ մետաղական գամիկավոր կոնստրուկցիաներ՝ ապակեթելի կամ ցիրկոնիումի օքսիդի հենքի վրա, որոնք բավական ամուր են, բայց և ունեն բնական ատամին նման լուսաթափականցում: Կոնստրուկցիաները, որոնք բարկացած են երկու ինքնուրույն մասերից՝ ձուլածո ծայրատային գամիկավոր ներդիրից և նրան ծածկող պսակից, ունեն մի շարք առավելություններ անցյալում կիրառվող գամիկավոր ատամների հանդեպ (նկ. 4.1.1.Ա,Բ):

Ծայրատային գամիկի երկու մասերը (գամիկը և վերլնդային ծայրատը) միաձուլված են, քանի որ ձուլվում են միաժամանակ: Անհրաժեշտության դեպքում վերածածկող կոնստրուկցիան կարելի է փոխել՝ առանց գամիկավոր ներդիրի հեռացման:



Նկ. 4.1.1. Գամիկավոր ներդիրի և նրան ծածկող պսակի կիրառումը կենտրոնական կտրիչի (Ա) և նախաաղորիքի դեպքում (Բ):

#### **Գամիկավոր ատամների ձևերը**

Դայտնի են գամիկավոր ատամների զանազան կոնստրուկցիաներ: Յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները և տարբերվում է իր պատրաստման մեթոդով: Ամենահայտնիներից են հետևյալ գամիկավոր ատամները (որոնց մեջ մասը, սակայն, այժմ չի կիրառվում ոչ պրակտիկ լինելու, ինչպես նաև այլ թերությունների պատճառով):


- 1) ըստ Ոիչմոնդի՝ մամլված գլխիկով
- 2) ըստ Կատցի՝ վերարմատային պահպանիչով և կիսաօղակով
- 3) ըստ Շարգորոդսկու՝ չժանգոտվող պողպատյա օղակից և հախճապակյա կամ կերպառու նյութից վերածածկիչից
- 4) ըստ Դեվիսի՝ գամիկ և հախճապակյա պսակ
- 5) ըստ Լոգանի՝ միաձույլ հախճապակյա պսակ և գամիկ
- 6) ըստ Դյուվելի՝ հախճապակյա ատամ հատուկ գամիկով

- 7) ըստ Պարշինի՝ մետաղական օղակ, գամիկ և հղկված ստանդարտ պլաստմասսե ատամ
- 8) ըստ Շիրակոյի՝ ստանդարտ պլաստմասսե ատամ և գամիկ
- 9) ըստ Իլինա-Մարկոսյանի՝ հենակետային մասով, որը իրենից ներկայացնում է ձուլածո կուբածև ներդիր
- 10) ըստ Կոպեյկինի՝ ծայրատային գամիկավոր ներդիր, որը կարելի է երեսպատել ցանկացած տեսակի պսակով

Այժմ, պրակտիկ և ամուր լինելու պատճառով, հիմնականում օգտագործվում է վերջին տարբերակը իր ձևափոխումներով:

#### **Զուլածո գամիկավոր ներդիրների օգտագործման ցուցումները**

- 1) բնական ատամների պսակների չափազանց (80%-ից բարձր) քայլայվածությունը կարիեսի ժամանակ, երբ հնարավոր չէ այն վերականգնել պլոմբանյութերով, ներդիրներով, պսակներով և կիսապսակներով (Ակ. 4.1.2 Ա, Բ, Գ)



Ակ. 4.1.2 Կտրիչի (Ա), նախապղորիքի (Բ) և աղորիքի (Գ) զգալի ախտահարումը հանդիսանում է ցուցում գամիկավոր ներդիրով վերականգնման համար

- 2) պսակի մեջի մասի կոտրվածքը (վնասվածքների ժամանակ)
- 3) ատամների կարծր հյուսվածքների արտահայտված ախտաբանական մաշվածությունը (1/2-ից ավելի դեպքում)

4) առջևի ատամների զարգացման և դիրքի անոնականեր, որոնք չեն ուղղվում օրբողոնտիկ կամ այլ թերապևտիկ և օրբողեդիկ մեթոդներով:

#### **Դակացուցումները**

- 1) ախտաբանական փոփոխություններ շուրջգագաթային հյուսվածքներում
- 2) ատամների արմատների ախտաբանական շարժունակություն
- 3) արմատախողովակների անանցանելիություն
- 4) շատ կարճ և թեք արմատներ
- 5) չափազանց բարակ պատերով արմատներ

### **Ծայրատային գամիկավոր ներդիրների պատրաստման**

#### **Կլինիկական փուլերը**

1. Հիվանդի հետազոտումը և նախապատրաստումը պրոթեզավորմանը
2. Ատամի ծայրատի հղկումը և արմատախողովակի նախապատրաստումը
3. Զուլածության գամիկավոր ներդիրի ձևավորումը
4. Զուլածության գամիկավոր ներդիրի փորձարկումը և ամրացումը արմատախողովակի մեջ
5. Վերածածկող կոնստրուկցիայի պատրաստումը և ամրացումը:

#### **Հիվանդի հետազոտումը և նախապատրաստումը**

##### **Արորթեզավորմանը**

Հիվանդի հետազոտումը կատարվում է համընդհանուր մեթոդներով՝ օգտագործելով հետազոտման ընդհանուր կլինիկական, ինչպես նաև պարակլինիկական մեթոդները. զննում,

պերկուսիա, պալպացիա, լնդագրպանիկների զոնդավորում, ռենտգեն ախտորոշում և այլն:

Ռենտգեն ախտորոշման օգնությամբ որոշվում է վերին և ստորին ծնոտների ատամնաշարերի վիճակը, ատամների չափսերը և ուղղությունները, առանձին ատամների պարօդոնտի, շուրջգագաթաբային հյուսվածքների վիճակը, ատամի խոռոչի չափսը և ձևը, արմատախողովակների թեքվածությունը, լիցքավորման որակը:

Հետազոտման ժամանակ և պրոբեզի կոնստրուկցիայի ընտրության ժամանակ ցանկալի է ուսումնասիրել ախտորոշիչ գիպսե տիպարները, որոնց վրա կարելի է ճշտել հիվանդի կծվածքի առանձնահատկությունները, հենակետային ատամների և նրանց հակադիր ատամների փոխհարաբերությունները ստորին ծնոտի ուղղահայաց, սագիտալ և տրամսվերզալ շարժումների ժամանակ: Բերանի խոռոչի նախապատրաստումը պրոթեզավորմանը ներառում է թերապևտիկ, վիրաբուժական և օրթոպեդիկ միջամտություններ, որոնք անցկացվում են համապատասխան ցուցումներով:

Վիրաբուժական նախապատրաստումը ներառում է թերառի խոռոչի սանացիան, այն ցուցված է կատարել նաև ատամի խորը քայլայման դեպքում (լնդի մակարդակից ներքև), երբ փափուկ հյուսվածքները վերածածկում են ատամի արմատը: Այս դեպքում կատարվում է տեղային ռենտգեն հետազոտում և որոշվում է, արդյոք կարելի է ատամը պահպանել և հետագայում օգտագործել պրոթեզավորման համար: Պարօդոնտի հյուսվածքներում փոփոխությունների բացակայության դեպքում, կայուն ու մեծ արմատի և արմատախողովակի անցանելիության դեպքում վիրաբուժական մեթոդով մերկացվում է ատամի ծայրատը, այսինքն կատարվում է ատամի կլինիկական պսակի երկա-

րացման վիրահատություն, որից 1.5-2 ամիս հետո նոր կարելի է սկսել գամիկավոր ներդիրի պատրաստումը:

Օրբուզեղիկ նախապատրաստումը ներառում է կծվածքի խախտումների և ատամնաշարերի դեֆորմացիաների ուղղումը, կծվածքի բարձրացումը, ծամիչ մկանների ֆունկցիայի ուղղումը:

Զուլածո ծայրատային գամիկավոր ներդիրի պատրաստումից առաջ, եթե նախկինում արմատալիցքը լիարժեք կատարված չի եղել, անհրաժեշտ է այն կատարել առնվազն արմատի գագաթային 1/3-ի հատվածում: Արմատալիցքից առաջացած ցավերի անհետացումից հետո նոր ցանկալի է սկսել ձուլածո գամիկավոր ներդիրի պատրաստումը:

### **Ատամի նախապատրաստումը**

Ատամի ծայրատի նախապատրաստումը սկսվում է փափկած դենտինի հեռացումից, ատամի ծայրատի բարակ պատերի և արտացցվածքների հղկումից: Դրա համար հիմնականում օգտագործվում են ալմաստե կամ կարբիդային տարբեր տեսակի բորեր: Երկրորդային կարիեսի կանխարգելման համար, ինչպես նաև ատամի ծայրատի մակերեսի և ներդիրի ամուր միացման համար հարկավոր է հղկել բոլոր ախտահարված կարծր հյուսվածքները և ստեղծել հարթ մակերես:

Ենդոդոնտիկ գործիքների և բորերի օգնությամբ գամիկի տեղադրման խոռոչը ձևավորվում է այնպես, որ ներդիրի գամիկավոր հատվածը կազմի արմատի երկարության 1/2-ից ոչ պակաս (նկ. 4.1.3.):

Դակառակ դեպքում ձուլածո ծայրատային գամիկավոր ներդիրի ամրացումից հետո հնարավոր է բարդությունների առաջացում, օրինակ՝ արմատի կոտրվածք կամ ատամի վզիկային հատվածի կոտրվածք: Ապացուցված է, որ գամիկի օպտիմալ երկարությունը պետք է կազմի արմատի երկարության

2/3-ը: Այս դեպքում գրեթե բացառվում է ատամի արմատի կոտրվելու հավանականությունը և ներդիրի ապացեմենտավորումը:




Նկ. 4.1.3. Գործիքներ ներարմատային մշակման համար:

Արմատախողովակը կարող լայնացվել Reeso Reamer-ների օգնությամբ: Թեք, կարճ և նեղ արմատների դեպքում, հատկապես սկսնակների համար, դա ցանկալի է կատարել ռենտգեն հսկողության ներքո: Արմատախողովակի լայնացման արդյունքում պատերի հաստությունը պետք է լինի 1-1,5 մմ-ից ոչ պակաս:

Արմատախողովակի նախապատրաստման ժամանակ, գամիկի երկարությունը և հաստությունը որոշելուց հարկավոր է հաշվի առնել ատամների արմատների երկարության և պատերի հաստության միջին տվյալները տարբեր հատվածներում՝ վզիկային, միջին և գագաթային (վերոհիշյալ տվյալները կարելի են գտնել համապատասխան մասնագիտական գրականության մեջ): Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել արմատի կառուցվածքի անհատական առանձնահատկությունները, որոնք արձանագրվում են տեղային ռենտգենի օգնությամբ:

Արմատախողովակը լայնացնելուց հետո նրա ակունքի (Ելանցքի) շրջանում պետք է ստեղծել ամորտիզացնող խոռոչ (նկ.4.1.4.): Դա կարելի է անել կլոր, կոնուսաձև, ինչպես նաև այլ բորերի օգնությամբ:



Նկ. 4.1.4. Արմատախողովակի Ելանցքի շրջանում լրացուցիչ խոռոչի ստեղծում:

#### **Զուլածո ծայրատային գամիկավոր ներդիրների ծևավորումը**

Զուլածո ծայրատային գամիկավոր ներդիրները պատրաստվում են ուղղակի (ներբերանային) և անուղղակի (արտաբերանային) եղանակներով:

Ուղղակի մեթոդի ժամանակ ներդիրի ծևավորումը կատարվում է բերանի խոռոչում: Զևավորող մոմի ծողը տաքացվում է կրակայրիչի վրա և ծայրը բարակացվում է, որից հետո նի փոքր ճնշում գործադրելով՝ մոմը ներմուծվում է արմատախողովակի մեջ: Մոմի ավելորդ մասերը հեռացվում են և սկսվում է ներդիրի ծայրատային մասի ծևավորումը՝ ստեղծելով այն ծեր, որն ունի ատամը տվյալ արհեստական պսակի համար հղկելուց հետո: Մոմե կոնստրուկցիայի դուրս բերման համար կարելի է թույլ տաքացված մետաղական գամիկը, 0,5-0,6մմ տրամագծով, ներմուծել մոմի մեջտեղի հատվածից, այնուհետև սառեցնել ջրով և դուրս բերել արմատի խողովակից:

Մոմե ներդիրի դուրս բերման ժամանակ հնարավոր է մոմե գամիկի կոտրումը արմատախողովակում կամ գամիկի անջա-

տումը ներդիրից: Դրա պատճառ կարող է հանդիսանալ արմատախողվակի սխալ նախապատրաստումը, երբ առաջանում են ռետենցիոն կետեր և ներքնափոսեր: Այս խնդիրը կանխելու համար հարկավոր է ճիշտ հղկել արմատախողվակը:

Ներդիրի ձևավորումը կարելի է կատարել նաև հետևյալ կերպ. սկզբում արմատախողվակի մեջ հարմարեցվում է համապատասխան չափսի կերպառու նյութից պատրաստված ստանդարտ գամիկը, իետո մի քանի անգամ այն թաթախվում է հալեցված մոմով լի անոթի մեջ՝ շերտավորելով մոմը գամիկի վրա (նկ. 4.1.5.): Գամիկը՝ պատված մոմով տեղադրվում է արմատախողվակի մեջ որոշ ճնշում գործադրելով, այնուհետև սկսվում է ներդիրի ծայրատային մասի ձևավորումը համապատասխան տվյալ ատամի հղկված ձևի: Մոմը սառեցվում է ջոռվ, գամիկավոր ներդիրը դուրս է բերվում ատամի առանցքին համապատասխան: Այս մեթոդը արագացնում է ներդիրի ձևավորման ընթացքը և բացառում է մոմե գամիկի կոտրումը նրա դուրս բերման ժամանակ:



Նկ. 4.1.5. Մոմը հալեցնող սարքը կարող է կիրառվել գամիկի արմատային մասի մողելավորման համար:

Անուղղակի մեթոդի ժամանակ մոմե ներդիրը ձևավորվում է նախապես պատրաստված գիպսե տիպարի վրա, որը ստացվում է երկշերտ դրոշմից՝ ստացված սիլիկոնային դրոշմանյութով: Դրոշմը կարելի է ստանալ ինչպես մեկ, այնպես էլ երկետապանի մեթոդներով: Մեկետապանի մեթոդի ժամանակ միաժամանակ շաղախսվում են սիլիկոնային դրոշմանյութի I-ին և II-րդ շերտերը: Առաջին շերտը դրվում է դրոշմագդալի մեջ, իսկ երկրորդ շերտը տեղադրվում է ինչպես դրոշմագդալի մեջ, I-ին շերտի վրա, այնպես էլ բերանի խոռոչում, ընդ որում ներարկիչի օգնությամբ ներմուծվում է արմատախողովակի մեջ: Առավել ճշգրիտ դրոշմ ստանալու համար, հատկապես երկար արմատախողովակների դեպքում, անհրաժեշտ է սիլիկոնային դրոշմանյութի II-րդ շերտը արմատախողովակի մեջ ներմուծելուց հետո այնտեղ տեղադրել նախապես հարմարեցված կերպառու գամիկը, և հետո նոր տեղադրել դրոշմագդալը I-ին և II-րդ շերտերով:

Երկետապանի մեթոդի ժամանակ նախապես դրոշմը ստացվում է սիլիկոնային դրոշմանյութի I-ին շերտով: Դրոշմից արմատի արտատպվածքի շրջանում հեռացվում է զանգվածի մի շերտ, ինչպես նաև հեռացվում են բոլոր ներքնափոսերը: Նախապես մշակված արմատախողովակի մեջ ներարկիչի օգնությամբ ներմուծվում է սիլիկոնային դրոշմանյութի ճշգրտող շերտը: Արմատախողովակի մեջ տեղադրվում է կերպառու նյութից պատրաստված և տվյալ ատամի արմատին նախապես հարմարեցված ստանդարտ գամիկը և ստացվում է վերջնական դրոշմը սիլիկոնային դրոշմանյութի ճշգրտող շերտով: Դրոշմից պատրաստվում է գիպսե տիպարը, որի վրա ձևավորվում է մոմե կոնստրուկցիան:

Ուղղակի կամ անուղղակի եղանակով ստացված մոմե ծայրատային գամիկավոր ներդիրը աշխատանոցում ընդունված

մերոդով փոխարինվում է մետաղականի՝ օգտագործելով տարբեր մետաղների համաձուլվածքներ:

### **Զուլածո ծայրատային գամիկավոր ներդիրի հարմարեցումը և ամրացումը**

Բնական ատամի ծայրատի և արմատախողովակի ճիշտ հղկման, ինչպես նաև ճիշտ ձուլման դեպքում ձուլված մետաղական գամիկավոր ներդիրը պետք է հեշտ ներմուծվի արմատախողովակի մեջ, կիա լինի արմատի պատերին և հերմետիկ փակի արմատի ելանցքը: Փորձարկման ընթացքում հարկավոր է մեկ անգամ ևս ուշադրություն դարձնել ներդիրի և հակադիր ատամների միջև եղած տարածությանը, որը պետք է բավարար լինի համապատասխան պսակով գամիկավոր ներդիրը ծածկելու համար: Եթե ատամը վերականգնվելու է հետագայում մետաղկերամիկական պսակով, ապա այդ տարածությունը պետք է կազմի 1,5-2նմ.: Յարկ եղած դեպքում ներդիրի ծայրատը կարելի է կրճատել: Խորը կծվածք ունեցող հիվանդների մոտ շատ դժվար է, երբեմն անհնար է ստեղծել անհրաժեշտ 1.5-2 մմ տարածությունը ներդիրի և հակադիր ատամների միջև: Այդ պատճառով այստեղ նախընտրելի է վերին ծնոտի առջևի ատամները քմային կողմից պատրաստել միայն մետաղական:

Փորձարկումից հետո ձուլածո ծայրատային գամիկավոր ներդիրը ամրացվում է արմատախողովակում ցեմենտի օգնությամբ: Այդ նպատակով արմատախողովակը լշակվում է սպիրոնվ և չորացվում օդով ու թղթե արսորբենտներով: Այնուհետև շաղախսվում է ցեմենտը և ներմուծվում արմատախողովակի մեջ: Գամիկը և ծայրատի այն մասը, որը պետք է ներմուծվի արմատախողովակի մեջ, պատվում է ցեմենտով և որոշ ծնշում գործադրելով՝ տեղադրվում արմատախողովակի մեջ, այնուհետև պահպում այնտեղ՝ սպասելով մինչ ցեմենտի պնդանալը:

Ներդիրը պետք է կիա հպվի ատամի արմատի հետ, այսինքն արմատի և պրոթեզի միջև չպետք է լինի տարածություն (նկ. 4.1.6.):




Նկ. 4.1.6. Գամիկավոր ներդիրը ցեմենտավորված բերանի խոռոչում:

Զուլածո ծայրատային գամիկավոր ներդիրի ամրացումից 24ժ. հետո կարելի է սկսել արհեստական վերածածկող կոնստրուկցիայի պատրաստումը:

**Սխալներն ու բարդությունները, որոնք առաջանում  
են ծայրատային գամիկավոր ներդիրների պատրաստման  
ընթացքում և նրանց ամրացումից հետո**

Անթույլատրելի է հղկել ատամը և արմատը պարօղոնտի արտահայտված բորբոքային հիվանդությունների ժամանակ, ինչպես նաև անորակ արմատալիցքի ժամանակ, առանց ռենտգեն հետազոտման, քանի որ հնարավոր է ախտաբանական պրոցեսի սրացում և խորացում: Ատամի հղկման ժամանակ արմատի անհարթ մակերեսի ստեղծումը կարող է դժվարեցնել նրա ամուր միացումը ներդիրի գամիկավոր մասի հետ, որը կարող է բերել գամիկի ապացեմենտավորման: Արմատախողովակի պատերի բարակեցումը, ինչպես նաև շատ կարճ և

հաստ գամիկի առկայությունը կարող է նպաստել արմատի կոտրվածքին (նկ. 4.1.7.):



Նկ. 4.1.7. Արմատի պատի կոտրվածք հաստ և կարծ գամիկի արդյունքում:

Մոմե ներդիրի ձևավորման և նրա արտաքերման ժամանակ կարող է առաջանալ մոնի դեֆորմացիա, իսկ ձուլման ընթացքում կարող է տեղի ունենալ մետաղի կրծատում, ինչի հետևանքով հնարավոր չի լինում ներդիրը հարմարեցնել արմատի ծայրատին:

Այս բոլոր բարդությունների կանխարգելման նպատակով հարկավոր է խիստ հետևել ցուցումներին ձուլածո ծայրատային գամիկավոր ներդիրներ պատրաստելու ժամանակ:

#### **Գրականության ցանկ**

1. Абомасов Н.Г., Абомасов Н.Н., Бычков В.А., Аль-Хаким А.. Ортопедическая стоматология. Москва,"МЕДпресс-информ", 2005.
2. Копейкин В.Н.. Руководство по ортопедической стоматологии. Издательство "Триада-Х", Москва, 2004.

#### **4.2. Թեստեր**

- 1. Թվարկված ո՞ր համաձուլվածքներից կարելի է պատրաստել ծովածոն ծայրատային գամիկավոր ներդիր.**
  1. քրոմ-կոբալտի
  2. քրոմ-միկելի
  3. ոսկի-պլատինի
  - ա) 1.2.
  - բ) 2.3.
  - գ) 1.3.
  - դ) 1.2.3.
- 2. Գամիկ պատրաստելիս արմատի երկարությունը ալվեոյար ելումի մեջ պետք է լինի՝**
  - ա) նեկուկես անգամ պսակից ավել
  - բ) երեք քարորդով պսակից ավել
  - գ) պսակից քիչ
  - դ) նույն երկարություն ինչ որ պսակը
  - ե) վերոհիշյալներից ոչ մեկը
- 3. Գամիկ պատրաստելու համար պետք է ուշադրություն դարձնել**
  - ա) ատամի պսակային հատվածի կոտրվածքի գծին
  - բ) այլ սոմատիկ հիվանդությունների առկայությանը
  - գ) հիվանդի ազգային պատկանելիությանը
  - դ) հիվանդի տարիքին
  - ե) ոչ մեկը
- 4. Որ արմատներն են ծառայում որպես հիմնական հենարան ստորին ծնոտի բազմարմատանի ատամներում գամիկ պատրաստելու համար՝**
  - ա) դիստալ արմատը
  - բ) թշային միջային արմատը
  - գ) լեզվային արմատը
  - դ) բոլոր արմատներն էլ կարող են ծառայել
  - ե) թշային առաջային և հետին արմատները
- 5. Ատամի պսակի կոտրվածքը լնդի մակարդակին հավասար համարվում է ցուցում պրոթեզավորման՝**
  - ա) արհեստական պսակով
  - բ) ներդիրով
  - գ) կամրջածև պրոթեզով
  - դ) գամիկավոր կոնստրուկցիայով
- 6. Գամիկավոր ներդիրների օգտագործման ցուցումները հետևյալն են՝**
  - ա) ատամների պսակային հատվածի չափազանց քայլավածություն
  - բ) ատամների վնասվածքային ախտահարումներ
  - գ) զգալի ախտաբանական մաշվածություն

դ) ատամների դիրքային և զարգացման անոնալիաներ  
Ե) բոլորը միասին

7. Ատամների որ աստիճանի շարժունակության դեպքում ատամը չի կարող օգտագործվել գամիկավոր ներդիր պատրաստելու համար՝  
ա) I աստիճան                                  բ) II աստիճան  
գ) III աստիճան                                  դ) ա, բ    Ե) բ, գ

8. Դետևյալ որ ձևի ատամի կոտրվածքն է հանդիսանում բացարձակ հակացուցում գամիկավոր ներդիրներ պատրաստելիս՝  
ա) հրոհզոնական կոտրվածք  
բ) ուղղահայաց կոտրվածք  
գ) թեք կոտրվածք

9. Գամիկավոր ներդիրներ պատրաստելիս արմատախողովակը լցվում է պլոմբանյութով առնվազն.  
ա) անբողջությամբ  
բ) 1/5-ի չափով  
գ) 1/3-ի չափով  
դ) 4/5-ի չափով

10. Ինչպիսի բարդություններ կարող են առաջանալ գամիկավոր ներդիրներ պատրաստելուց հետո՝  
ա) ատամի կոտրվածք  
բ) ապացեմենտավորում  
գ) ատամի թափածակում  
դ) ա, բ, գ  
Ե) ա, բ

#### Պատասխաններ

- |      |       |
|------|-------|
| 1. դ | 6. Ե  |
| 2. ա | 7. Ե  |
| 3. ա | 8. բ  |
| 4. ա | 9. գ  |
| 5. դ | 10. Ե |

## ԳԼՈՒԽ 5

### ԱՏՎԱՆԵՐԻ ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՄԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Ս.Ռ. Հովհաննիսյան, Կ.Ա. Մաշինյան

#### *Նախարամ*

Մարդու ատամները իրականացնում են սննդի առաջնային մեխանիկական մշակում: Ատամների հյուսվածքների մորֆոլոգիական առանձնահատկությունները պայմանավորված են կատարած ֆունկցիայով: Դրանց պսակային հատվածը ծածկված է էմալով՝ որն ամենաբարձր մեխանիկական հատկությամբ է օժտված մարդու օրգանիզմում: Դիմակայելով ծամողական ակտի ժամանակ առաջացող մեծ ճնշմանը և հարվածի կամ հղկման տեսքով ծանրաբեռնվածությանը, էմալը միաժամանակ օժտված է զգալի փիսրունությամբ, որի հետևանքով առաջանում է էմալի մաշվածություն կամ կոտրվածք և մերկանում է դեմտինը:

## 5.1. Ատամների ախտաբանական մաշվածություն

Ատամների կարծր հյուսվածքների արատները բաժանվուն են երկու խմբի.

- կարիեսային
- ոչ կարիեսային

Ոչ կարիեսային ախտահարումները իրենց հերթին լինուն են.

- ֆոլիկուլյար զարգացման ընթացքուն առաջացող
- ատամների ծկթումից հետո առաջացող

Ախտաբանական մաշվածությունը ատամների ոչ կարիեսային ախտահարում է, որն առաջանում է ատամների ծկթումից հետո:

Մարդու կյանքի ընթացքուն տեղի է ունենուն ատամի էմալի և դենտինի կորուստ, որը սկսվուն է անմիջապես ատամի ծկթումից հետո: Այս պրոցեսը կոչվուն է ֆիզիոլոգիական մաշվածություն: Ատամի կարծր հյուսվածքների կորստի արտահայտվածության չափը անհատական է և կախված է՝

- կծվածքի տեսակից
- էմալի և դենտինի ամրությունից
- ծամողական ճնշման մեջությունից
- օգտագործվող սննդի տեսակից

Ատամի էմալի ֆիզիոլոգիական մաշվածությունը տեղի է ունենուն երկու ուղղություններով՝

- հորիզոնական
- ուղղահայաց

Հորիզոնական ուղղությամբ ատամների մաշվածությունը դիտվուն է կտրիչների ու ժամիքների կտրող եզրերի և նախաաղորիքների ու աղորիքների թմբիկների վրա: Այս երևութը դիտվուն է որպես օրգանիզմի հարմարողական պրոցես, քանի որ կյանքի ընթացքուն տեղի են ունենուն պարօղոնտի ոսկրային և արյունատար համակարգի փոփոխություններ, որոնք իջեցնուն

Են վերջինիս դիմացկունությունը: Ֆիզիոլոգիական մաշվածության հետևանքով փոխվում են նաև ատամների թմբիկների անկյունները, վերջիններս դառնում են ավելի տափակ: Եվ քանի որ պարօղոնտը ավելի քիչ է հարմարեցված կողմնային ծանրաբեռնվածություններին, տափակ թմբիկներով ատամները ուսկրային հյուսվածքի կորստի դեպքում չեն հասնում դեկոնպենսացված վիճակի: Այսպիսով կանխարգելվում է պարօղոնտի ֆունկցիոնալ գերծանրաբեռնվածության վտանգը:

Ուղղահայաց մաշվածությունը տեղի է ունենում ատամների կոնտակտային մակերեսներին: Տարիքի ընթացքում միջատամնային կետային կոնտակտները վերածվում են կոնտակտային մակերեսների: Թվում է թե մաշվածության այս ձևը պետք է բերի միջատամնային տարածությունների՝ տրեմաների և դիաստեմաների առաջացման, սակայն դա տեղի չի ունենում, ինչը բացատրվում է ատամների մեդիալ տեղաշարժով, հետևաբար նաև ատամնաշարի անըդհատության պահպանմամբ:

Որոշ մարդկանց մոտ ֆիզիոլոգիական մաշվածությունը բացակայում է, որը բերում է ատամի ներատամնաբնային և արտատամնաբնային փոխհարաբերության խախտման և պարօղոնտի ֆունկցիոնալ գերծանրաբեռնվածության առաջացման: Այս դեպքում հիվանդների մոտ առաջանում է տարբեր աստիճանի արտահայտված ծանողական տրավմա: Այսպիսով ֆիզիոլոգիական մաշվածությունը օրգանիզմի հարմարողական պրոցես է, որը ուղղված է ծանողական ապարատի մորֆոլոգիական և ֆունկցիոնալ ամբողջականության պահպանմանը:

Ատամների կարծիք հյուսվածքների մաշվածությունը կարող է լինել նաև ախտաբանական: Ախտաբանական մաշվածությունը հանդիսանում է ծանր և տարածված հիվանդություն, որի հաճախականությունը՝ ըստ տարբեր հետազոտությունների

արդյունքների, կազմում է 12-18%՝ քսանից վաթսուն տարեկան տարիքային խմբում և 42%՝ վաթսուն տարեկան և բարձր տարիքային խմբում:

### **Պատճառագիտությունը**

Ախտաբանական մաշվածությունը բազմապատճառային հիվանդություն է: Ըստ Ա.Ս.Շերբակովի հիվանդության առաջացման պատճառները բաժանվում են երեք խմբի:

1. Կարծր հյուսվածքների ֆունկցիոնալ անբավարարություն, պայմանավորված մորֆոլոգիական ոչ լիարժեքությամբ

2. Ատամների ֆունկցիոնալ գերծանրաբեռնվածություն

3.Մասնագիտական բնույթի ախտաբանական մաշվածություն

1. Կարծր հյուսվածքների ֆունկցիոնալ անբավարարությունը, պայմանավորված մորֆոլոգիական ոչ լիարժեքությամբ լինում է.

ա. բնածին – մոր կամ պտղի հիվանդությունների պատճառով ոչ լիարժեք ամելոգենեզ և դենտինոգենեզ:

բ. ժառանգական – Կապդեպոնի հիվանդություն, Մարմարյա հիվանդություն, չավարտված ամելոգենեզ և դենտինոգենեզ

գ. ձեռքբերովի – նեյրոդիստրոֆիկ փոփոխություններ, արյունատար, էնդոկրին և նյութափոխանակության համակարգերի խանգարումներ:

Ատամների կարծր հյուսվածքների զարգացման և ծկրման ողջ ընթացքը կարգավորվում է օրգանիզմի էնդոկրին համակարգի կողմից: Այդ համակարգի որևէ ախտաբանական շեղում կարող է բերել նեյրոհումորալ և նյութափոխանակության պրոցեսների խանգարման, հետևաբար նաև կարծր հյուսվածքների զարգացման խախտման. օրինակ՝ հարվահանագեղձը ապահովում է ծայրամասային կալցիում – կալիումական նյութափոխանակությունը, հետևաբար այս համակարգի ախտաբա-

նական խանգարումը կարող է բերել ատամների միկրոամրության նվազման: Միկրոամրությունը ատամների կայունությունն է մաշվածության հանդեպ, որը հաճախ նվազում է էմալի և դենտինի կոակալման խանգարման հետևանքով: Այդպիսի խանգարումների ժամանակ ծամողական ակտը հանդիսանում է ատամների կարծր հյուսվածքների ախտաբանական մաշվածության առաջացման պատճառ:

**2. Ատամների ֆունկցիոնալ գերծանրաբեռնվածությունը լինում է հետևյալ հիվանդությունների և վիճակների ժամանակ.**

ա. ատամների մասնակի բացակայություն

բ. պարաֆունկցիա, բրուքսիզմ

գ. ծամողական մկանների հիպերտոնուս

դ. ատամների խրոնիկական տրավմա (կոշկակարների, դերձակների, ծխամործ օգտագործող մարդկանց մոտ, վատ պատրաստված օրթոպեդիկ կոնստրուկցիաներից և այլն)

ե. ուղիղ կամ խորը կծվածք

**3. Մասնագիտական բնույթի ախտաբանական մաշվածություն – ատամի կարծր հյուսվածքների թթվային կամ հիմնային նեկրոզ:** Ատամների քիմիական նեկրոզի առաջացման է բերում էմալի և դենտինի վրա ծծմբային, ազոտական, ֆուֆորական թթուների գոլորշիների երկարատև ազդեցությունը: Քիմիական գործարաններում աշխատողների մոտ թթի թթվայնությունը նորմայից շեղվում է, որը բերում է ատամի կարծր հյուսվածքներից կալցիումի դուրս բերմանը: Ինչպես նաև լինում է սննդային բնույթի մաշվածություն՝ թթու սննդի չարաշահումից, հանքային աղերի և սպիտակուցների պակասից, ավիտամինոզից:

Այսպիսով, «ախտաբանական մաշվածություն»-ը մի տերմին է, որը իր մեջ ընդգրկում է ատամնածնոտային համակարգի տարբեր ախտաբանական վիճակներ, սակայն բոլոր դեպքերում

պաթանատոմիական բնորոշումը նույն է՝ ատամի էմալի և դենտինի արագացված կորուստ:

### **ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԱՎԱՏԼԵՐ**

Ախտաբանական մաշվածության կլինիկան բազմաբնույթ է: Հիմնական ախտանիշ հանդիսանում են ատամների պակների չափերի փոքրացումը, ատամի պսակի անատոմիական ձևի փոփոխումը, որի հետևանքով խախտվում է ծանողական ճնշման փոփառումը պարօղնութի հյուսվածքների և քունքստործնութային հոդի վրա:

Հիվանդության ընթացքում զարգանում են դիմածնոտային համակարգի հետևալ ֆունկցիոնալ և մորֆոլոգիական փոփոխություններ՝


- դիմածնոտային մկանային համակարգի տոնուսի բարձրացում և անհամաշափ կծկում
- ծանողական ակտի տևողության երկարում
- ծանողական ֆունկցիայի արդյունավետության իջեցում
- նյարդամկանային խանգարումներ
- լորձաթաղանթի տրավմատիկ ախտահարումներ
- ատամների զգայունության բարձրացում
- դեմքի ստորին 1/3-ի իջեցում
- քունք-ստործնոտային հոդի տարրերի փոխհարթերության շեղում

### **Ախտաբանական մաշվածության դասակարգումը**

Գոյություն ունեն տարբեր հեղինակների կողմից առաջարկվող բազմաթիվ դասակարգումներ: Ստորև ներկայացվում են հիմնականում կիրառվող դասակարգումները.


1. Ըստ հիվանդության տեղակայման (ըստ Գոազովսկու):

- ա. ուղղահայաց (քմային, վեստիբուլյար, կոնտակտային մակերեսներ)
- բ. հորիզոնական (ծամողական մակերեսներ, կտրող եզրեր)
- գ. խառը (ուղղահայաց և հորիզոնական)
2. Ըստ պսակի մաշվածության աստիճանի (ըստ Բուշանի՝
- ա. ատամի պսակի բարձրության 1/3-ի մաշվածություն
- բ. ատամի պսակի բարձրության 1/3 – 2/3-ի մաշվածություն
- գ. ատամի պսակի բարձրության 2/3 և ավելի մաշվածություն
3. Ըստ ընդգրկված ատամների քանակի (ըստ Կուռյանդսկու)
- ա. լոկալիզացված (մեկ կամ մի քանի ատամ)
- բ. գեներալիզացված (վերին և ստորին ատամնաշարեր)
4. Ըստ դեմքի ստորին 1/3-ի փոփոխության
- ա. կոմպենսացված (ուղեկցվում է ատամնաբնային ելունի գերածով)
- բ. դեկոմպենսացված (առանց ատամնաբնային ելունի գերածի)



Նկ. 5.1.1. Ախտաբանական մաշվածության կոմպենսացված ձև

Կոմպենսացված ձևի  
ժամանակ ատամների  
պսակների բարձրության  
իջեցումը ուղեկցվում է  
ատամնաբնային ելունի  
գերածով, որի հետևանքով  
դեմքի ստորին 1/3-ի  
փոփոխություն չի դիտվում  
(Ակ.5.1.1), պահպանվում է  
նաև քունք-ստործնոտային  
հոդում հոդագլխիկի ճիշտ  
դիրքը հոդափոսիկում:



Նկ. 5.1.2. Ախտաբանական մաշվածության դեկոմպենսացված ձև:

Դեկոմպենսացված ձևի ժամանակ ատամնաբնային ելունի գերած չի դիտվում, հետևաբար ատամների պսակների բարձրության իջեցումը չի կոմպենսացվում: Հիվանդի մոտ նկարագրվում է դեմքի ստորին 1/3-ի իջեցում (նկ.5.1.2), քրաշրթունքային և կզակային ծալքերը դառնում են ավելի արտահայտված, շրթունքները բարակում են, հիվանդի դեմքը ծեռք է բերում ծերունական տեսք:

Քունք-ստործնոտային հոդում տեղի է ունենում հոդագլխիկի դիրքի շեղում՝ ֆիզիոլոգիական հանգստի դիրքում այն տեղակայվում է հետ և ներքև: Հոդագլխիկի այս դիրքը բերում է հոդի գերծանրաբեռնվածության, ինչը կարող է պատճառ հանդիսանալ դեֆորմացնող արթրոզի առաջացնան: Հոդում առաջացող փոփոխությունները բերում են ծամողական մկանների կպման կետերի միջև եղած տարածությունների փոքրացնան և ծամողական արդյունավետության իջեցման:

### **Կծկածքի իջեցում**

Կծկածքի իջեցման պատճառ է հանդիսանում ախտաբանական մաշվածության արդյունքում ձևավորված մշտական կծկածքը: Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ կծկածքի իջեցում դիտվում է բնակչության 6%-ի մոտ (քսան տարեկան և բարձր տարիքային խմբում):

Կլինիկական պատկերը շատ բազմաբնույթ է, այն ավելի պատկերավոր ներկայացնելու համար կծվածքի իջեցման կլինիկան կարելի է դիտարկել ըստ փուլերի.

**I փուլ- ատամների պսակների մինչև 1/3-ի մաշվածություն (նկ.5.1.3.)**



Նկ. 5.1.3. Ատամների պսակների 1/3-ի ախտաբանական մաշվածություն

- դիմային փոփոխությունները աննշան են, առանձին դեպքերում կարող են դիտվել ատամների գերզգայունություն և ծամիչ մկանների հիպերտոնուս: Յիշանդի գանգատները հիմնականում էաթետիկ բնույթի են: Բերանի խոռոչի զննման ժամանակ նկատվում է ատամների պսակների մաշվածություն նրանց 1/3-ի չափով, լորձաթաղանթը նորմայի սահմաններում է, ունտգեն հետազոտության ժամանակ պարօղնություն փոփոխություններ չեն նկատվում: Վերին և ստորին կտրիչների միջև վերտիկալ ճեղքի առկայությունը հարաբերական է (կախված կծվածքի տեսակից) և չի գերազանցում 2 - 3 մմ-ը:

**II փուլ- ատամների պսակների մինչև 2/3 և ավելի մաշվածություն (նկ.5.1.4.):**



Նկ. 5.1.4. Ատամների պսակների 2/3-ի ախտաբանական մաշվածություն:

- կծվածքի հջեցման այս փուլում տեղի է ունենում օկյուզիոն բարձրության հջեցում, ատամնաբնային ելունի դեֆորմացիա:

Յիշանդրները գանգատվում են՝

1. էսթետիկ անբավարարությունից
2. դեմքի ձևի փոփոխություններից
3. ծանողական ակտի դժվարացումից
4. ատամների զգայունության բարձրացումից:

Տեղի են ունենում դեմքի «ծերունական» փոփոխություններ՝ քթաշրթային և կզակային ծալքերը ավելի արտահայտված են, բերանի անկյունները հջած, որը հաճախ ուղեկցվում է անգույար խելլիտով (կերպածք): Այն դեպքերում, երբ կծվածքի հջեցման պատճառ է հանդիսանում միայն ախտաբանական մաշվածությունը, բերանի խոռոչի գննման ժամանակ նկատվում է, որ ատամները կայուն են, սակայն նրանց ձևը բավականաշափ փոփոխված է: Յիշանդրության կլինիկական պատկերը ավելի ծանրանում է, երբ ախտաբանական մաշվածությունը զուգակցվում է կողմնային ատամների կորուստով: Այս դեպքում բերանի խոռոչի գննման ժամանակ, բացի ատամների ձևաբանական փոփոխություններից, դիտվում է նաև նրանց շարժունություն,

ատամնաբնային ելունի դեֆորմացիա, ատամնաշարերի անընդհատության խախտում, ատամների դիրքի շեղում (Պոպովգոդոնի ֆենոմեն), գերծանրաբեռնված ատամների միսրճում ատամնաբնային ելունի մեջ: Ունտգեն հետազոտության ժամանակ ոլիտվում է պերիօդնտալ ճեղքի լայնացում: Վերը նկարագրված ախտաբանական երևույթները անդրադարձում են քունքստործնոտային հոդի ֆունկցիոնալ վիճակի վրա, զարգանում է հոդի և ծամիչ համակարգի ծանր դիսֆունկցիա: Այն դեպքերում, երբ առաջանում է անհամապատասխանություն հոդի վրա ազդող ծամողական ճնշման և նրա հյուսվածքների ֆիզիոլոգիական տանելիության միջև, հաճախ զարգանում է քունք-ստործնոտային հոդի դեֆորմացնող արթրոզ: Այն ընթանում է հոդի հյուսվածքների ոչ ինֆեկցիոն, տրոֆիկ դեգեներատիվ ախտահարումներով:

Այս դեպքում հիվանդները գանգատվում են՝

1. լսողության իջեցումից
2. ականջներում աղմուկի առկայությունից
3. բերանի խոռոչում չորությունից
4. բերանի բացման և փակման ժամանակ նյարդային բնույթի ցավերից (ճառագայթվում են եռորյակ նյարդի ճյուղերի ուղղությամբ)
5. հոդում աղմուկի առկայությունից
6. բերանի բացման ժամանակ ստորին ծնոտի տեղաշարժից
7. բերանի բացման սահմանափակումից
8. մկանանյարդային համակարգի ֆունկցիոնալ խանգարումներից (պարաֆունկցիա, բրուքսիզմ):

Վերը նշված գանգատների դեպքում անհրաժեշտ է կատարել հոդի և ծամիչ մկանների պալպացիա, կարող են կատարվել նաև լրացուցիչ պարակլինիկական հետազոտություններ: Հոդի պալպացիան պետք է սկսել հոդագլխիկի կողմանից:

նային մակերեսներից, կենտրոնական օկյուլարիայի դիրքում: Այն հնարավորություն է տալիս հայտնաբերել հոդում ցավային կետերը, հոդերի անհամաշափ շարժումները: Ծամիչ մկանների պալպացիայի ժամանակ հայտնաբերվում են մկանների ցավային կետերը, նրանց կծկումների անհամաշափությունը, հիպերտոնուսը կամ տոնուսի բացակայությունը:

Այսպիսով, կծվածքի իջեցումը ծամիչ համակարգի ֆունկցիոնալ-մորֆոլոգիական շեղում է, որի ժամանակ տեղի ունեցող ախտաբանական փոփոխությունները սերտ փոխկապակցվելով միմյանց հետ ձևավորում են պարզենետիկ օղակ:

### **Օրթոպեդիկ բուժում**

Նախքան բուժման ծրագիրը կազմելը անհրաժեշտ է որոշել.

- հիվանդության առաջացման ամենահավանական պատճառները
- ախտաբանական մաշվածության ձևը՝ գեներալիզացված, թե՝ լոկալիզացված, կոմպենսացված, թե՝ դեկոմպենսացված
- ախտաբանական մաշվածության աստիճանը՝ պսակի մաշվածության չափը
- պարօպնութիւն վիճակը՝ ռենտգենոլոգիական հետազոտության միջոցով
- կակղանի վիճակը՝ էլեկտրոօդոնտոմետրիայի միջոցով
- դեմքի ստորին 1/3-ի բարձրության փոփոխությունները
- հոդում մորֆոլոգիական և անատոմիական փոփոխությունները

Օրթոպեդիկ բուժումը ունի երկու նկատառումներ.

1. պրոֆիլակտիկա
2. բուժում

Պրոֆիլակտիկան իր մեջ ներառում է՝

- ա. ատամների կարծր հյուսվածքների հետագա մաշվածության կանխարգելում

բ. քունք-ստործնոտային հոդում ախտաբանական փոփոխությունների առաջացման կանխում

Բուժումը իր մեջ ներառում է՝

ա. ատամների պսակների անատոմիական ձևի և ֆունկցիայի վերականգնում

բ. դեմքի ստորին 1/3-ի բարձրության վերականգնում

գ. ծամիչ ֆունկցիայի վերականգնում

Ախտաբանական մաշվածության բուժումը կատարվում է մի քանի փուլով.

1. հիվանդության պատճառի վերացում՝ վատ սովորութմեր, բրուժական պարագաների և այլն:

2. նախապատրաստում օրթոպեդիկ բուժման՝ դիստալ օկուզայի վերացում, միջատամնաբնային բարձրության վերականգնում, սուպերկոնտակտների վերացում, պրոթեզավորման համար տարածությունների ստեղծում, հոդի դիսֆունկցիայի բուժում:

3. ատամների պսակների վերականգնում օրթոպեդիկ եղանակով՝ շարժական կամ անշարժ կոնստրուկցիաներով:

Ախտաբանական մաշվածության օրթոպեդիկ բուժումը անհատական է և կախված է մաշվածության աստիճանից:


Առաջին աստիճանի ախտաբանական մաշվածություն - ատամների պսակների 1/3-ի մաշվածություն: Բուժումը կատարվում է մեկ փուլով՝ ատամների պսակների անատոմիական ձևը վերականգնվում է ներդիրների կամ կոնպոզիտային պլոմբանյութերի օգնությամբ:

Երկրորդ աստիճանի ախտաբանական մաշվածություն - ատամների պսակների 1/3- 2/3-ի մաշվածություն: Բուժումը կատարվում է երկու փուլով՝

1 փուլ - օկյուզիոն բարձրության, հոդի և մկանային համակարգի ֆունկցիաների վերականգնում

II փուլ – պրոթեզավորում տարբեր օրթոպեդիկ կոնստրուկցիաներով

Օկյուզիոն բարձրության վերականգնումը կատարվում է միափուլ, օգտագործելով ժամանակավոր շարժական կապաներ (նկ.5.1.5.):



Նկ.5.1.5. ժամանակավոր շարժական կապաներով օկյուզիոն բարձրության վերականգնում:

Եթե քունքստործնոտային հոդում որևէ ախտաբանական փոփոխություն տեղի չի ունենում, ապա 1–2 ամիս անց կատարվում է վերջնական պրոթեզավորում նախապես ընտրված օրթոպեդիկ կոնստրուկցիաներով: Այն դեպքում, եթե հոդում առաջանում են ցավային ախտանիշներ, անհրաժեշտ է օկյուզիոն բարձրությունը իջեցնել և ցավերի վերացումից հետո բերել նորմայի:

Երրորդ աստիճանի ախտաբանական մաշվածություն - ատամների պսակների 2/3 և ավելի մաշվածություն: Բուժումը կատարվում է երկու փուլով:

Օկյուզիոն բարձրության վերականգնում - կատարվում է աստիճանաբար, թեր մակերևույթով օկյուզիոն գլանակների օգտագործմամբ, որոնք ապահովում են ստորին ծնոտի մեղիալ

տեղաշարժը: Յոդագլխիկի տեղաշարժը դեպի առաջ անպայմանորեն պետք է իրականացվի քունքստործնոտային հոդի ռենտգեն հսկողության ներքո: Օկլուզիոն բարձրության վերականգնումից հետո կատարվում է օրթոպեդիկ բուժում: Օրթոպեդիկ կոնստրուկցիաների ընտրությունը կախված է կոնկրետ կլինիկական դեպքից: Ատամնաշարի պահպանված լինելու դեպքում՝ ատամների անատոմիական ձևի վերականգնումը իրականացվում է ամբողջաձույլ գամիկավոր ներդիրների և մետաղկերամիկական պսակների միջոցով: Այս դեպքում, երբ հիվանդության պատճառը բրուքսիզմն է, կամ այլ մկանային պարաֆունկցիաները, կերամիկական շերտի կոտրվածքներից խուսափելու համար ավելի նպատակահարմար է ամբողջաձույլ մետաղական պսակների, կամ մետաղական ծամողական մակերեսով, մետաղկերամիկական պսակների կիրառումը: Եթե ախտաբանական մաշվածությունը զուգակցվում է ատամնաշարի դեֆեկտների հետ, ապա անհրաժեշտ է ընտրել այնպիսի օրթոպեդիկ կոնստրուկցիաներ, որոնք կվերականգնեն թե՛ մաշված ատամները և թե՛ ատամնաշարների դեֆեկտները: Փոքր դեֆեկտների դեպքում նպատակահարմար է ամբողջաձույլ կամրջաձև պրոթեզների կիրառումը, իսկ մեծ կամ ծայրամասային դեֆեկտների դեպքում՝ աղեղնաձև պրոթեզների կիրառումը: Ոչ բավարար քանակությամբ հենակետային ատամների առկայության դեպքում կարող են կիրառվել նաև շարժական թիթեղային պրոթեզներ:

### **Գրականության ցանկ**

1. Аболмасов Н.Г., Аболмасов Н.Н., Бычков В.А., Аль-Хаким А.. Ортопедическая стоматология. Москва,"МЕДпресс-информ" 2005.
2. Копейкин В.Н.. Руководство по ортопедической стоматологии. Издательство "Триада-Х", Москва, 2004.

## 5.2. Թեստեր

### 1. Ատամների կարծր հյուսվածքների ֆիզիոլոգիական մաշվածությունը

- ա) հանդիպում է գրեթե բոլոր մարդկանց մոտ
- բ) առողջ մարդկանց մոտ չի հանդիպում
- գ) մանկական հասակի պարուղիա է
- դ) օրգանիզմի որևէ այլ ախտաբանական պրոցեսի նշան է
- ե) ճիշտ պատասխան չկա

### 2. Ատամների կարծր հյուսվածքների ֆիզիոլոգիական մաշվածությունը դա

- ա) ատամների կարծր հյուսվածքների կորստի դանդաղ ընթացող կոնդինուսացված պրոցես է
- բ) ատամների էնալային ծածկույթի կորստի արագ ընթացող դեկոնդինուսացված պրոցես է, որը չի անցնում դենտինի վրա
- գ) ատամների էնալային ծածկույթի կորստի արագ ընթացող դեկոնդինուսացված պրոցես է, որն անցնում է դենտինի և կակղանի վրա
- դ) ճիշտ պատասխան չկա

### 3. Ատամի կարծր հյուսվածքների ախտաբանական մաշվածության այն ձևը, որի ժամանակ ախտահարվում են ատամների վեստիբուլյար և (կամ) օրալ նակերեսները կոչվում է

- ա) խառը
- բ) ուղղահայաց
- գ) կոնդինուսացված
- դ) չկոնդինուսացված
- ե) հորիզոնական

### 4. Ախտաբանական մաշվածության I աստիճանի դեպքում ատամի կարծր հյուսվածքների ախտահարման խորությունը կազմում է

- ա) մինչև պսակի երկարության 1/3-ը
- բ) պսակի երկարության 1/3-ից մինչև ատամի վզիկը
- գ) պսակի երկարության 1/3-ից մինչև 2/3-ը
- դ) պսակի երկարության 1/3-ից մինչև 1/2-ը

### 5. Ախտաբանական մաշվածության II աստիճանի դեպքում ատամի կարծր հյուսվածքների ախտահարման խորությունը կազմում է

- ա) մինչև պսակի երկարության 1/3-ը
- բ) պսակի երկարության 1/3-ից մինչև ատամի վզիկը
- գ) պսակի երկարության 1/3-ից մինչև 2/3-ը
- դ) պսակի երկարության 1/3-ից մինչև 1/2-ը

**6. Ախտաբանական մաշվածության III աստիճանի դեպքում  
ատամի կարծր հյուսվածքների ախտահարման խորությունը  
կազմում է**

- ա) մինչև պսակի երկարության 1/3-ը
- բ) պսակի երկարության 2/3-ից մինչև ատամի վզիկը
- գ) պսակի երկարության 1/3-ից մինչև 2/3-ը
- դ) պսակի երկարության 1/3-ից մինչև 1/2-ը

**7. Կոստենի համախտանիշը կարող է դրսնորվել որպես  
ախտաբանական մաշվածության հետեւյալ ձևի բարդությունը**

- ա) տարածուն դեկոնպենսացված
- բ) տարածուն կոմպենսացված
- գ) տեղայնացված
- դ) ուղղաձիգ

**Պատասխաններ**

- |       |       |       |
|-------|-------|-------|
| 1 - ա | 4 - ա | 7 - ա |
| 2 - ա | 5 - գ |       |
| 3 - բ | 6 - բ |       |

«Օրթոպեդիկ ստոմատոլոգիա». Վ.Լ. Բակալյանի  
խմբագրությամբ: Զեռնարկը նախատեսված է  
ստոմատոլոգիական ֆակուլտետի ուսանողների՝  
բակալավրների համար: Այն կարող է օգտագործվել նաև  
մագիստրների, ռեզիդենտների և եղիտասարդ բժիշկների  
կողմից: Երևան, ԵՊԲՀ, 2009, 136էջ:

Յրատարակություն xxx

Պատվեր xxx

Տպաքանակ xxx